ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մակրոտնտեսական իրավիճակը 5

Փոխհարաբերությունները ՀՀ պետբյուջեի հետ 13

Արտաքին հատվածը 17

Դրամավարկային քաղաքականություն 21

Ֆինանսական շուկա 30

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը 35

Վճարահաշվարկային հարաբերություններ 40

Մակրոտնտեսական ցուցանիշները 2005 թ. հունվար – սեպտեմբերին 46

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ 60

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Շաբոյան, Վ. Նիկողոսյան
ՀՀ-ում գյուղատնտեսական վարկերի պահանջարկի գնահատման նպատակով Կենտրոնական բանկի կողմից անցկացված հարցման արդյունքների ամփոփում 61

Վիճակագրության վարչություն
ՀՀ ԿԲ կողմից տնային տնտեսություններում, ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպություններում իրականացված հարցումների արդյունքները (2005 թ. օգոստոս) 71

Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչություն
ՀՀ և ԼՂՀ տարածքներում գործող առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային ներդրումների և ներգրավված միջոցների կազմն ու կառուցվածքը ըստ մարզերի (30.06.2005 թ. դրությամբ) 87

Վահրամ Ջանվելյան
Չեխիայի տնտեսական վիճակը և դրամավարկային քաղաքականությունը 128

2005 թվականի իննամիսների մակրոտնտեսական իրավիճակը կարելի է բնութագրել բարձր տնտեսական աճի և ցածր գնաճի դրսևորումներով: Մասնավորապես՝ տնտեսական աճը, գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 1.3 տոկոսային կետով, կազմել է 11.6%, իսկ գնաճը 2004 թվականի դեկտեմբերի նկատմամբ կազմել է -3.6%՝ նախորդ տարվա -1.3%-ի փոխարեն: Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է ՀՆԱ դեֆլյատորի 103.8% մակարդակ, մինչդեռ նախորդ տարի այն զգալի բարձր էր՝ 107.1%:

Բարձր տնտեսական աճի վրա էական ազդեցություն է ունեցել մասնավոր հատվածի սպառման և ներդրումների աճը՝ պայմանավորված նախորդ մի քանի տարիների եկամուտների բարձր աճով, արտաքին ներդրումների և տրանսֆերտների աճով, ինչպես նաև ներդրումային դաշտի շարունակական բարելավմամբ:

Համախառն առաջարկի տեսանկյունից տնտեսական աճին առավելապես նպաստել են շինարարության և արդյունաբերության ճյուղերը: Ընդ որում, եթե շինարարության աճը հիմնականում մասնավոր հատվածի՝ բնակչության և կազմակերպությունների կողմից կատարված ներդրումների արդյունք էր, ապա արդյունաբերության աճին էապես նպաստել է մետաղագործական արդյունաբերության ճյուղում գրանցված բարձր աճը՝ պայմանավորված արտաքին շուկաներում գունավոր մետաղների պահանջարկի աճով:

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2005 թվականի իննամիսների ընթացքում ավելացել է 32.2 տոկոսով՝ պայմանավորված և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալների աճով: Ընթացիկ հաշիվը 2005 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել է 117 մլն ԱՄՆ դոլար՝ 2004 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվելով 33 մլն ԱՄՆ դոլարով: Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 3.7 տոկոս՝ նախորդ տարվա համեմատ բարելավվելով 2.9 տոկոսային կետով:

Մակրոտնտեսական իրավիճակի ձևավորման վրա շարունակել են էական ազդեցություն ունենալ արտաքին գործոնները՝ ֆինանսական զգալի ներհոսքի ձևով, ինչպես նաև տնտեսությունում շարունակվել է դրամայնացման գործընթացը: ՀՀ կենտրոնական բանկը պարբերաբար իրականացրել է արտարժույթի առքի գործառնություններ, որոնք հաճախ զուգորդվել են իրացվելիություն ներքաշող գործիքների կիրառմամբ՝ գնաճային ճնշումներից խուսափելու համար:

2005 թվականի իննամիսների ընթացքում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը ծրագրվածի համեմատ պակաս ընդլայնող էր. առաջին կիսամյակի ընթացքում ունեցել է խնայողական վարքագիծ, իսկ երրորդ եռամսյակում՝ ծրագրի շրջանակներում էր:

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ[1]

2005 թվականի իննամիսների ընթացքում համախառն պահանջարկը ավելացել է 11.6%-ով՝ պայմանավորված ինչպես ներքին պահանջարկի՝ սպառման և ներդրումների, այնպես էլ արտաքին պահանջարկի՝ արտահանման ծավալների աճերով: Եթե ներքին պահանջարկի աճին հիմնականում նպաստել են մասնավոր հատվածի ծախսումները՝ մասնավոր սպառումն ու ներդրումները, ապա արտաքին պահանջարկի աճը պայմանավորված էր տնտեսության մրցունակ ճյուղերի՝ մետաղագործական և սննդի արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների ավելացմամբ:

[1] *«Համախառն պահանջարկ» բաժնում ներկայացված 2005թ. երրորդ եռամսյակի տվյալները ԿԲ գնահատումներն են, կիսամյակային տվյալները՝ փաստացի թվեր:*

Համախառն պահանջարկի տարրերի իրական փոփոխությունները (%)

Ցուցանիշներ	2004 թվականի ինն ամիսները 2003 թվականի ինն ամիսների նկատմամբ (փաստ)	2005 թվականի ինն ամիսները 2004 թվականի ինն ամիսների նկատմամբ (փաստ)	2005 թվականի ինն ամիսները 2004 թվականի ինն ամիսների նկատմամբ (ծրագիր)
Իրական ՀՆԱ	10.3	11.6	8.0
Ներքին պահանջարկ	11.3	10.2	9.0
Սպառում	11.1	7.8	7.3
Պետական	15.0	10.2	18.1
Մասնավոր	10.6	7.5	6.0
Կապիտալ ներդրումներ	12.0	20.6	16.4
Պետական	-31.9	8.4	34.5
Մասնավոր	26.2	22.7	13.2
Ապրանքների և ծառայությունների արտահանում	0.9	8.7	6.1
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-2.0	18.8	6.9

Ըստ ինն ամիսների արդյունքների՝ ներքին պահանջարկն ավելացել է 10.2%-ով՝ 9.0% կանխատեսված ցուցանիշի փոխարեն: Ներքին պահանջարկի աճին մեծապես նպաստել է մասնավոր հատվածի ծախսերի 10.1%-ով ավելացումը: Ընդ որում, արձանագրվել է մասնավոր սպառման 7.5%-ով աճ՝ կանխատեսված 6.0%-ի փոխարեն՝ հիմնականում պայմանավորված վերջին տարիների բարձր տնտեսական աճով, ֆինանսական մեծածավալ ներհոսքով և մասամբ էլ՝ բանկային համակարգի կողմից ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալների աճով: Ինչպես նախորդ երկու տարիներին, հաշվետու ժամանակահատվածում ևս մասնավոր ներդրումների աճը գերազանցել է սպասումները՝ կազմելով 22.7% կանխատեսված 13.2%-ի փոխարեն:

Թերակատարվել են պետական ծախսերի և՛ սպառման, և՛ ներդրումների ցուցանիշները: Պետության կողմից կատարված ընդհանուր ծախսերի փաստացի իրական աճը կազմել է 9.8%, մինչդեռ սպասվում էր աճի 22.9% ցուցանիշ. հիմնական պատճառը առաջին կիսամյակի ընթացքում ծախսերի թերի կատարումն էր՝ արտաքին ֆինանսավորման թերստացմամբ պայմանավորված:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է արտաքին պահանջարկի էական՝ 8.7% իրական աճ: Արտաքին պահանջարկի կամ այլ կերպ՝ արտահանման աճը հիմնականում պայմանավորված էր ոչ թանկարժեք մետաղների արտահանման ծավալների աննախադեպ բարձր՝ 181.6% աճով: Սա, իր հերթին, համաշխարհային շուկայում մետաղների պահանջարկի աճով պայմանավորված՝ մետաղագործական արդյունաբերության ոլորտում արտադրության ծավալների 41.9% աճի արդյունք էր:

Արտահանման ծավալների ավելացմանը մեծապես նպաստել է նաև պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների շուրջ 30.6% աճը. գյուղմթերքների, մասնավորապես մրգի և բանջարեղենի ծավալների աճի արդյունքում նվազել են գյուղմթերք վերամշակող ձեռնարկությունների հումքի գները, որը որոշակիորեն նպաստել է արտասահմանում տեղական արտադրանքի մրցունակության բարձրացմանը:

Զգալի՝ մոտ 19.8%-ով ավելացել են նաև թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների արտահանման ծավալները, իսկ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման աճը եղել է բավականին բարձր՝ 2.8 անգամ: Այն կազմել է արտահանման ընդհանուր ծավալի 34.6%-ը:

Վերջին տարիներին տնտեսությունում ներդրումների աճի միտումը արտահայտվել է նաև ներմուծման կառուցվածքում: Ինն ամիսների ընթացքում արձանագրվել է ներմուծման 29.8% իրական աճ՝ առավելապես պայմանավորված ներդրումային և հանքահումքային ապրանքների ներմուծման ծավալների համապատասխանաբար 47.7% և 33.4% աճով:


ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ

2005 թվականի ինն ամիսների տնտեսական աճը կազմել է 11.6%՝ նախորդ տարվա 10.3%-ի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ առաջանցիկ աճ է գրանցվել արդյունաբերության և շինարարության ճյուղերում, որի արդյունքում այդ ճյուղերի նպաստումը ՀՆԱ իրական աճին ավելացել է:

Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալն աճել է 6.2%-ով՝ նախորդ տարվա 1.6%-ի փոխարեն: Արդյունքում՝ արդյունաբերության նպաստումը տնտեսական աճին կազմել է 1.3 տոկոսային կետ՝ նախորդ տարվա 0.4 տոկոսային կետի փոխարեն:


Շինարարության ծավալների աճը կազմել է 34%՝ նախորդ տարվա 16.3%-ի փոխարեն, իսկ նպաստումը տնտեսական աճին՝ 4.6 տոկոսային կետ՝ նախորդ տարվա 1.8 տոկոսային կետի փոխարեն:

Նախորդ տարվա համեմատ տնտեսական աճին համեմատաբար քիչ է նպաստել գյուղատնտեսության ճյուղը՝ 2.1 տոկոսային կետով (նախորդ տարի՝ 3.7 տոկոսային կետով) և ծառայությունների ճյուղը՝ 3.1 տոկոսային կետով (նախորդ տարի՝ 4.2 տոկոսային կետով):



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: 2005 թվականի ինն ամիսներին արդյունաբերության ճյուղում զգալի փոփոխություններ են արձանագրվել: Մասնավորապես՝ հանքագործական արդյունաբերության ճյուղում դրսևորվել են անկման միտումներ, մինչդեռ աշխուժացել են վերամշակող արդյունաբերության ենթաճյուղերը, մասնավորապես՝ մետաղագործական և քիմիական:

Փոփոխվել է նաև արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը, վերամշակող արդյունաբերության մասնաբաժնի աճը ուղեկցվել է էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ճյուղի մասնաբաժնի նվազմամբ:



Նշված զարգացումների արդյունքում արդյունաբերության արտադրանքի ծավալի աճը տարվա ինն ամիսների ընթացքում կազմել է 6.2%՝ 2004 թվականի 1.6%-ի փոխարեն:

Արդյունաբերության թողարկման ծավալների ավելացումը հիմնականում ապահովել է ճյուղի գերակշիռ՝ 65.2%-ը կազմող վերամշակող արդյունաբերությունը, որի թողարկման ծավալների իրական աճը կազմել է 9.1%:

Զգալի փոփոխություններ են արձանագրվել վերամշակող արդյունաբերության ենթաճյուղերում: Ճյուղում արձանագրված աճը մեծապես պայմանավորվել է մետաղագործական արդյունաբերության թողարկման ծավալների 41.9% աճով, այն դեպքում, երբ նախորդ տարի մետաղագործական արդյունաբե-

րության ոլորտում 8% նվազում էր արձանագրվել: Ընդ որում, մետաղագործության ենթաճյուղի աճը հիմնականում տեղի է ունեցել ցինկի խտանյութի արտադրության մոտ 61.2%-ով և կոնվերտորային (սև) պղնձի արտադրության 16.1%-ով աճի հաշվին: Նշենք, որ գունավոր մետալուրգիայի ոլորտում գրանցված աճի բարձր տեմպերը պայմանավորված են համաշխարհային շուկայում գունավոր մետաղների պահանջարկի աճով և գների բարձրացմամբ, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծել հանրապետության մետաղագործական արդյունաբերության արտադրանքն արտահանելու համար: Մասնավորապես՝ հունվար-օգոստոսին, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, մետաղագործական արդյունաբերության ճյուղի արտահանումն ավելացել է մոտ 181.6%-ով:

Նախորդ տարվա համեմատությամբ դանդաղել են սննդի արդյունաբերության թողարկման ծավալների աճի տեմպերը՝ կազմելով 2.2%՝ նախորդ տարվա 5.5 %-ի փոխարեն: Ճյուղի թողարկման աճի տեմպերի դանդաղումը պայմանավորված է գինու, շամպայնի, ոչ ալկոհոլային խմիչքների և բնական հյութերի արտադրության՝ համապատասխանաբար 3.0%, 10.9%, 11.9% և 11.5% նվազումներով:

Հաշվետու ժամանակահատածում քիմիական արդյունաբերության ճյուղի իրական աճը կազմել է 36.3%, որը մեծապես պայմանավորված էր ավտոդողերի արտադրության 19.3 անգամ ավելացմամբ: Զգալի ավելացել են նաև սինթետիկ կաուչուկի (63.9%), կաուստիկ սոդայի (51.5%), պլաստմասսե արտադրատեսակների (47.7%) արտադրության ծավալները:

Մետաղե հանքաքարերի արդյունահանման (հիմնականում ոսկու) ծավալների 4.4% նվազմամբ պայմանավորված՝ 4.2% անկում է արձանագրվել հանքագործական արդյունաբերությունում (նախորդ տարվա հունվար-սեպտեմբերին՝ 7% աճ):

Էլեկտրաէներգիայի, գազի արտադրության և ջրամատակարարման ոլորտում գրանցված 4.7% իրական աճը էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրության և բաշխման 3.0% աճի, ինչպես նաև գազակերպ վառելիքի արտադրության ու բաշխման ծավալների 36.7% աճի արդյունք էր՝ պայմանավորված հանրապետությունում ընթացող գազիֆիկացման աշխատանքներով:

Արդյունաբերության հիմնական ճյուղերի ցուցանիշները հունվար - սեպտեմբերին, %

Արդյունաբերության ճյուղ	Տեսակարար կշիռ*		Իրական աճ (+) / նվազում (-) **	
	2004	2005	2004	2005
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	19.6	16.7	6.2	4.7
Հանքագործական արդյունաբերություն	16.6	18.1	7.0	-4.2
Վերամշակող արդյունաբերություն, որից՝	63.9	65.2	-0.3	9.1
Սննդի արդյունաբերություն	32.4	28.0	5.5	2.2
Մետաղագործական արդյունաբերություն	11.8	20.0	-8	41.9
Ծխախոտի արտադրություն	2.8	2.6	13.4	18.1
Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	3.2	2.2	15.8	-3.5
Քիմիական արդյունաբերություն	2.5	2.5	75.5	36.3
Մեքենաների և սարքավորումների արտադրություն	1.2	0.9	10.2	-5.7
Ամբողջ արդյունաբերություն	100.0	100.0	1.6	6.2

** Ընթացիկ տարում տեսակարար կշիռը ողջ արդյունաբերության մեջ (արտադրանքի ծավալները հաշվարկված են ընթացիկ գներով):*

*** Տվյալ ճյուղի համախառն արտադրանքի իրական աճ / նվազում (աճը հաշվարկված է համադրելի գներով):*


ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: 2005 թվականի հունվար-սեպտեմբերին գյուղատնտեսության համախառն արտադրանքը ավելացել է 9.0%-ով՝ բարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում բուսաբուծության համախառն արտադրանքի 14.5% աճի հաշվին: Անճնախադեպ բարձր տեմպերով՝ շուրջ 4.5 անգամ ավելացել են պտղի և հատապտղի ծավալները: Բանջարաոճային և բոստանային մշակաբույսերի բերքն ավելացել է համապատասխանաբար 8.8%-ով և 5.6%-ով: Նվազել են հացահատիկային և հատիկաընդավոր մշակաբույսերի ու կարտոֆիլի արտադրության ծավալները՝ համապատասխանաբար 15.9%-ով և 23.4%-ով:

Ի տարբերություն բուսաբուծության ճյուղում գրանցված բարձր աճի, անասնապահության համախառն արտադրանքը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը ընդամենը 1%-ով: Ցածր աճը պայմանավորված է ձվի արտադրության ծավալների 11.6% նվազմամբ: Անասնապահական մյուս հիմնական մթերքների, մասնավորապես՝ իրացված մսի և կաթի ծավալներն ավելացել են համապատասխանաբար 4.9%-ով և 2.6%-ով:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: Վերջին տարիներին բնակչության եկամուտների, արտաքին ֆինանսական ներհոսքի և ներքին խնայողությունների աճի հաշվին շարունակական բարձր տեմպեր են արձանագրվում կապիտալ շինարարության ոլորտում: Հաշվետու ժամանակահատվածում շինարարության ծյուղի աճի տեմպը կազմել է 34%:

Շինարարության ծավալների կառուցվածքում շարունակում են գերակշռել կազմակերպությունների և բնակչության միջոցները. դրանք կազմել են ընդհանուր շինարարության համապատասխանաբար 21.9%-ը և 67.6%-ը: Կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալներն ավելացել են շուրջ 55.5%-ով, իսկ բնակչության միջոցներով իրականացված շինարարության ծավալները՝ 34%-ով:


Կապիտալ շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը հունվար-սեպտեմբերին



1. Պետական բյուջե, 2. Արտաքին վարկ, 3. Մարդասիրական օգնություն, 4. Կազմակերպություններ, 5. Բնակչության միջոցներ

Եթե շինարարական աշխատանքները դիտարկենք ըստ տնտեսական գործունեության տեսակի, ապա կարելի է արձանագրել, որ ավելացել են արդյունաբերության ոլորտի կապիտալ շինարարության ծավալները և կազմել ընդհանուր շինարարական աշխատանքների 10.7%-ը՝ նախորդ տարվա 7.9%-ի փոխարեն: Արդյունաբերության ոլորտում շինարարության աճը հիմնականում պայմանավորվել է մշակող և հանքագործական արդյունաբերության ճյուղերում կատարված շինարարական աշխատանքների՝ համապատասխանաբար 90.3%-ով և շուրջ 14.9 անգամ ավելացմամբ: Սրան զուգահեռ, 17.2%-ով նվազել են գյուղատնտեսությունում իրականացված շինարարության ծավալները՝ կազմելով ընդհանուրի 1.7%-ը՝ նախորդ տարվա 2.8%-ի փոխարեն:

Իրականացված շինարարությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների հունվար-սեպտեմբերին



1. Գյուղատնտեսություն, 2. Արդյունաբերություն, 3. Ծառայություններ

Շինարարության ծավալները 24.5 անգամ ավելացել են առողջապահության և սոցիալական ծառայությունների ոլորտում, 82.7%-ով՝ տրանսպորտի և կապի, շուրջ 2.5 անգամ՝ ֆինանսական գործունեության և 40.5%-ով՝ անշարժ գույքի հետ կապված գործառնությունների և վարձակալման ոլորտներում:

Շինարարության ծավալների նվազում է արձանագրվել հյուրանոցների և ռեստորանների ոլորտում՝ 25.7%-ով, կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցման ոլորտում՝ շուրջ 21.9%-ով և պետական կառավարման ոլորտում՝ 54.8%-ով:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 17.1%-ով:

Ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել տրանսպորտի և կապի ծառայությունները՝ համապատասխանաբար 31.0% և 25.0%: Համեմատաբար մեծ մասնաբաժին ունեն նաև ֆինանսական (-8.4%), առողջապահության (6.7%) և կրթության (7.1%) ծառայությունները:

30%-ով ավելացել է բեռնափոխադրումների կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռը կազմող ավտոտրանսպորտով իրականացված բեռնափոխադրումների ծավալը, մինչդեռ նախորդ տարվա հունվար-սեպտեմբերին այն նվազել էր 21.1%-ով՝ պայմանավորված ներհանրապետական փոխադրումների 28.3% նվազմամբ: Ավտոտրանսպորտով բեռնափոխադրումները կազմել են ընդհանուր բեռնափոխադրումների 52.6%-ը (նախորդ տարի՝ 46.5%-ը): Զգալի՝ 17.3%-ով ավելացել են նաև խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների և ընդամենը 1.5%-ով՝ օդային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալները: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումները նվազել են 3.5%-ով: Արդյունքում՝ ընդհանուր բեռնափոխադրումների ծավալը, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, աճել է 15.1%:

Հունվար-օգոստոսի դրությամբ արձանագրվել է կապի ծառայությունների հասույթի 21.2%-ով աճ (նախորդ տարի՝ 20%): Այս տարի հասույթի էական՝ 1.5 անգամ աճ է արձանագրվել բջջային հեռահաղորդակցության ոլորտում՝ պայմանավորված Հայաստանի բջջային հեռախոսակապի շուկա նոր օպերատորի մուտք գործելու հանգամանքով:

ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ծրագրվել էր 2005 թվականին ապահովել տարեվերջի դրությամբ մինչև 3% և միջին տարեկան 2.2% գնաճ: Այդ ցուցանիշների ձևավորման համար առաջին ինն ամիսների վերջի դրությամբ պետք է գրանցվեր մինչև 0.4 % գնանկում, իսկ միջին կուտակային գնաճի ցուցանիշը նախորդ տարվա ինն ամիսների նկատմամբ պետք է կազմեր -4.3%: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության փաստացի տվյալների՝ 2005 թվականի սեպտեմբերին, 2004 թվականի դեկտեմբերի համեմատ, գնաճը կազմել է -3.6 %, իսկ միջին գնաճը՝ 0.9 %:

Գնաճի փաստացի ցուցանիշը գերազանցել է ծրագրով նախատեսվածը միայն հունվար-փետրվարին՝ պայմանավորված տարեվերջին պահանջարկի բարձր աճի և որոշ պարենային ապրանքների՝ հիմնականում գյուղմթերքների առաջարկի սեզոնային սահմանափակության պայմաններում ձևավորված բարձր գնաճով: Սակայն արդեն մարտից սկսած՝ գնաճի փաստացի ցուցանիշները զիջել են ծրագրային ցուցանիշներին: Գնաճի նման վարքագիծը հիմնականում պայմանավորվել է գյուղատնտեսական մթերքների ծավալների աննախադեպ բարձր աճով, որի արդյունքում որոշ գյուղմթերքների գների խիստ նվազում է գրանցվել:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված 3.6% գնանկումը հիմնականում պարենային ապրանքների գների 6.5% նվազման արդյունք էր (նախորդ տարի այդ ապրանքախմբում գնանկումը կազմել էր ընդամենը 2%): Պարենային ապրանքների կառուցվածքում խորը գնանկում է արձանագրվել «միրգ», «բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբերում՝ համապատասխանաբար 31.4% և 13.9%: Վերջինս հիմնականում պայմանավորվել է մրգի և բանջարեղենի համախառն արտադրանքի աննախադեպ բարձր աճով: Հաշվետու ժամանակահատվածում պտղի և հատապտղի համախառն բերքը ավելացել է շուրջ 14 անգամ, իսկ բանջարանոցային մշակաբույսերինը՝ 23.3 %-ով:

Ոչ պարենային ապրանքախմբում արձանագրվել է 1.2 տոկոս գնաճ. պատճառը «անձնական օգտագործման մեքենաներ և բենզին», «վառելիք» և «գրենական պիտույքներ» ապրանքախմբերում ներառված ապրանքների գների համապատասխանաբար 14.7%, 6.6% և 4.5% աճն էր: Բացի վերը նշված ապրանքներից, ոչ պարենային ապրանքախմբի ցանկում գրեթե բոլոր ապրանքների գները նվազել են՝ պայմանավորված դրամի արժևորման պարագայում ներմուծված ապրանքների գների նվազմամբ:

Համախառն պահանջարկի աճին զուգընթաց, բարձրացել են նաև ծառայությունների սակագները: Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ ծառայությունների սակագները բարձրացել են 1.8%-ով՝ հիմնականում պայմանավորված կենցաղային բնույթի ծառայությունների, տրանսպորտի և հանրային սննդի սակագների համապատասխանաբար 2.5%, 3.1% և 2.2% աճով:

2005 թ. (2004թ. դեկտ. = 100)	ՍԳԻ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	Ոչ պարենային ապրանքներ	Բնակչությանը մատուցված ծառայություններ
Հունվար	105.4	107.7	100.8	100.2
Փետրվար	104.7	107.0	100.5	98.9
Մարտ	103.7	105.5	100.1	99.5
Ապրիլ	102.8	104.2	99.8	99.6
Մայիս	102.9	104.2	99.5	100.6
Հունիս	101.4	102.0	99.4	101.0
Հուլիս	96.9	95.4	99.2	100.8
Օգոստոս	95.5	93.3	99.6	101.2
Սեպտեմբեր	96.4	94.1	101.2	101.8


ՀՆԱ ԴԵՖԼՅԱՏՈՐ ԵՎ ՑՅՈՒՂԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2005 թվականի ինն ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արձանագրվել է ՀՆԱ դեֆլյատորի 103.8% մակարդակ: Վերջինիս ձևավորմանը տնտեսության հիմնական ճյուղերը մասնակցել են հետևյալ համամասնությամբ՝ շինարարության գները՝ 3.6 տոկոսային կետով, արդյունաբերության գները՝ 2.1 տոկոսային կետով, իսկ գյուղմթերքների գները՝ -2.5 տոկոսային կետով:

Աննախադեպ բարձր աճ է արձանագրվել շինարարության գներում. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, շինարարության գները բարձրացել են 18.4%-ով: Դա տեղի է ունեցել հիմնականում շինմոնտաժային աշխատանքների գների աճի հաշվին՝ պայմանավորված շինարարության ոլորտում աշխատավարձի մոտ 21% բարձրացմամբ:

Նախորդ տարվանից սկսած՝ արդյունաբերական արտադրանքի գները շարունակում են դրսևորել աճի բարձր տեմպեր: Հաշվետու ժամանակահատվածում արդյունաբերական արտադրանքի գների 10.5%-ով աճը հիմնականում պայմանավորվել է միջազգային շուկայում գունավոր մետաղների գների աճի հետևանքով գունավոր մետաղագործության ոլորտում գների 44% աճով:

2004-2005 թթ. ինն ամիսների ընթացքում գների փոփոխություններն ըստ տնտեսության առանձին ճյուղերի (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)



Հաշվետու ժամանակահատվածում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գյուղատնտեսական մթերքի իրացման գները նվազել են 12.7%՝ նախորդ տարվա 10.3% հավելաճի փոխարեն: Ճյուղի արտադրանքի իրացման գների նվազումը ամբողջապես պայմանավորվել է բարենպաստ

բնակլիմայական պայմանների արդյունքում ստացված գյուղմթերքների առատ բերքով, որը հանգեցրել է բուսաբուծական մթերքների իրացման գների 32.2% նվազման: Հատկապես զգալի է եղել մրգի իրացման մեծածախ գների նվազումը՝ պայմանավորված պտղի համախառն բերքի բարձր աճով: Ի տարբերություն բուսաբուծական մթերքների իրացման գների անկման, 5.6%-ով բարձրացել են անասնապահական մթերքների մեծածախ գները՝ հիմնականում մսի իրացման գների աճի հաշվին:

Սակագների զգալի՝ 11.7% անկում է արձանագրվել բեռնափոխադրումների ոլորտում՝ պայմանավորված երկաթուղային, օդային և խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների նվազմամբ՝ համապատասխանաբար 16%-ով, 13.7%-ով և 12.6%-ով: 8.5%-ով բարձրացել են ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները՝ հիմնականում պայմանավորված բենզինի և դիզելային վառելիքի գների թանկացմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ

2005 թվականի հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, գործազրկության մակարդակը նվազել է 1.4 տոկոսային կետով և կազմել 8.3%: Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը հանրապետությունում կազմել է 1209 հազար մարդ, որոնցից 100.5 հազարը աշխատանք չի ունեցել և գրանցվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ զբաղվածության պետական ծառայության գործակալությունում՝ որպես գործազուրկ:

Տնտեսությունում շարունակում է ավելանալ աշխատանքի արտադրողականությունը. հաշվետու ժամանակահատվածում գործազրկության մակարդակի 1.4 տոկոսային կետով նվազման և 11.6% տնտեսական աճի պայմաններում արտադրողականության աճը կազմել է 10.2%:


Արտադրողականության աճին զուգընթաց, տնտեսությունում շարունակաբար ավելացել է աշխատուժի նկատմամբ պահանջարկը, որի արդյունքում տնտեսությունում արձանագրվել է աշխատավարձի աճ[2]. իրական աշխատավարձը ավելացել է 22.3%-ով, անվանականը՝ 24.2%-ով: Իրական աշխատավարձի աճը, գերազանցելով արտադրողականության աճի ցուցանիշը՝ որոշակի ազդեցություն է ունեցել գների աճի ուղղությամբ: Սակայն, գնագոյացման տեսանկյունից, գների վրա իրական աշխատավարձի ազդեցությանը զուգահեռ, դրամի արժևորումը որոշակի զսպող ազդեցություն է ունեցել: Մասնավորապես՝ դրամի արժևորման պարագայում նվազել են ինչպես ներմուծված հումքի, այնպես էլ պատրաստի արտադրանքի գները, որը, բնականաբար, զսպել է տնտեսությունում գների աճը:

[2] *Անվանական և իրական աշխատավարձի աճը հունվար-օգոստոսի դրությամբ է:*


Փոխհարաբերությունները ՀՀ պետական բյուջեի հետ [1]

2005 թվականի երրորդ եռամսյակում պահպանվել են բյուջեի եկամուտների՝ տարվա առաջին կեսին արձանագրված գերակատարման դրական միտումները: Ծախսային քաղաքականությունը, ի տարբերություն առաջին կիսամյակում ծախսերի տնտեսումների, ընթացել է ծախսերի ծրագրված ցուցանիշների ապահովմամբ: Արդյունքում՝ ինն ամիսներին բյուջեի եկամուտների և դրամաշնորհների գերակատարումը կազմել է 10.4 մլրդ դրամ, իսկ ծախսերի թերակատարումը՝ մոտ 10.0[2] մլրդ դրամ:

Ընդհանուր առմամբ, ամբողջական պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը ինն ամիսների արդյունքում ունեցել է ընդլայնող ազդեցություն, որը, սակայն, հաշվարկված ցուցանիշին համապատասխան ծրագրված 2.2 ընդլայնող[3] ազդակի փոխարեն կազմել է 1.2 ընդլայնող: Ընդ որում, եկամուտների ազդակն ունեցել է 0.4 զսպող, իսկ ծախսերինը՝ 1.6 ընդլայնող ազդեցություն:



Տարվա ինն ամիսների արդյունքում ձևավորված ՀՀ պետական բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են տարեկան ծրագրի 75.3 տոկոսը, իսկ հարկային եկամուտները (ներառյալ պետական տուրքը)՝ 72.2 տոկոսը:



[1] *Հաշվետվությունում օգտագործվել են ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005թ. հունվար-սեպտեմբերին» տեղեկագրի հարկաբյուջետային հատվածի ցուցանիշները, իսկ ինն ամիսների ծրագրի համար հիմք են ընդունվել 2005 թվականի ՀՀ պետբյուջեի եռամսյակային համամասնությունների ցուցանիշները:*


[2] *Ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի շրջանակներում ստացված միջոցները:*

[3] *Ազդակների հաշվարկման մեթոդները ներկայացված են ՀՀ ԿԲ 2000 թ. ԴՔԾ-ի հավելված 3-ում: Ազդակների ծրագրային ցուցանիշների հաշվարկը կատարվել է 2005 թվականի ՀՀ պետբյուջեի եռամսյակային համամասնությունների հիման վրա:*

ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել են 22.2 տոկոսով, ընդ որում՝ հարկերն ու տուրքերը՝ 18.4 տոկոսով: Չնայած ինն ամիսների ընթացքում արձանագրվել է պետական բյուջեի հարկային եկամուտների մոտ 3.3 մլրդ դրամի գերակատարում, իսկ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 15.5 տոկոս, այնուամենայնիվ, ելնելով նախորդ տարիների միտումներից, ռիսկային է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի՝ տարեկան բյուջեով նախատեսված 14.7 տոկոս մակարդակի ապահովումը:

Հարկային եկամուտների կառուցվածքում փոփոխվել են անուղղակի և ուղղակի հարկերի համամասնությունները. 2.5 տոկոսային կետով նվազել է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը և կազմել ընդհանուր հարկային եկամուտների 61.5 տոկոսը: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա ինն ամիսների համեմատ անուղղակի հարկերն ավելացել են 13.7 տոկոսով:

4.3 տոկոսային կետով ավելացել է ուղղակի հարկերի տեսակարար կշիռը և կազմել ընդհանուր հարկային եկամուտների 23.4 տոկոսը: Վերջիններիս մեջ շահութահարկը և եկամտահարկը ավելացել են համապատասխանաբար 57.5 և 25.1 տոկոսով: Այլ հարկային եկամուտներն աճել են 9.6 տոկոսով, իսկ պետական տուրքի գծով մուտքերը մնացել են անփոփոխ:




Պետբյուջեի եկամուտների կատարման բարձր մակարդակի ապահովմանը զուգընթաց, նախորդ տարվա համեմատ այս տարվա ինն ամիսների ընթացքում մեղմվել է հարկերի հավաքագրման՝ նախորդ տարիներին դրսևորված անհամաչափությունը: Երրորդ եռամսյակի ամիսների վերջին երեք օրերին հավաքագրված հարկերի միջին ցուցանիշը կազմել է ընդհանուր հարկերի 22.1 տոկոսը՝ առաջին եռամսյակի 19.6 տոկոսի և երկրորդ եռամսյակի 16 տոկոսի փոխարեն: Նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել է՝ առաջին եռամսյակում՝ 25 տոկոս, երկրորդ եռամսյակում՝ 26 տոկոս, իսկ երրորդ եռամսյակում՝ 23 տոկոս:


Չնայած պետական բյուջեի ծախսերի (առանց արտաքին ֆինանսավորման նպատակային ծրագրերով ստացված միջոցների) 10.0 մլրդ դրամ թերակատարմանը (հիմնականում ներքին ֆինանսավորման կապիտալ ծախսերի թերակատարումներով պայմանավորված), նախորդ տարվա ինն ամիսների համեմատ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը ավելացել է 1.5 տոկոսային կետով և կազմել 18.1 տոկոս: Միաժամանակ, նախորդ տարվա ինն ամիսների համեմատ ծախսերն ավելացել են 26.6 տոկոսով. ընթացիկ ծախսերը՝ 15.6 տոկոսով, զուտ վարկավորումը՝ 26.5 տոկոսով, իսկ ներքին ֆինանսավորման կապիտալ ծախսերը՝ 140.3 տոկոսով: Ընդ որում, ընդհանուր ծախսերում ավելացել է ներքին ֆինանսավորման ծախսերի տեսակարար կշիռը: Այն կազմել է ընդամենը ծախսերի 16.1 տոկոսը, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում նշված ցուցանիշը 8.5 տոկոս էր: Ընթացիկ ծախսերի մեջ պետական սպառումը և տրանսֆերտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են համապատասխանաբար 19.9 տոկոսով և 18.6 տոկոսով, իսկ սուբսիդիաները և տոկոսավճարները նվազել են համապատասխանաբար 13.5 տոկոսով և 9.5 տոկոսով:

Պետբյուջեի եկամուտների և ծախսերի նշված մակարդակների պայմաններում պակասուրդը կազմել է 3.0 մլրդ դրամ՝ ծրագրված 23.3 մլրդ դրամի փոխարեն (առանց նպատակային ծրագրերով իրականացվող ֆինանսավորման): Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներն ունեն հետևյալ կառուցվածքը. ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է 7.8 մլրդ դրամ, իսկ արտաքին աղբյուրների հաշվին՝ 4.8 մլրդ դրամ: Ներքին աղբյուրների կառուցվածքում գանձապետական պարտատոմսերից զուտ ֆինանսավորումը կազմել է 14.0 մլրդ դրամ (ներառյալ լրացուցիչ տեղաբաշխված 11 մլրդ դրամ արժեթղթերը, որոնցից ստացված մուտքերը ավանդադրվել են ՀՀ ԿԲ-ում)՝ ծրագրված 4.9 մլրդ դրամի

փոխարեն, իսկ ՀՀ 2005 թվականի տարեսկզբի ազատ մնացորդից ֆինանսավորումը՝ 6.3 մլրդ դրամ՝ ծրագրված 24.9 մլրդ դրամի փոխարեն: Ներքին աղբյուրների գծով առաջացած շեղումների պատճառը ինն ամիսների ընթացքում Գանձապետարանի միասնական և ժամկետային ավանդների հաշիվներում Կառավարության միջոցների կուտակումներն են՝ պայմանավորված եկամուտների և ծախսերի՝ վերը նշված միտումներով, ինչպես նաև պետական պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներով և դրանց տեղաբաշխումից ստացված մուտքերի ավանդադրմամբ: Վերջինս իրականացվել է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության համաձայնության արդյունքում և նպաստել է բանկային համակարգի իրացվելիության կառավարմանը:



Հատկանշական է, որ պետական պարտատոմսերի ժամկետայնության երկարացումը զուգորդվել է եկամտաբերության նվազմամբ: Այսպես, սեպտեմբերին ՊԿՊ միջին եկամտաբերությունը կազմել է 3.4 տոկոս՝ նախորդ տարվա սեպտեմբերի 10.3 տոկոսի փոխարեն, իսկ պետական միջինժամկետ արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 5.1 տոկոս՝ նախորդ տարվա 5.6 տոկոսի փոխարեն:



Առավել ուշագրավ է այն փաստը, որ դեռևս առկա են լուրջ հիմնախնդիրներ բյուջեի ցուցանիշների ծրագրման գործընթացում, քանի որ վերջին տարիներին արձանագրվել են ծրագրված մակարդակներց փաստացի կատարողականների էական շեղումներ: Տարվա առաջին երեք եռամսյակների արդյունքում ևս բյուջեի ծախսերի, ինչպես նաև պակասուրդի և դրա ֆինանսավորման աղբյուրների փաստացի ցուցանիշները էապես շեղվել են ՀՀ կառավարության կողմից սահմանված՝ ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի եռամսյակային համամասնություններից: Բացի այդ, դրամավարկային քաղաքականության կարճաժամկետ ծրագրերում ամփոփված՝ բյուջեի ամսական ծրագրերի ցուցանիշներով ստացվող եռամսյակային ծրագրերը շեղվում են ՀՀ 2005 թ. պետական բյուջեի եռամսյակային համամասնություններից: Դա, բնականաբար, խնդիրներ է առաջացնում դրամավարկային քաղաքականության ծրագրերի իրականացման գործընթացում: Ուստի դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ծրագրերի

համադրման և ճշգրտման համար էլ ավելի է կարևորվում բյուջեի եռամսյակային ճշգրտված համամասնությունների հրապարակումը:

2005 թվականի հարկաբյուջետային հատվածի տարեկան ծրագրի ապահովման պարագայում հարկաբյուջետային քաղաքականությունը տարվա արդյունքում կունենա ընդլայնող ազդեցություն՝ նպաստելով գնաճի ծրագրային ցուցանիշի ապահովմանը:

2005 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում արտաքին տնտեսական գործառնությունների ծավալները զգալի ավելացել են՝ էական ազդեցություն ունենալով երկրում տնտեսական գործընթացների զարգացման վրա:

2005 թ. դրամավարկային քաղաքականության ծրագրով առաջին երեք եռամսյակների ընթացքում նախատեսվում էր վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի բոլոր հոդվածների աճ, որի դեպքում ընթացիկ հաշվի պակասուրդը պետք է խորանար 20 մլն ԱՄՆ դոլարով, իսկ ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը պետք է կազմեր 5.5 տոկոս: Ապրանքների արտահանման աճը կազմելու էր 12 տոկոս, ներմուծման աճը՝ 13 տոկոս: Ակնկալվում էր նաև ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի խորացում 28 տոկոսով: Եկամուտներ հոդվածը ավելանալու էր մոտ երկու անգամ, մինչդեռ ընթացիկ տրանսֆերտների աճը կազմելու էր 13 տոկոս:

2005 թվականի հունվար-սեպտեմբերին[1] ապրանքների արտահանումը (կրեդիտ) կազմել է 705 մլն ԱՄՆ դոլար. նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 191 մլն ԱՄՆ դոլարով (37 տոկոս): Ապրանքների արտահանման աճին զգալիորեն նպաստել են երկու խոշոր՝ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերը, որոնց արտահանման ծավալները համապատասխանաբար ավելացել են 153 մլն ԱՄՆ դոլարով (մոտ 2.8 անգամ) և 41 մլն ԱՄՆ դոլարով (20 տոկոս): «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախումբը, որը նույնպես մեծ տեսակարար կշիռ ունի արտահանման մեջ, ավելացել է 15 մլն ԱՄՆ դոլարով (31 տոկոս):

Ապրանքների ներմուծումը 2005 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել է 1110 մլն ԱՄՆ դոլար. նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 257 մլն ԱՄՆ դոլարով (30 տոկոսով): Ավելացել են բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալները, բացառությամբ «Բուսական ծագման արտադրանք» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերի: Հատկապես զգալի է եղել ներմուծման կառուցվածքում ամենախոշոր՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբերում ներառված ապրանքների ներմուծման ծավալների ավելացումը՝ համապատասխանաբար 54 մլն ԱՄՆ դոլարով (25 տոկոս) և 51 մլն ԱՄՆ դոլարով (33 տոկոս): Բացի այդ, աճել են նաև «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի ցուցանիշները՝ համապատասխանաբար 44 մլն ԱՄՆ դոլարով (69 տոկոս), 46 մլն ԱՄՆ դոլարով (48 տոկոս), 26 մլն ԱՄՆ դոլարով (34 տոկոս):


Եթե ապրանքների արտահանման ու ներմուծման դինամիկան դիտարկենք առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի, ապա արտահանման աճը կկազմի 49 տոկոս, իսկ ներմուծման աճը՝ 31 տոկոս:

Արտահանման ու ներմուծման բարձր աճի պայմաններում ապրանքային հաշվեկշիռը խորացել է 66 մլն ԱՄՆ դոլարով (19 տոկոս)՝ կազմելով 406 մլն ԱՄՆ դոլար: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2005 թվականի ինն ամիսների ընթացքում կազմել է 1815 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 1366 մլն ԱՄՆ դոլար): Արտաքին ապրանքաշրջանառությունը ավելացել է 32 տոկոսով:

Նույն ժամանակահատվածում ընթացիկ հաշվի հաջորդ հոդվածի՝ «Ծառայությունների» բացասական հաշվեկշիռը կազմել է 31 մլն ԱՄՆ դոլար. նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կրճատվել է 21 մլն ԱՄՆ դոլարով: «Ծառայությունների» հաշվեկշռի էական բարելավումը պայմանավորված էր ծառայությունների արտահանման աճով՝ 48 մլն ԱՄՆ դոլարով, իսկ ներմուծման աճը կազմել է 27

[1] *Վճարային հաշվեկշռի 2005թ. երրորդ եռամսյակի տվյալները ՀՀ ԿԲ գնահատումներն են:*

մլն ԱՄՆ դոլար: Ծառայությունների արտահանման ավելացմանը էապես նպաստել է զբոսաշրջության, համակարգչային ու տեղեկատվական, կապի ծառայությունների արտահանման աճը: «Եկամուտներ» հոդվածը նշված ժամանակահատվածում ավելացել է շուրջ 3.4 անգամ՝ կապված սեզոնային աշխատողների աշխատուժի դիմաց ստացվող եկամուտների աճով և ներդրումների դիմաց վճարվող եկամուտների նվազմամբ[2]: Ընթացիկ տրանսֆերտներն ավելացել են 34 մլն ԱՄՆ դոլարով, այդ թվում՝ մասնավոր տրանսֆերտներն ավելացել են 37 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պաշտոնական տրանսֆերտները նվազել են 3 մլն ԱՄՆ դոլարով:



Ընթացիկ հաշվի հոդվածների՝ վերը նշված դրսևորումների արդյունքում ընթացիկ հաշիվը 2005 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել է 124 մլն ԱՄՆ դոլար՝ 2004 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվելով 26 մլն ԱՄՆ դոլարով: Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 4.0 տոկոս, նախորդ տարվա համեմատ բարելավվելով 2.6 տոկոսային կետով:

2005 թվականի առաջին երեք եռամսյակների ընթացքում 151 մլն ԱՄՆ դոլարով ավելացել են կապիտալ ու ֆինանսական հաշվով ստացվող միջոցները և կազմել 289 մլն ԱՄՆ դոլար: Կապիտալ տրանսֆերտները կազմել են 27 մլն ԱՄՆ դոլար՝ ֆինանսավորելով ընթացիկ հաշվի 22 տոկոսը: Օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմել են 155 մլն ԱՄՆ դոլար՝ գերազանցելով ընթացիկ հաշվի պակասուրդը 1.2 անգամ: Ուղղակի ներդրումները 2005 թվականի առաջին ինն ամիսներին (առանց Ռուսաստանի հետ կնքված «գույք՝ պարտքի դիմաց» գործարքի), նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, աճել են 33 մլն ԱՄՆ դոլարով: Պետական հատվածի զուտ վարկերը կազմել են 32 մլն ԱՄՆ դոլար՝ ֆինանսավորելով ընթացիկ հաշվի 26 տոկոսը:

Նույն ժամանակահատվածում առևտրային բանկերի ԶԱԱ-ն նվազել է 36 մլն ԱՄՆ դոլարով. արտաքին ակտիվները կրճատվել են 23 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պարտավորություններն ավելացել են 13 մլն ԱՄՆ դոլարով: Առևտրային բանկերի ԶԱԱ նվազումը հիմնականում պայմանավորվել է ՀՀ ռեզիդենտներին տրված արտարժութային վարկերի աճով և բանկերի թղթակցային հաշիվների կրճատմամբ:

Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[3] 2005 թվականի երրորդ եռամսյակի վերջին կազմել են 32.5 մլն դոլար (նախորդ եռամսյակի վերջին՝ 36.3 մլն դոլար): Երրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերը արտաքին աշխարհից ներգրավել են 1.8 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 5.6 մլն դոլարի հիմնական գումարի մարումներ և վճարել 0.5 մլն դոլարի տոկոսագումարներ:

2005 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատությամբ, հիմնականում պահպանվել է վարկատու երկրների կազմը, փոփոխվել են միայն այդ երկրների տեսակարար կշիռները ամ-


[2] 2004 թվականի նույն ժամանակահատվածի ներդրումների դիմաց վճարվող եկամուտների մեծ ծավալները պայմանավորված էին օտարերկրյա մասնակցությամբ մի քանի խոշոր ձեռնարկությունների կողմից շահույթի վերաներդրմամբ:

[3] Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:


բողջի մեջ: Մասնավորապես, ՀՀ առևտրային բանկերի հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Ռուսաստանը, որի տեսակարար կշիռն ամբողջի մեջ կազմել է 21.6 % (նախորդ եռամսյակում՝ 19.3 %), Մեծ Բրիտանիան՝ 18.6 % (նախորդ եռամսյակում՝ 17.1 %), ԱՄՆ՝ 18.1 % (նախորդ եռամսյակում՝ 13.7 %), Շվեյցարիան՝ 15.4% (նախորդ եռամսյակում՝ 13.8 %), Ֆրանսիան՝ 9.2 % (նախորդ եռամսյակում՝ 8.3 %) և Հունաստանը ՝ 5.1 % (նախորդ եռամսյակում՝ 4.5 %):

Հաշվետու եռամսյակի ընթացքում նոր ներգրավված վարկերը հիմնականում տեղաբաշխվել են արդյունաբերության, առևտրի և գյուղատնտեսության հատվածներում: Արդյունքում՝ արդյունաբերության հատվածում տեղաբաշխված միջոցները կազմել են 10.6 մլն դոլար, առևտրի հատվածում՝ 7.6 մլն դոլար, էներգետիկայի հատվածում՝ 5 մլն դոլար, գյուղատնտեսության հատվածում՝ 5 մլն դոլար, ֆինանսական հատվածում՝ 1.7 մլն դոլար:

Ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի համեմատ աճել է և կազմել 7.1 % (2005թ. 2-րդ եռամսյակում՝ 6.5%), որոնց մոտ 71%-ը լողացող (LIBOR) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 4.1 տարի է: Եռամսյակի ընթացքում կտրուկ նվազել են կարճաժամկետ վարկերը, ինչը կազմել է ամբողջ վարկերի 0.3 % -ը՝ նախորդ եռամսյակի 15.5 %-ի փոխարեն:



Ֆինանսական միջոցների զգալի ներհոսքը շարունակվել է նաև 2005 թվականի երրորդ եռամսյակում: Դրանց հիմնական աղբյուրներն են եղել մասնավոր տրանսֆերտները, գործոնային եկամուտներն ու զբոսաշրջությունը: Միևնույն ժամանակ, միջազգային շուկաներում ամրապնդվել են ԱՄՆ դոլարի փոխարժեքի դիրքերը, որը ազդեցություն է ունեցել ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի վրա՝ արժեզրկման ուղղությամբ:




[4] *2003 թվականից ներառվում են նաև վարկային կազմակերպությունների տվյալները:*

Արդյունքում՝ 2005 թվականի իննն ամիսների ընթացքում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար անվանական միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 459.47 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արժեքավորվելով 12.1 տոկոսով: Ժամանակաշրջանի վերջի դրությամբ փոխարժեքը կազմել է 444.21 դրամ՝ նախորդ տարվա վերջի դրությամբ արժեքավորվելով 12.6 տոկոսով:

Կենտրոնական բանկի ՋԱՒ-ն երեք եռամսյակների ընթացքում ավելացել է 160 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված արտաքին ակտիվների 141 մլն ԱՄՆ դոլար աճով և արտաքին պարտավորությունների 19 մլն ԱՄՆ դոլար կրճատմամբ: Արտաքին ակտիվների աճը հիմնականում պայմանավորվել է Կենտրոնական բանկի կողմից միջբանկային շուկայից 92.1 մլն ԱՄՆ դոլար արտարժույթի գնմամբ, ինչպես նաև բանկերի՝ արտարժույթով պարտադիր պահուստավորման միջոցների 45.6 մլն ԱՄՆ դոլարով համալրմամբ:

2005 թվականի հունվար-սեպտեմբերին ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքն արժեքավորվել է 9.3%-ով: Իրական փոխարժեքի վրա արժեքավորման ուղղությամբ զգալի ազդեցություն է ունեցել անվանական փոխարժեքի արժեքավորումը: Հայաստանի գնաճի ազդեցությունը կազմել է 0.9 տոկոսային կետ, փոխարժեքինը՝ 18.6 տոկոսային կետ (երկուսն էլ արժեքավորման ուղղությամբ): Գործընկեր երկրների գնաճի ազդեցությունը կազմել է 6.6 տոկոսային կետ, փոխարժեքինը՝ 2.0 տոկոսային կետ (երկուսն էլ արժեզրկման ուղղությամբ)[5]:

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը
(աճը նշանակում է արժեքավորում)



1999-2003 թթ. կշիռներով

[5] *Իրական արդյունավետ փոխարժեքի հաշվարկն իրականացված է միջին երկրաչափական մեթոդով, այդ պատճառով հաշվարկում ընդգրկված ցուցանիշների տոկոսային փոփոխությունների գումարը հավասար չէ իրական փոխարժեքի փոփոխությանը:*

Դրամավարկային քաղաքականության երրորդ եռամսյակի ծրագիրը և հիմնական խնդիրները

2005 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով ձևավորված մակրոտնտեսական և դրամավարկային միջավայրը բնութագրվել է դրամի փոխարժեքի շարունակական արժեքավորման և այդ պայմաններում դրամի պահանջարկի կտրուկ աճի՝ դրամավարկային քաղաքականության տարեկան ծրագրով նախանշված ռիսկի դրսևորմամբ: Ստեղծված իրավիճակում, հաշվի առնելով դրամավարկային ցուցանիշների ծրագրային զգալի շեղումները և այն, որ արդյունքում դրանք չեն հանգեցրել գնաճային էական ճնշումների (կիսամյակային 1.4% գնաճ՝ ծրագրված 4%-ի փոխարեն), ԿԲ-ն տարվա երկրորդ կեսից վերանայել է դրամավարկային ցուցանիշների ծրագրային մակարդակները՝ առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն իրականացնելու նկատառումով: Ըստ վերանայված ծրագրի, որի հիմնական ուղղությունների վերաբերյալ երկրորդ կիսամյակի սկզբին հայտարարվել է առևտրային բանկերին, ԿԲ-ն նախատեսում էր տարին ավարտել տարվա վերջի դրությամբ փողի բազայի 41.4% աճով և միջին տարեկան 35.4% աճով՝ սկզբնական ծրագրով նախանշված համապատասխանաբար 8.9%-ի, 13.6%-ի պարագայում: Փողի առաջարկի ընդլայնման նման սցենարի դեպքում երրորդ եռամսյակի ընթացքում փողի բազան պետք է ավելացվեր 14.8%-ով, որի գերակշիռ մասն ակնկալվում էր ապահովել արտարժութային մեծածավալ ներհոսքի հաշվին ԿԲ ՋԱԱ համալրմամբ:

Այս իրավիճակում ԿԲ համար կարևորվում էր ավելցուկ իրացվելիության կրճատման խնդիրը, որի իրագործման նպատակով ԿԲ-ն շարունակելու էր ակտիվորեն կիրառել դրամային ներքաշող գործիքները, այդ թվում՝ Կառավարության հետ համատեղ պետարժեթղթերի լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցների՝ ԿԲ-ում ավանդադրման մեխանիզմը և ԿԲ արժեթղթերի թողարկումը:

Դրամավարկային վերոնշյալ սցենարի ապահովման դեպքում, հաշվի առնելով նաև ամռան ամիսների գնային տատանումների սեզոնայնությունը, երրորդ եռամսյակում ակնկալվում էր 4.3% գնանկում, որն ըստ ամիսների հիմնականում ապահովվելու էր հուլիս-օգոստոսին՝ 4.0%:

Դրամավարկային քաղաքականության զարգացումները

ՓՈՂԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Տարեսկզբից ձևավորված դրամավարկային քաղաքականության միտումներում երրորդ եռամսյակի ընթացքում էական փոփոխություններ չեն արձանագրվել: Հիմնականում շարունակվել են դրամայնացման ակտիվ գործընթացը և փողի պահանջարկի աճի բարձր տեմպերը, ինչն արտահայտվել է փողի զանգվածի դրամային տարրերի՝ շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամով ավանդների՝ նախատեսված աճի տեմպերի զգալի գերազանցմամբ: Արդյունքում՝ անցած ինն ամիսների ընթացքում դրամային զանգվածն աճել է 30.1%-ով, որի կառուցվածքում 24.7%-ով ավելացել է շրջանառությունում կանխիկը և 41.4%-ով՝ դրամային ավանդները, այն դեպքում, երբ ծրագրված էր դրանց՝ համապատասխանաբար 6.2%, 1.9% և 15.8% աճ: Արժույթի փոխարինման էֆեկտի հետևանքով էականորեն դանդաղել են արտարժութային ավանդների աճի տեմպերը. դրամային արտահայտությամբ նախատեսված 16.3%-ի փոխարեն դրանք աճել են 1.8%-ով, որը, անցած ինն ամիսների ընթացքում, նույնիսկ դրամի փոխարժեքի 7%-ով արժեքավորման պարագայում, շուրջ 2 անգամ ցածր է եղել ծրագրված աճի տեմպերից:


Փողի զանգվածի կառուցվածքային տարրերի վերոնշյալ շարժերի արդյունքում այն ավելի քիչ է շեղվել ծրագրված ցուցանիշից՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ 11.1%-ի փոխարեն ավելացել է 16.3%-ով:

Ծրագրային և փաստացի դրամավարկային ցուցանիշների համեմատական աղյուսակ (ըստ 2005թ. ֆինանսական ծրագրի)

աճի տեմպ, %

Ցուցանիշներ	III եռամսյակը նախորդ տարվա IV-ի նկատմամբ		III եռ.՝ նախորդ տարվա նույն ժամ. նկատմամբ	
	Ծրագիր	*Փաստացի*	*Ծրագիր*	*Փաստ.*
Փողի զանգված (M2X, ժամ. վերջ)	11.1	16.3	25.4	31.2
Փողի զանգված (M2X, ժամ. միջին)	28.0	37.2	25.8	34.9
Փողի շրջապտույտի արագ. (միջին)[1]	-	-	-10.2	-14.8
Դրամային զանգված (M2, ժամ. վերջ)	6.2	30.1	22.6	50.3
Դրամային զանգված (M2, ժամ. միջին)	18.7	45.7	11.3	46.5
Դրամի շրջապտույտի արագ. (միջին)[2]	-	-	-5.0	-21.7
Փողի բազա (ժամ. վերջ)	-1.4	31.6	14.0	52.3
Փողի բազա (ժամ. միջին)	14.9	47.3	12.9	28.1
Փողի բազմարկիչ (ժամ. միջին)	9.5	-6.9	11.5	-6.9
Դրամային բազմարկիչ (ժամ. միջին)	5.4	-0.9	6.3	1.8

Փողի պահանջարկի վրա արժույթի փոխարինման երևույթի ազդեցությունն առավել ցայտուն երևում է երրորդ եռամսյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արդյունքների համեմատությունից: 2005թ. երրորդ եռամսյակի ընթացքում դրամային զանգվածն աճել է 15.3%-ով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 2.3%-ով), այդ թվում՝ շրջանառությունում կանխիկը աճել է 16.8%-ով (2004թ. երրորդ եռամսյակում՝ 5%-ով), իսկ դրամային ավանդները՝ 12.7%-ով (2004թ. երրորդ եռամսյակում նվազել են 3.2%-ով): Ընդհակառակը, արտարժութային ավանդներն այս տարվա երրորդ եռամսյակում ավելացել են ընդամենը 2.8%-ով, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում աճը կազմել է 16.4%:




Չնայած տարվա անցած իննամիսներին գրանցվել են և՛ ցպահանջ, և՛ ժամկետային դրամային ավանդների աճի գրեթե նույն տեմպերը՝ համապատասխանաբար 42.2% և 41.0%, սակայն անհամեմատ մեծ է եղել ցպահանջ միջոցների ներգրավման ծավալային աճը՝ 14.3 մլրդ և 5.2 մլրդ դրամ հարաբերակցությամբ: Ընդ որում, այս տարի ևս ներգրավված դրամային ավանդների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմում մասնավոր հատվածից ներգրավված ավանդները:

[1] Փողի շրջապտույտի արագության միջին եռամսյակային աճի տեմպը նախորդ եռամսյակի նկատմամբ չի ներկայացվում՝ ՀՆԱ եռամսյակային խիստ սեզոնայնությամբ պայմանավորված փողի շրջապտույտի արագության նվազման բարձր տեմպերի պատճառով:

[2] Տե՛ս նույնը:


Ի տարբերություն դրամային ավանդների, արտարժութային ավանդներն ավելացել են բացառապես ժամկետային միջոցների աճի հաշվին՝ 18.3% կամ 11.9 մլրդ դրամ, այն դեպքում, երբ ցպահանջ ավանդներն այդ ժամանակահատվածում նվազել են 12.8%-ով կամ 9.6 մլրդ դրամով: Արտարժութային ավանդների շարժերը ևս հիմնականում կրել են մասնավոր հատվածի հոսքերի փոփոխությունների ազդեցությունը:



Նշված շարժերից կարելի է եզրակացնել, որ արժույթի փոխարինումը տեղի է ունեցել առավելապես ցպահանջ ավանդներում, իսկ արտարժույթով ժամկետային ավանդները, որոնք հիմնականում խնայողական բնույթ ունեն, շարունակել են ավելանալ համեմատաբար բարձր տեմպերով:

Այս պայմաններում ոչ ռեզիդենտները ևս ճշգրտել են իրենց ավանդների համամասնությունները, ինչի արդյունքում նրանց արտարժութային ավանդները անցած ինն ամիսների ընթացքում նվազել են 260 մլն դրամով, փոխարենը 1.2 մլրդ դրամով ավելացել են դրամով ավանդները:


Փողի ագրեգատների վերոնշյալ փոփոխություններն անցած ինն ամիսների ընթացքում փոխել են նաև փողի զանգվածի կառուցվածքային համամասնությունները. դրամայնացման ակտիվ գործընթացի արդյունքում էականորեն նվազել է տնտեսության դոլարայնացման աստիճանը, ինչն արտահայտվել է փողի զանգվածում արտարժութային ավանդների տեսակարար կշռի նվազմամբ՝ տարեսկզբի 49%-ից սեպտեմբերի վերջին հասնելով 42.8%-ի: Դրան հակառակ, փողի զանգվածում ավելացել են շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամային ավանդների տեսակարար կշիռները. տարեսկզբին կազմել են համապատասխանաբար 34.6% և 16.4%՝ սեպտեմբերի վերջին՝ 37.1% և 20.1%:



Փողի և դրամի շրջապտույտի արագությունները երրորդ եռամսյակում ևս պահպանել են նախորդ տարիների եռամսյակային սեզոնայնությունը և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծրագրված նվազողական վարքագիծը: Այսպես, 2005թ. երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, փողի շրջապտույտի արագության ցուցանիշը նվազել է 14.8%-ով, իսկ դրամի շրջապտույտի արագությունը՝ 21.7%-ով: Նվազման տեմպերը զգալի գերազանցել են ծրագրային ցուցանիշները՝ պայմանավորված տնտեսական աճի համեմատ փողի ագրեգատների առաջանցիկ աճի տեմպերով (դրամային զանգվածի բարձր աճի տեմպերի արդյունքում առավել մեծ չափերի է հասել դրամի շրջապտույտի արագության աճը):

ՓՈՂԻ ԱՌԱՋԱՐԿ

Ըստ առաջարկի տարրերի, փողի զանգվածի աճին նպաստող գործոններով պայմանավորված՝ այս տարի կրկին փոխվել են բանկային համակարգի ՁԱԱ-ի և ՁՆԱ-ի ազդեցության համամասնությունները: Այսինքն՝ եթե նախորդ տարի փողի զանգվածը ընդլայնվել էր հիմնականում ներքին վարկավորման ծավալների ավելացման հաշվին, ապա այս տարի դրան առավել մեծ չափով նպաստել է բանկային համակարգի (բացառապես ԿԲ) արտաքին պահուստների համալրումը: Արտարժութային մեծածավալ ներհոսքի պարագայում դրամի կտրուկ արժևորումը մեղմելոււ, ինչպես նաև տնտեսության դրամայնացման գործընթացն ապահովելու նպատակով ԿԲ-ն արտարժութային ավելցուկը չեզոքացրել է շուկայում առքի գործառնություններ իրականացնելու միջոցով: Արդյունքում՝ սեպտեմբերին բանկային համակարգի ՁԱԱ-ն, նախորդ տարվա վերջի համեմատ, աճել է 27.2%-ով (2004թ.՝ 2.5% նվազում): Դա տեղի է ունեցել բացառապես ՀՀ ԿԲ ՁԱԱ աճի հաշվին (ըստ գործոնների մեկնաբանությունը՝ «Փողի բազա» ենթաբաժնում), այն դեպքում, երբ առևտրային բանկերի ՁԱԱ-ն նախորդ տարվա վերջի համեմատ այս տարվա սեպտեմբերին նվազել է 65.9%-ով՝ 2004-ի 19.6% աճի փոխարեն: Միտումների նման փոփոխությունն ակնհայտ վկայում է, որ բանկերը, նախորդ տարիներին միջոցները հանրապետությունից դուրս ներդնելու փոխարեն, սկսել են տեղաբաշխել ՀՀ տնտեսությունում:



Այդ է վկայում նաև տնտեսության վարկավորման ցուցանիշի՝ աճողական վարքագիծը (վարկավորման կառուցվածքում դեռևս մեծ տեսակարար կշիռ են կազմում արտարժութային վարկերը): Տնտեսության վարկավորման ցուցանիշն անցած ինն ամիսների ընթացքում աճել է 17.4%-ով (նախորդ տարի՝ 27.8%-ով): Չնայած նախորդ տարվա համեմատ վարկավորման աճի տեմպերը դանդաղել են, սակայն, պայմանավորված արժույթի փոխարինման էֆեկտով, արագացել են դրամային վարկերի աճի տեմպերը՝ 46.6%՝ նախորդ տարվա 27.7%-ի փոխարեն, և դանդաղել են արտարժութային վարկերի աճի տեմպերը՝ 8.3%՝ նախորդ տարվա 27.5%-ի փոխարեն: Պահպանվել են տնային տնտեսությունների վարկավորման աճի բարձր տեմպերը՝ շուրջ 30% (նախորդ տարվա 43%-ի պարագայում), ինչը վկայում է սպառողական վարկերի տրամադրման ակտիվ գործընթացի մասին:

Այս տարվա ինն ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արձանագրվել են բանկերի կողմից ոչ ռեզիդենտների վարկավորման աճի բավականին բարձր տեմպեր՝ 63.5%


(որպես կանոն, ամբողջությամբ արտարժութային վարկերի աճի հաշվին), որը մոտ 2 անգամ գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 33.9%:

Բանկային համակարգի հանդեպ Կառավարության պարտավորությունների ցուցանիշն անցած ինն ամիսների ընթացքում նվազել է 11.2%-ով, որի վրա ևս մեծ ազդեցություն են ունեցել ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների փոփոխությունները (դրանց մանրամասն նկարագրությունը՝ «Փողի բազա» ենթաբաժնում): Դա հիմնականում պայմանավորվել է տարեսկզբից իրականացված ավելցուկային հարկաբյուջետային քաղաքականությամբ, այսինքն՝ բյուջետային ծախսերի զգալի թերակատարում և հարկերի ծրագրի գերակատարում: Միևնույն ժամանակ, առևտրային բանկերի հանդեպ Կառավարության պարտավորություններն ավելացել են՝ դրամային ավելցուկի կրճատման նպատակով բանկերի կողմից պետպարտատոմսերի լրացուցիչ թողարկումների ծեռքբերման արդյունքում:

Տարվա ընթացքում արձանագրվել է նաև բանկային համակարգի զուտ այլ ակտիվների նվազում՝ նախորդ տարվա վերջի համեմատությամբ՝ սեպտեմբերին 72.3%-ով, որի շուրջ կեսը ԿԲ արժեթղթերի՝ այդ ցուցանիշում հաշվառման արդյունք է, իսկ մյուս մասը պայմանավորվել է առևտրային բանկերի կողմից ստացված շահույթով ու կանոնադրական կապիտալի համալրմամբ:

ՓՈՂԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Տարվա ինն ամիսների համար ծրագրվել էր փողի և դրամային բազմարկիչների համապատասխանաբար 9.5% և 5.4% աճ, մինչդեռ փաստացի արդյունքներով արձանագրվել են զգալի շեղումներ՝ պայմանավորված փողի ագրեգատների կառուցվածքային փոփոխություններով և պարտադիր պահուստավորման նոր մեխանիզմի կիրառմամբ: Դրամային բազմարկիչը նախորդ տարվա վերջի համեմատ այս տարվա սեպտեմբերին աճել է 0.9%-ով, իսկ փողի բազմարկիչը՝ նվազել 8.6%-ով, որոնք զգալիորեն զիջել են նախատեսված աճի տեմպերը: Այստեղ գերակշիռ ազդեցություն է ունեցել տարվա կեսից պարտադիր պահուստավորման մեխանիզմում կատարված փոփոխությունը. ներգրավված արտարժութային միջոցների դիմաց պահուստավորումն արտարժույթով իրականացնելու հետևանքով ազատված դրամային մեծածավալ ավելցուկը զգալիորեն զսպել է բազմարկիչների աճը: Ինչ վերաբերում է փողի բազմարկչի նվազմանը, ապա դա, բացի դրամային ավելցուկի աճից, կրել է արտարժութային ավելցուկի աճի և արտարժութային ավանդների՝ նախատեսվածից ավելի դանդաղ աճի ազդեցությունը:




ՓՈՂԻ ԲԱԶԱ


Ինչպես արդեն նշվել է, հաշվի առնելով առաջին կիսամյակի ընթացքում դրամի բարձր պահանջարկի դրսևորումները և երկրորդ կիսամյակում ևս այդ միտումների պահպանման ակնկալիքները՝ ԿԲ-ն վերանայել է մինչև տարեվերջ դրամավարկային ցուցանիշների ծրագրված մակարդակները:

Ընդհանուր առմամբ, ԿԲ-ն իր գործառնական նպատակի՝ փողի բազայի կարգավորման տեսանկյունից, առանձնացրել է 2005-ին բնորոշ մի շարք խնդիրներ: Մասնավորապես, արժույթի փոխարինման երևույթն ու ֆինանսական մեծածավալ ներհոսքը հանգեցրել են դրամի նկատմամբ մեծ պահանջարկի դրսևորման: Քանի որ արժույթի փոխարինման երևույթով պայմանավորված փողի պահանջարկի աճը չի պարունակում գնաճային ճնշումներ, ապա ֆինանսական ներհոսքի պայմաններում երբեմն դրսևորվող փոխարժեքի տատանումները հարթելու համար Կենտրոնական բանկը փողի պահանջարկին համահունչ

փողի առաջարկի աճն ապահովել է հիմնականում արտարժույթի գնման գործառնությունների միջոցով: Փողի բազայի ցուցանիշը, բնականաբար, գերազանցել է տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանը, որը հաշվարկվել էր առանց բազայի վրա արժույթի փոխարինման գործոնի ազդեցության:




Փողի բազան սեպտեմբերին, նախորդ տարվա վերջի համեմատ, ավելացել է 31.6%-ով, այն դեպքում, երբ 2004-ի նույն ժամանակահատվածում այն նվազել էր 3.7%-ով: Սեպտեմբերի վերջին փողի բազան կազմել է 173.8 մլրդ դրամ, որը, ըստ վերանայված ծրագրի, համընկել է տատանման միջակայքի միջին մակարդակին՝ սկզբնական ծրագրով նախանշված ցուցանիշը գերազանցելով 43.7 մլրդ դրամով: Ճիշտ նույնքան էլ ԿԲ-ն անցած ինն ամիսների ընթացքում արտարժույթի շուկայում իրականացրել է գնման գործառնություններ՝ արդյունքում որոշ չափով մեղմելով նաև արտարժութային մեծածավալ ներհոսքի ազդեցությունը դրամի փոխարժեքի վրա:




Փողի բազայի մեծածավալ ընդլայնումը հիմնականում արտացոլվել է ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի վարքագծում, որը, որպես տարվա առանձնահատկություն, դրսևորել է աճի անհամեմատ բարձր տեմպեր. անցած ինն ամիսների ընթացքում աճը կազմել է 25.3% (2004թ. նույն ժամանակահատվածի 4.8% և 2003-ի՝ 7.1% նվազման փոխարեն), որը առավելապես պայմանավորվել է արժույթի փոխարինման էֆեկտով և արժութային օրենսդրության փոփոխություններով:

Այդուհանդերձ, այս տարի ևս պահպանվել է կանխիկի վարքագծի եռամսյակային սեզոնայնությունը, սակայն բոլոր եռամսյակների փոփոխությունները զգալի գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշները. առաջին եռամսյակում ԿԲ-ից դուրս կանխիկը նվազել է 6.7 մլրդ դրամով (նախորդ տարի՝ 12.5 մլրդ դրամով), երկրորդում աճել է 14.6 մլրդ դրամով (նախորդ տարի՝ 2.7 մլրդ դրամով) երրորդում՝ 18.8 մլրդ դրամով (նախորդ տարի՝ 5.1 մլրդ դրամով):




2005 թվականն առանձնահատուկ է եղել նաև բանկային համակարգի կողմից տնօրինվող ավելցուկ պաշարների բավականին բարձր մակարդակի առկայության տեսանկյունից: Անցած ինն ամիսներին միջին ամսական ավելցուկը կազմել է 12.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4.4 մլրդ դրամի փոխարեն: Ավելցուկի բարձր մակարդակը մասամբ բացատրվում է 2005թ. հունիսի 10-ից պահուստավորման մեխանիզմի փոփոխությամբ, որի հետևանքով փոխվել է Կենտրոնական բանկում առևտրային բանկերի դրամային մնացորդների կառուցվածքն ու նշանակությունը:




2005թ. ինն ամիսների ընթացքում ձևավորված մեծածավալ դրամային ավելցուկի կարգավորման խնդիրը ԿԲ-ն լուծել է արտարժութային ներհոսքի պայմաններում Կենտրոնական բանկին առավել ճկունություն տալու խնդրին զուգահեռ: ԿԲ-ն կիրառել է ինչպես իր գործիքակազմում եղած դրամային ներքաշող գործիքները (հակադարձ ռեպո և ԿԲ արժեթղթերի թողարկում), իրականացրել է արտարժույթի գնման գործառնություններ, այնպես էլ օգտագործել է նոր ներդրված ֆինանսական գործիքը (Կառավարության կողմից պետարժեթղթերի լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցների ավանդադրում ԿԲ-ում և ԿԲ արժեթղթերի թողարկում): Արդյունքում՝ ՀՀ ԿԲ-ն մշտապես բավարար ավելցուկային իրացվելիություն է թողել համակարգում՝ այս ճանապարհով ևս որոշ չափով մեղմելով արտարժույթի շուկայում դրամի արժեքավորման հետևանքով առաջացող տատանումները:

Ըստ առաջարկի գործոնների, փողի բազան անցած ինն ամիսների ընթացքում ընդլայնվել է բացառապես ՀՀ ԿԲ ԶԱԱ համալրման հաշվին, ինչը զուգորդվել է ԿԲ ԶՆԱ նվազմամբ:



ԿԲ ՁԱԱ-ն ավելացել է 77.9 մլրդ դրամով կամ 52.2%-ով՝ հիմնականում արժութային շուկայից 43.5 մլրդ դրամին համարժեք արտարժույթի գնման, ԿԲ-ում Կառավարության սեփականաշնորհման հատուկ հաշվից 14.6 մլրդ դրամին համարժեք արտարժույթի փոխանակման և արտարժույթով պարտադիր պահուստավորման միջոցների 20.3 մլրդ դրամով համալրման հաշվին: Միևնույն ժամանակ, Կառավարության համար փոխարկվել է ստացված 2.0 մլրդ դրամին համարժեք դրամաշնորհը և իրականացվել 6.7 մլրդ դրամին համարժեք արտաքին պարտքի սպասարկում:



Կառուցվածքային բոլոր տարրերի նվազման հաշվին ՀՀ ԿԲ ՁՆԱ-ը նվազել է 36.1 մլրդ դրամով կամ շուրջ 3.1 անգամ: ՊՊ լրացուցիչ թողարկումների հասույթը ԿԲ-ում գործող ժամկետային ավանդային հաշվում կուտակելու արդյունքում Կառավարության զուտ պարտավորությունները նվազել են 11.4 մլրդ դրամով կամ 30.8%-ով:

ՀՀ ԿԲ զուտ այլ ակտիվներն անցած ինն ամիսներին նվազել են 10.0 մլրդ դրամով, որը հիմնականում ձևավորվել է ծրագրային և փաստացի փոխարժեքների տարբերությունից: Այսինքն՝ ԿԲ ՁԱԱ մեծածավալ աճը, որը փողի բազայի փոփոխության մեջ ներառվում է ծրագրով ամրագրված փոխարժեքով, տարվա ընթացքում վերջինիս արժեքավորման պարագայում, ծրագրային և դրանից ցածր փաստացի փոխարժեքի տարբերության պատճառով հաշվեկշռվում է զուտ այլ ակտիվներում՝ նվազեցնելով այդ ցուցանիշը:

ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունների ցուցանիշն անցած ժամանակահատվածում նվազել է 1.2 մլրդ դրամով կամ 10.7%-ով: ԿԲ նախաձեռնությամբ այդ ժամանակահատվածում կնքվել են ՊՊ պորտֆելի ողջ ծավալով՝ շուրջ 6.0 մլրդ դրամ, հակադարձ ռեպո համաձայնագրեր, որոնք պարբերաբար վերակնքվել են:

Բանկերն այս տարի բավականին ակտիվ նախաձեռնություն են ցուցաբերել մշտական հնարավորության ավանդային գործիքից օգտվելու հարցում, որի միջոցով ըստ էության լուծել են կարճաժամկետ (1 - 2 շաբաթ) բնույթի դրամային ավելցուկի տեղաբաշխման խնդիրը:


Մինչև ԿԲ արժեթղթերի թողարկումը ակտիվորեն կիրառվել է ՊՊ լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցները ԿԲ-ում ավանդադնելու մեխանիզմը, որի միջոցով տարվա անցած ամիսների ընթացքում ներքաշվել է 12.0 մլրդ դրամի իրացվելիություն:

Հունիսի 10-ից ԿԲ-ն առաջին անգամ թողարկել է սեփական արժեթղթերը՝ մինչև 1 տարի մարման ժամկետով, որոնց տեղաբաշխման արդյունքում հունիս-սեպտեմբերին ներքաշվել է 13.5 մլրդ դրամի իրացվելիություն:

Ամփոփելով նշենք, որ վերջին տարիներին դրսևորված մակրոտնտեսական և դրամավարկային միտումներն ակնհայտ վկայում են փողի պահանջարկի կայունության խախտման մասին: Այսինքն՝ այն հիմնականում ենթարկվել է արտաքին գործոնների և դրա արդյունքում՝ առաջարկի շոկերի ազդեցությանը, որի պարագայում էապես դժվարացել է ՀՀ ԿԲ կողմից փողի պահանջարկի կանխատեսման ու դրան համապատասխան՝ փողի առաջարկի կառավարման գործընթացը: Ելնելով այս փաստարկներից՝ ԿԲ-ն տարվա երկրորդ կեսից ակտիվ քննարկումներ է սկսել և նախապատրաստական միջոցառումներ իրականացրել դրամավարկային քաղաքականության «Գնաճի նպատակադրում» ռազմավարությանն անցնելու ուղղությամբ:


Ընդհանուր առմամբ, վերջին մեկուկես տարում դրամավարկային պայմանների ինդեքսիվրա զգալիորեն ազդել են արտաքին ցնցումները: Մասնավորապես՝ 2005 թվականի առաջին կիսամյակի ընթացքում դրամավարկային պայմանների ինդեքսը դրսևորել է աճողական վարքագիծ, որը, ըստ այդ ցուցանիշի հաշվարկման տրամաբանության, վկայում է իրականացված դրամավարկային քաղաքականության զսպողական բնույթի մասին՝ պայմանավորված իրական արդյունավետ փոխարժեքի արժեքավորմամբ: Սակայն իրականում ՀՀ ԿԲ -ն արդեն իսկ առաջին կիսամյակում ծրագրվածից ավելի ընդլայնել էր փողի բազան, որն էլ, երրորդ եռամսյակից սկսած, փոխարժեքի համեմատաբար կայուն վարքագծի և տոկոսադրույքների նվազման արդյունքում իր ազդեցությունն է թողել դրամավարկային պայմանների ինդեքսի նվազման վրա՝ արտահայտելով ընդլայնողական դրամավարկային քաղաքականության ուղղվածությունը:

Դրամավարկային պայմանների ինդեքսի վարքագիծը ՀՀ տնտեսությունում



Փողի առաջարկի՝ նախատեսվածից ավելի ընդլայնումը առավել ակնառու երևում է դրամավարկային կանոնների[2] հաշվարկից: Այսպես, անցած երեք եռամսյակների, հատկապես երրորդի ընթացքում փողի բազայի փաստացի ցուցանիշն էականորեն գերազանցել է կանոնով հաշվարկված մակարդակը, որի ազդեցության հիմնական գործոնները ներկայացվել են «Փողի բազա» բաժնում: Այսինքն, ըստ կանոնի հաշվարկի տրամաբանության, դրամավարկային քաղաքականության առավել ընդլայնողական բնույթը հիմնավորվում է անվանական ՀՆԱ աճի տեմպի (15.4%) համեմատ փողի բազայի 12-ամսյա աճի (52.3%) առաջանցիկ տեմպերով:


Փաստացի և կանոնով հաշվարկված փողի բազաների վարքագիծը




Դրամավարկային պայմանների ինդեքսի հայեցակարգը հրապարակված է 2001 թվականի 2-րդ եռամսյակի «ԿԲ բանբերում»:

[2] Դրամավարկային կանոնների հաշվարկման մեթոդաբանությունը հրապարակված է ՀՀ 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրում, առանձին հավելվածով:

Երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ ֆինանսական շուկայում գրանցվել է տոկոսադրույքների ընդհանուր մակարդակի նվազում: Եռամսյակի ընթացքում դրամային ավանդների տոկոսադրույքները նախորդ եռամսյակի վերջի համեմատ նվազել են 2.62 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել 6.00%, իսկ դոլարային ավանդների տոկոսադրույքները գրեթե մնացել են անփոփոխ. կազմել են 7.00%: ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների միջին եռամսյակային տարբերությունը կազմել է 0.03 տոկոսային կետ՝ նախորդ եռամսյակի 0.52-ի փոխարեն:




Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքները նույնպես նվազել են: ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքները նվազել են 0.16 տոկոսային կետով (կազմել են 19.00%), իսկ ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույքները նվազել են 0.58 տոկոսային կետով (կազմել են 17.00%): ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների միջին եռամսյակային տարբերությունը կազմել է 1 տոկոսային կետ: ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով վարկերի ու ավանդների տոկոսադրույքների միջին եռամսյակային տարբերությունները կազմել են համապատասխանաբար 9.6 և 10.6 տոկոսային կետ:




2005թ. երրորդ եռամսյակի ընթացքում պետական պարտատոմսերի շուկայում տոկոսադրույքների միջին մակարդակը նվազել է:

ՊՊ առաջնային շուկայում պարտատոմսերի նկատմամբ ձևավորված պահանջարկը բավականին ավելացել է և կազմել թողարկման ծավալի 238.37%-ը՝ նախորդ եռամսյակի 170.43%-ի փոխարեն: Դրանով պայմանավորված՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատությամբ նվազել է 0.74 տոկոսային կետով՝ կազմելով 3.81%, միջնաժամկետ մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 0.23 տոկոսային կետով՝ կազմելով 5.16%, միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 0.12 տոկոսային կետով՝ կազմելով 5.94%, իսկ երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 0.31 տոկոսային կետով՝ կազմելով 7.75%:



2005թ. երրորդ եռամսյակի ընթացքում տեղի է ունեցել պետական կարճաժամկետ պարտատոմսերի 7 թողարկում՝ 4.5 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, պետական միջնաժամկետ մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի 2 թողարկում՝ 3.2 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, պետական միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի 1 թողարկում՝ 1.0 մլրդ դրամ ծավալով և պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի 1 թողարկում՝ 1.5 մլրդ դրամ ծավալով: ՀՀ ՖԷՆ կողմից իրականացվել է 1.4 մլրդ դրամի պետական պարտատոմսերի հետգնում՝ 3.50% եկամտաբերությամբ:




Արդյունքում՝ սեպտեմբերի 30-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական (գանձապետական) պարտատոմսերի ընդհանուր ծավալը նախորդ ժամանակահատվածի (30/06/2005թ.) համեմատ աճել է 292.5 մլն դրամով և կազմել 64621.497 մլն դրամ (անվանական արժեքով):

ՊՊ սեփականատերերի կառուցվածքում մոտ 370 մլն դրամով նվազել են ռեզիդենտ ոչ բանկ ներդրողների (այդ թվում՝ ոչ բանկ դիլերների) կողմից պետական արժեթղթերում կատարված ներդրումների ծավալները: Վերջիններիս պատկանող պարտոտոմսերի տեսակարար կշիռը եռամսյակի վերջում կազմել է 6.36% կամ 4110.839 մլն դրամ: Պետական պարտատոմսերում ոչ ռեզիդենտների ներդրումների ծավալները մնացել են անփոփոխ՝ կազմել են 0.13 մլն դրամ:

Ռեզիդենտ բանկերի (այդ թվում նաև ՀՀ ԿԲ) ներդրումների ծավալները նվազել են 63.52 մլն դրամով՝ կազմելով 55380.349 մլն դրամ կամ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ամբողջ ծավալի 85.7%-ը:


ՀՀ ՖԷՆ կողմից հետգնված պարտատոմսերի ծավալը եռամսյակի վերջին կազմել է 5130.179 մլն դրամ կամ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ամբողջ ծավալի 7.94%-ը:




Երրորդ եռամսյակի ընթացքում միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործարքների ծավալները նախորդ եռամսյակի համեմատ նվազել են 8.630 մլրդ դրամով և կազմել 24.307 մլրդ դրամ: Գործարքների միջին ժամկետայնությունը կազմել է 12 օր: Միջբանկային ռեպո շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 1.742 մլրդ դրամ: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 0.07 տոկոսային կետով և կազմել 3.06 %:

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները նախորդ եռամսյակի համեմատությամբ աճել են 140 մլն դրամով՝ կազմելով 21.55 մլրդ դրամ: Միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 1 մլրդ 660 մլն դրամ:

ՊՊ եկամտաբերության կորի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկամտաբերությունները նվազել են կորի գրեթե ողջ երկայնքով՝ միջինը 0.67 տոկոսային կետով: Ընդ որում, եկամտաբերության էական նվազում է արձանագրվել մինչև 2 տարի մարման ժամկետով արժեթղթերում: Արդյունքում՝ եկամտաբերության կորի թեքվածության փոփոխությունը նշանակալի է՝ 78% (0.04-ից՝ 0.07), ինչը վկայում է, որ կարճ ժամկետայնությամբ պարտատոմսերի բարձր պահանջարկով պայմանավորված՝ երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների տարբերությունը մեծացել է:




ՀՀ տնտեսությունում ԱՄՆ դոլարի՝ դրամով փոխարկման գործընթացի ակտիվացման հետևանքով ձևավորված ՀՀ դրամի պահանջարկը բավարարելու նպատակով ՀՀ ԿԲ-ն երրորդ եռամսյակի ընթացքում պարբերաբար հանդես է եկել արտարժույթի առք իրականացնելու առաջարկով՝ գնելով 35.400 մլն ԱՄՆ դոլար՝ 445.72 դրամ միջին կշռված փոխարժեքով: Միաժամանակ, ՀՀ բանկային համակարգում առկա կարճաժամկետ ավելցուկային իրացվելիության կարգավորման նպատակով ԿԲ-ն հանդես է եկել նաև դրամային գործառնություններ իրականացնելու հայտարարությամբ: ՀՀ ԿԲ-ն թողարկվել է 11500 մլն դրամ անվանական արժեքով պարտատոմսեր և իրականացրել 8006 մլն դրամի հակադարձ ռեպո գործառնություններ:



Ելնելով շուկայի միտումներից՝ վերանայվել են երրորդ եռամսյակում (մասնավորապես՝ օգոստոսին) ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները: Ռեպո գործառնության տոկոսադրույքը 3.75–ից իջեցվել է 3%-ի, ավանդինը՝ 1.75–ից 1%-ի, իսկ լոմբարդային վարկի տոկոսադրույքը մնացել է անփոփոխ՝ 16%:


2005 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում շարունակվել է առևտրային բանկերի կողմից Կենտրոնական բանկում ավանդների ներդրման պրակտիկան: ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացվել 23450 մլն դրամի ավանդի պահանջարկ, ընդ որում՝ հուլիսին ներդրվել է 5900 մլն դրամի ավանդ՝ սահմանված 1.75% եկամտաբերությամբ, օգոստոսին՝ 12150 մլն դրամի ավանդ, որից 6350 մլն դրամը՝ 1.75% եկամտաբերությամբ և 5800 մլն դրամը՝ 1% եկամտաբերությամբ, սեպտեմբերին ներդրվել է 5400 մլն դրամի ավանդ՝ 1% եկամտաբերությամբ:

2005թ. երրորդ եռամսյակում ընդհանուր առմամբ դրսևորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկում, ընդ որում՝ եռամսյակի սկզբից մինչև օգոստոսի վերջը այն արժեզրկվել է (441.26 դրամից՝ 478.03 դրամ), այնուհետև արժևորվել մինչև 444.21 դրամ, և եռամսյակի վերջին, նախորդ ժամանակահատվածի վերջի համեմատ, գրանցվել է 0.43% արժեզրկում (վարիացիա՝ 121.55, միջին շեղում՝ 11.03 դրամ, նվազագույն փոխարժեք՝ 435.75 դրամ, առավելագույն՝ 478.03 դրամ):



Եռամսյակի ընթացքում միջբանկային շուկայում առքի ծավալները ըստ ամիսների համապատասխանաբար կազմել են՝ 127.1, 139.4 և 135.8 մլն ԱՄՆ դոլար, իսկ վաճառքինը՝ 132.7, 123.1 և 133.8 մլն ԱՄՆ դոլար [1]: Առքի և վաճառքի ընդհանուր ծավալները կազմել են 402.4 մլն և 389.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ միջին կշռված փոխարժեքները՝ համապատասխանաբար 450.74 դրամ և 452.38 դրամ (գործարքների մոտ 15.6%-ը իրականացվել է միջբանկային շուկայում): Եռամսյակի ընթացքում ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի համախառն ծավալը կազմել է մոտ 792.0 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է մոտ 8.62%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 34.26%-ով:

ՀՀ արտարժութային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները



20.7%-ով ավելացել են նաև եվրո/դրամ գործառնությունների ծավալները: Առքի և վաճառքի ծավալները համապատասխանաբար կազմել են 24.3 և 39.6 մլն եվրո (նախորդ եռամսյակում՝ 16.4 մլն և 36.6 մլն եվրո):

[1] *Արժութային շուկայում իրականացված վաճառքի գործառնություններում ներառված են նաև Կենտրոնական բանկի կողմից իրականացված առքի ծավալները:*

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

30.09.2005 թ. դրությամբ ՀՀ տարածքում առկա բոլոր 21 առևտրային բանկերը գործել են ընդհանուր վերահսկողության դաշտում: Երրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի մասնաճյուղերի քանակն ավելացել է երկուսով և կազմել 252:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2005թ. երրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 11.9%-ով (9.1 մլրդ դրամով) և 30.09.2005թ. դրությամբ կազմել 86 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճը պայմանավորվել է բանկային համակարգի կողմից 4.2 մլրդ դրամ շահույթի ապահովմամբ և երեք բանկի կողմից կանոնադրական հիմնադրամի 5.5 մլրդ դրամ համալրմամբ: Կապիտալի աճը մասամբ չեզոքացվել է եռամսյակի ընթացքում բանկերի կողմից բաշխված 600 մլն դրամ շահաբաժիններով:

Բանկային համակարգի ռիսկով կշռված ակտիվներն ավելացել են 6.2%-ով, իսկ նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալները՝ համապատասխանաբար 12.6% և 14.3%-ով: Ռիսկով կշռված ակտիվների աճի նկատմամբ ընդհանուր և հիմնական կապիտալների առաջանցիկ աճի արդյունքում աճել են բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշները. ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 1.9 տոկոսային կետով, հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 2.3 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել են 33.6% և 31.9%:

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը եռամսյակի ընթացքում ավելացել է 1.1 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել է 20.6%՝ պայմանավորված ակտիվների աճի տեմպի նկատմամբ կապիտալի առաջանցիկ աճի տեմպով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 4.5%-ով (14.2 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 330.7 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 17 բանկերում և նվազում՝ 4 բանկերում:

Եռամսյակի ընթացքում ՀՀ դրամով պարտավորություններն ավելացել են 10.5%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները՝ 2.1%-ով, որի արդյունքում ընդհանուր պարտավորությունների կազմում ՀՀ դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.6 տոկոսային կետով և կազմել 30.5%:

Բանկային համակարգի պարտավորությունների աճին մեծապես նպաստել է իրավաբանական անձանց ավանդների 8.6 մլրդ դրամով ավելացումը, ընդ որում՝ այդ աճը, ի տարբերություն նախորդ եռամսյակի, ապահովվել է իրավաբանական անձանց ժամկետային ավանդների աճի արդյունքում:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ցպահանջ պարտավորություններն ավելացել են 0.7%-ով (1 մլրդ դրամով), իսկ ժամկետային ավանդները՝ 17.7%-ով (16 մլրդ դրամով):


Հատկանշական է, որ և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդների աճը մեծամասամբ ապահովվել է դրամական ավանդների աճի, իսկ ժամկետային ավանդների աճը՝ արտարժութային ավանդների աճի հաշվին:

Եռամսյակի ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդներում (ցպահանջ և ժամկետային միջոցների) արտարժութային միջոցներն ավելացել են 5%-ով (8.6 մլրդ դրամով), իսկ դրամային միջոցները՝ 13.8%-ով (8.5 մլրդ դրամով): Արդյունքում՝ 30.09.2005թ. դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների մեծությունը կազմել է 250.5 մլրդ դրամ, որի 27.8%-ը կազմել են դրամային ավանդները (եռամսյակի սկզբում՝ 26.3%-ը): Ընդ որում, ֆիզիկական անձինք, ի տարբերություն իրավաբանական անձանց, ավելի հակված են խնայողություններ կատարել

արտարժույթով. ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում ՀՀ դրամով տեղաբաշխված միջոցների կշիռը կազմել է ընդամենը 15.6%, որը զիջում է իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում դրամային պարտավորությունների 37.1% տեսակարար կշռին: Նախորդ եռամսյակում վերոնշյալ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 13.7% և 35.5%:

Պարտավորությունների կազմում եռամսյակի ընթացում փոփոխություններ են արձանագրվել նաև բանկերի լորո թղթակցային հաշիվներում՝ դրանք նվազել են 15.8%-ով (988 մլն դրամով), այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններում աճել են 20.8%-ով (1.1 մլրդ դրամով) և այլ պարտավորություններում նվազել 15.6%-ով (3.9 մլրդ դրամ):

Բանկային համակարգի ներգրավված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Եռամսյակի ընթացքում ընդհանուր պարտավորությունների կազմում տեսակարար կշիռների խոշոր փոփոխություններ չեն արձանագրվել: Հիմնականում փոքր-ինչ աճել են ֆիզիկական անձանց համախառն ավանդների և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների տեսակարար կշիռները, ինչին զուգահեռ նվազել են իրավաբանական անձանց ցպահանջ ավանդների և այլ պարտավորությունների տեսակարար կշիռները:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

2005թ. երրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ակտիվներն ավելացել են 5.9%-ով (23.3 մլրդ դրամով) և 30.09.05թ. դրությամբ կազմել 416.6 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 18 բանկում, իսկ նվազում՝ 3 բանկում:


Հաշվետու ժամանակաշրջանում բանկային համակարգի ակտիվների կազմում զգալի ավելացել են պետական արժեթղթերը (զտված ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով պարտավորությունների չափով)՝ 20.9%-ով (10.2 մլրդ դրամով), վարկային ներդրումները՝ 6.2%-ով (9.5 մլրդ դրամով), կանխիկ դրամական միջոցները՝ 18%-ով (4.1 մլրդ դրամով), ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշիվները՝ 11.1%-ով (4 մլրդ դրամով) և բանկերի նկատմամբ պահանջները՝ 12.3%-ով (2.7 մլրդ դրամ):

Զգալի նվազումներ են արձանագրվել ՀՀ ԿԲ նկատմամբ այլ պահանջներում՝ 79.9%-ով (8 մլրդ դրամով) և բանկերի նոստրո թղթակցային հաշիվներում՝ 7.4%-ով (4.3 մլրդ դրամով):

Դիտարկվող ժամանակահատվածում տնտեսությանը տրված վարկերի աճը գերազանցապես պայմանավորվել է ռեզիդենտների վարկավորման աճով:

Տնտեսությանը տրամադրված վարկերի կազմում ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 8.7%-ով (5.2 մլրդ դրամով), իրավաբանական անձանց վարկերը՝ 4.8%-ով (4.2 մլրդ դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 1.4%-ով (70 մլն դրամով): Արդյունքում՝ ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը 30.09.05թ. դրությամբ կազմել են 65.9 մլրդ դրամ, իրավաբանական անձանց վարկերը՝ 92.4 մլրդ դրամ, բանկի հետ կապված անձանց վարկերը՝ 5.1 մլրդ դրամ:


Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկ.
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխ.
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Հաշվետու եռամսյակում վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) ընդհանուր աճել են 8.3%-ով (15.1 մլրդ դրամով) և 30.09.2005թ. դրությամբ կազմել 196.5 մլրդ դրամ: Վարկերի և դեբիտորական պարտքերի աճը մեծամասամբ պայմանավորվել է ռեզիդենտների դրամային վարկերի և դեբիտորական պարտքերի աճով. դրամով վարկային ներդրումներն ավելացել են 21.4%-ով և կազմել 65.5 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 2.7%-ով և կազմել 130.9 մլրդ դրամ, ինչի արդյունքում ընդհանուր վարկային ներդրումներում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռը աճել է 3.6 տոկոսային կետով և կազմել 33.4%:

Բանկային համակարգի վարկային ներդրումները՝ ըստ տնտեսության ճյուղերի (30.09.05թ. դրությամբ)



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Համրային սննդի և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են ընդամենը 0.4%-ով (95 մլն դրամով), իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 9.7%-ով (15 մլրդ դրամով):

Ռեզիդենտների վարկային ներդրումների կառուցվածքում հիմնականում ավելացել են սպառողական վարկերը՝ 9.5%-ով (4 մլրդ դրամով), ֆինանսական հատվածի վարկերը՝ 45.6%-ով (3.8 մլրդ դրամով),

արդյունաբերության վարկավորումը՝ 8.6%-ով (2.9 մլրդ դրամով) (1.3 մլրդ դրամը սննդի արդյունաբերության վարկավորման, իսկ 870 մլն դրամը՝ էներգետիկայի վարկավորման աճի արդյունքում), հիփոթեքային վարկերը՝ 32.3%-ով (2.1 մլրդ դրամով), առևտրի վարկերը՝ 6%-ով (2 մլրդ դրամով) և շինարարության վարկերը՝ 23.9%-ով (1.4 մլրդ դրամով): Վարկավորման ծավալները նվազել են գյուղատնտեսության ոլորտում՝ 14.5%-ով (1.9 մլրդ դրամով) և տրանսպորտի և կապի ճյուղում՝ 9.1%-ով (302 մլն դրամով):

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի դասակարգված ակտիվների տեսակարար կշիռը չի փոփոխվել. կազմել է ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 1.8%-ը: 30.09.2005թ. դրությամբ վարկային պորտֆելն ունեցել է հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են 98.2%, «հսկվող» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.3%, «ոչ ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.2%, «կասկածելի» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.3%:

Բանկային համակարգի ակտիվների կազմում դրամային ակտիվների տեսակարար կշիռը աճել է 2.4 տոկոսային կետով և կազմել 44.7%:

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի $Ն2^1$ ընդհանուր իրացվելիության գործակիցը աճել է 0.4 տոկոսային կետով, իսկ $Ն2^2$ ընթացիկ իրացվելիության գործակիցը՝ 3.7 տոկոսային կետով և 30.09.2005թ. դրությամբ համապատասխանաբար կազմել են 45.7% և 109.9%: Իրացվելիության փաստացի ցուցանիշները շարունակում են զգալի բարձր մնալ $Ն2^1$ նորմատիվի 20% և $Ն2^2$ նորմատիվի 80% սահմանաչափերից:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Բանկային համակարգի 2005թ. առաջին ինն ամիսների զուտ շահույթը կազմել է 9.3 մլրդ դրամ, ինչը գերազանցել է 2004թ. նույն ժամանակաշրջանի զուտ շահույթը 26.2%-ով: Առաջին ինն ամիսների ընթացքում շահույթով են աշխատել 17 բանկեր, որոնց ստացած զուտ շահույթը կազմել է 11 մլրդ դրամ, իսկ վնասով են աշխատել 4 բանկեր, որոնց վնասը կազմել է 1.6 մլրդ դրամ:

01.01.05-30.09.05թթ. ժամանակահատվածում բանկային համակարգը ստացել է 54.3 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 42.8 մլրդ դրամի ծախսեր: Արդյունքում՝ բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 11.5 մլրդ դրամ:

Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 43.3%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 29.6% և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ 27.1%: Տնտեսության վարկերից ստացված եկամուտներին բաժին է ընկել տոկոսային եկամուտների 80.6%-ը: Ոչ տոկոսային եկամուտներում ստացված միջնորդավճարները կազմել են 36.5%-ը, իսկ արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտները՝ 26.8%-ը:

Համախառն ծախսերում դարձյալ մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերին, որը կազմել է 46.2%, իսկ տոկոսային ծախսերին և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին բաժին են ընկել համապատասխանաբար 17.5% և 36.3% տեսակարար կշիռներ: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին, որի տեսակարար կշիռը կազմել է ոչ տոկոսային ծախսերի 34.7%-ը, իսկ տոկոսային ծախսերում զգալի՝ 56.2% տեսակարար կշիռը բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30.09.05թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 10 վարկային կազմակերպություններ՝ երկու մասնաճյուղերով:

Երրորդ եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը աճել է 10.9%-ով և կազմել 7.4 մլրդ դրամ, որը կազմում է բանկային համակարգի ակտիվների ծավալի 1.8%-ը:

Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը երեք ամիսների ընթացքում ավելացել է 16.4%-ով (557 մլն դրամով): Աճել են ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց վարկերը: 30.09.2005թ. դրությամբ իրավաբանական անձանց վարկերը կազմել են 1.6 մլրդ դրամ, ֆիզիկական անձանց վարկերը՝ 2.3 մլրդ դրամ: Լիզինգի ու ֆակտորինգի ընդհանուր ծավալը երրորդ եռամսյակում ավելացել է 11.3%-ով և կազմել 1.3 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալն աճել է 15.7%-ով (839.6 մլրդ դրամով) և կազմել 6.2 մլրդ դրամ: Տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային ներդրումների աճ է արձանագրվել: Վարկային ներդրումների ընդհանուր աճի 33.9%-ը ապահովել է

սննդի արդյունաբերության վարկավորման ածը, իսկ 23.4%-ը՝ սպառողական վարկավորման ածը: Վարկային ներդրումներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել արդյունաբերության ոլորտի վարկավորմանը՝ 28.1%, ընդ որում՝ միայն սննդի արդյունաբերությանը բաժին է ընկել վարկային ներդրումների 16.6%-ը: Սպառողական վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 21.8%, ֆինանսական հատվածինը՝ 16%, գյուղատնտեսությանը՝ 8.5%, առևտրի ոլորտինը՝ 4.3%, իսկ մնացյալ 21.3%-ը՝ այլ ճյուղերինը:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 91.4%:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 15.4%-ով (557.3 մլն դրամով) և եռամսյակի վերջին կազմել 4.2 մլրդ դրամ: Աճի 503 մլն դրամը ապահովվել է կանոնադրական հիմնադրամի համալրման հաշվին:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր պարտավորությունների մեծությունը աճել է 5.4%-ով (163.5 մլն դրամով)՝ մեծամասամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ժամկետային պարտավորությունների աճի արդյունքում, ինչին զուգահեռ նվազել են այլ պարտավորությունները:

2005թ. առաջին ինն ամիսների ընթացքում 5 վարկային կազմակերպություններ աշխատել են վնասով (ընդհանուր վնասը՝ 219 մլն դրամ) և 5 վարկային կազմակերպություններ՝ շահույթով (ընդհանուր շահույթը՝ 225.2 մլն դրամ): Արդյունքում՝ առաջին ինն ամիսների ընթացքում վարկային կազմակերպությունների շահույթը կազմել է 5.9 մլն դրամ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եռամսյակի ընթացքում փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԲ հետևյալ նորմատիվ ակտերում.

- «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում կատարված փոփոխությունների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ («Ա», «Բ» և «Գ») ստացած կազմակերպությունների արժեթղթերը, այդ կազմակերպություններին նկատմամբ այլ պահանջները, ինչպես նաև այդ կազմակերպությունների երաշխավորությամբ պահանջները բանկերի կապիտալի համարժեքության հաշվարկում կընդգրկվեն 20% ռիսկի կշռով՝ «Ա» և «Բ» վարկանիշների դեպքում և 50% ռիսկի կշռով՝ «Գ» վարկանիշի դեպքում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա», «Բ» և «Գ» վարկանիշ ստացած կազմակերպությունների արժեթղթերը, որոնք օգտագործվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնություններում, ներառվելու են նաև բանկի բարձր իրացվելի ակտիվներում: Վերոնշյալ փոփոխությունները կխրախուսեն ծեռնարկությունների թափանցիկությունը և բարձրացնելով վերջիններիս հուսալիությունը՝ կընդլայնեն բանկերի և իրական հատվածի համագործակցությունը:

Համաձայն վերջին փոփոխությունների՝ բանկի հիմնական կապիտալը հաշվարկելիս հիմնական կապիտալի մեծությունից պակասեցվելու են նաև բանկի սեփականությունը հանդիսացող և բանկային գործունեության համար օգտագործվող այն նյութական ակտիվները (հաշվեկշռային արժեքի չափով), որոնց որևէ մասը վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով տրվել է այլ անձանց: Սույն դրույթը համարվում է խստացում և ուժի մեջ կմտնի 2006թ. մայիսից:

- «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում նախատեսվել է դրույթ, համաձայն որի՝ ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրվում է իրենց անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր, որոնց առնվազն 30%-ը պետք է ապահովված լինի առաջնակարգ (AAA (Aaa1)-ից A-(A3)) վարկանիշ ունեցող կազմակերպությունների կողմից: Վարկային կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերի առաջնակարգ ապահովվածության պահանջը անհրաժեշտ է ներդրողների շահերի պաշտպանության և արժեթղթերի շուկայի ցածր զարգացածության պայմաններում այդ տիպի արժեթղթերի նկատմամբ վերահսկողության ձևավորման նպատակով:

2005 թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման աշխատանքները: Մասնավորապես՝ մշակվել են ՀՀ ֆոնդային բորսայի միջոցով արտարժույթի առք ու վաճառքի իրականացման արդյունքում ձևավորված փոխադարձ հաշվարկների ապահովման տարբերակներ և կատարվել է իրավական դաշտի համապատասխան կարգավորում:

Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին»[1] ՀՀ օրենքի՝ մշակվել է վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման գրավոր և բանավոր քննությունների հարցաշարը:


Կատարվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի ներքին համակարգերի զարգացման աշխատանքներ: Այդ թվում՝ մշակվել և տեստավորման է հանձնվել «Կեղծ դրամանիշերի տեղեկատվական համակարգը», որի միջոցով իրականացվում է կեղծ թղթադրամների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և հաշվառումը:

ՀՀ տարածքում իրականացված անկանխիկ վճարումների ծավալը երրորդ եռամսյակի ընթացքում կազմել է 1345477 մլն ՀՀ դրամ (քանակը՝ 522443), այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 737710 մլն ՀՀ դրամ, իսկ քանակը 228347:

Հաշվետու ժամանակահատվածի տնտեսական ակտիվությամբ պայմանավորված՝ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ անկանխիկ վճարումների ծավալն ավելացել է 1.2 անգամ (220298 մլն ՀՀ դրամով): 2004թ. երրորդ եռամսյակի համեմատ անկանխիկ վճարումների ծավալն ավելացել է 1.5 անգամ (464740 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.3 անգամ, որը կազմում է 121251:

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.03 անգամ (26962 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.06 անգամ, որը կազմում է 13961:

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը



Վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 11.5 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 3568: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 0.4 մլրդ ՀՀ դրամով (քանակը՝ 218-ով):

[1] *Ուժի մեջ է մտել 2005թ. հունիսի 28-ից:*

2005թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախածեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 47.7%-ը և քանակի 47.4%-ը: Նախորդ եռամսյակի համեմատ ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախածեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը ավելացել է 1.2 անգամ, իսկ քանակը՝ 1.1 անգամ:

ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 24134 մլն ՀՀ դրամի 561978 գործառնություն: Այդ թվում՝ անկանխիկ եղանակով կատարված վճարումների ծավալը կազմել է մոտ 2085 մլն ՀՀ դրամ: Քարտային գործառնությունների ծավալը 2005թ., նախորդ ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 3669 մլն ՀՀ դրամով, իսկ գործառնությունների քանակը՝ 1.04 անգամ, որը կազմում է 21249 գործառնություն:

Շրջանառության մեջ գտնվող ընդհանուր քարտերի քանակը կազմել է 137697 քարտ, որը եռամսյակի ընթացքում ավելացել է 1.1 անգամ (12764 քարտով):

Էլեկտրոնային վճարումների համակարգ


Երրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը մնացել է անփոփոխ, որը կազմել է 170, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 21 առևտրային բանկեր՝ 98 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք. Մոսկվա):

Հաշվետու ժամանակահատվածում վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների կատարած էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 70.96%-ը, քանակի 95.96%-ը: Նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ էլեկտրոնային վճարումների ծավալն ավելացել է 1.24 անգամ, իսկ քանակը՝ 1.35 անգամ: Առևտրային բանկերի կողմից կատարված էլեկտրոնային վճարումները վերջիններիս ընդհանուր վճարումների ծավալային կառուցվածքում կազմել են 80.36%, իսկ քանակային կառուցվածքում՝ մոտ 99.4%:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 183-ով՝ կազմելով մոտ 3424, իսկ ծավալը՝ 149 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 8202 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, նախորդ տարվա համեմատ, նվազել է մոտ 209 հազ. ՀՀ դրամով և կազմել 2395 հազ. ՀՀ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են նախածեռնած վճարումների քանակի 0.03%-ը և ծավալի 0.2%-ը (68 փոխանցում՝ 1112 մլն ՀՀ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.02%-ը և ծավալի 0.16%-ը (53 փոխանցում՝ 859 մլն ՀՀ դրամ ծավալով):

էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները



Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումներն ըստ հաղորդագրության տեսակների

Հաղորդագրության տեսակը	2001	2002	2003	2004	I եռ. 2005	II եռ. 2005	III եռ. 2005
ՀՏ 100 (Վճարման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	478783	590026	864149	948923	260677	292173	267878
Քանակ	216563	251794	386469	362700	86643	112412	114028
ՀՏ 120 (Բյուջեի մուտքի հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	118767	156358	229550	156463	38942	47399	69515
Քանակ	364041	424288	545427	188449	50365	68443	75615
ՀՏ 122 (Բյուջե բազմակի փոխանցման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	14	1	0	0	0	0	0
Քանակ	27	4	0	0	0	0	0
ՀՏ 123 (Բյուջետային վճարման հավաքական հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	4047	5128	5197	18	1.11	0.55	1.75
Քանակ	112721	127122	106593	94	15	9	19
ՀՏ 131 (Բազմակի փոխանցման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	412	534	360	732	269	361	399
Քանակ	526	324	361	1331	344	478	393
ՀՏ 132 (Հավաքական վճարումների հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	13194	610	27	7	354	4032	5105
Քանակ	749	327	344	6	13	104	148
ՀՏ 202 (Միջբանկային վճարման հանձնարարական)							
Գումար (մլն ՀՀ դրամ)	150299	196161	278981	521051	129412	171394	181999
Քանակ	19430	24506	37262	85220	20751	25977	28920
Ընդամենը							
Գումար (մլն ՀՀ դրամ)	765515	948818	1378264	1627194	429654	515359	524899
Քանակ	714057	828365	1076456	637800	158131	207423	219123

Համախառն թղթային վճարումներ

2005թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, ՀՀ գանձապետարանը: Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջին-ներիս վճարումների ծավալի 10%-ը և քանակի 0.4%-ը: Թղթային եղանակով իրականացված վճարում-ների միջին օրական քանակը կազմել է 130 փոխանցում՝ 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելա-ցել է 35-ով, իսկ ծավալն ավելացել է 480 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 2406 մլն ՀՀ դրամ: Մեկ թղթային փոխանցման միջին ծավալը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է մոտ 1.8 մլն ՀՀ դրամով և կազմել է 18.5 մլն ՀՀ դրամ: 2005թ. երրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 7278 մլն ՀՀ դրամ ծավալով 18 փոխանցում:

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը	
	էլեկտրոնային		թղթային				ԿԲ միջոցով	
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2004								
I եռ..	318649	134340	82982	3639	15731	350	417362	138329
տեսակարար կշիռը վճարումներում (%)	76.35	97.12	19.88	2.63	3.77	0.25	100	100
II եռ.	404239	152858	57732	4054	21003	378	482974	157290
տեսակարար կշիռը վճարումներում (%)	83.70	97.18	11.95	2.58	4.35	0.24	100	100
III եռ.	422186	162106	20967	4186	24092	463	467245	166755
տեսակարար կշիռը վճարումներում (%)	90.35	97.21	4.49	2.51	5.16	0.28	100	100
IV եռ.	482120	188496	50812	4998	22797	504	555729	193998
տեսակարար կշիռը վճարումներում (%)	86.74	97.16	9.14	2.58	4.10	0.26	100	100
Ընդամենը	1627194	637800	212493	16877	83623	1695	1923310	656372
տեսակարար կշիռը վճարումներում (%)	84.59	97.17	11.05	2.57	4.35	0.26	100	100
2005								
I եռ.	429654	158131	150806	5188	20993	471	601453	163790
տեսակարար կշիռը վճարումներում (%)	71.44	96.54	25.07	3.17	3.49	0.29	100	100
II եռ.	515359	207423	123228	6062	74161	901	712748	214386
տեսակարար կշիռը վճարումներում (%)	72.31	96.75	17.29	2.83	10.40	0.42	100	100
III եռ.	524899	219123	153970	8315	60841	909	739710	228347
տեսակարար կշիռը վճարումներում (%)	70.96	95.96	20.81	3.64	8.22	0.40	100	100

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 6 գործակալ և 14 դիլեր բանկեր, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Երրորդ եռամսյակի ընթացքում համակարգի կողմից պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 529 հանձնարարական՝ 22203 մլն ՀՀ դրամ ծավալով, ինչը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 225 մլն ՀՀ դրամով: Նշված ընդհանուր ծավալում առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պարտատոմսերի դիմաց բանկերը կատարել են 10491 մլն ՀՀ դրամի փոխանցում, իսկ արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանը կատարել է 11712 մլն ՀՀ դրամի փոխանցում:

Գանձապետական պահառու համակարգի կողմից արժեթղթերի դիմաց կատարվել է 260 մլն ՀՀ դրամի վճարում, այդ թվում՝ 210 մլն ՀՀ դրամ արժեթղթերի տեղաբաշխման և 50 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի մարման դիմաց:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի՝ երկրորդային շուկայի միջոցով կատարված պետական արժեթղթերով գործառնությունները նվազել են 0.8 անգամ՝ կազմելով 87801 մլն ՀՀ դրամ՝ անվանական արժեքով (այդ թվում՝ առք ու վաճառք՝ 48201 մլն ՀՀ դրամ ծավալով, ազատ առաքում՝ 32839 մլն ՀՀ դրամ ծավալով, գրավադրում՝ 6751 մլն ՀՀ դրամ ծավալով): DVP սկզբունքով կատարված առք ու վաճառքի 380 գործառնությունների դիմաց վճարվել է 38638 մլն ՀՀ դրամ:

Պետական արժեթղթերի երկրորդային շուկայում կատարված գործառնությունների արդյունքում 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ դեպո հաշիվների վրա գրանցված արժեթղթերի ծավալի շարժը նվազել է 1147 մլն ՀՀ դրամով և կազմել է 21553 մլն ՀՀ դրամ՝ անվանական արժեքով, իսկ գործառնությունների քանակը նվազել է 61-ով և կազմել է 243:

Պլաստիկ քարտերով վճարումների համակարգ

2005թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին պլաստիկ քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 17 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 15 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին: Հաշվետու եռամսյակի ընթացքում «ԱրՔա» համակարգին անդամակցող բանկերի քանակն ավելացել է մեկով («Կասկադ բանկ» ՓԲԸ):

ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող քարտերի տեսակները

Բանկի անվանումը	ԱրՔա	MASTER CARD	VISA	Այլ քարտեր
Ամելիք բանկ	+	+		
Արդշինինվեստբանկ	+	+		
Հայներարտբանկ	+	+		
Հայէկոնոմբանկ	+	+		
Զարգացման հայկական բանկ	+	+		
Կոնվերս բանկ	+		+	+
Էյչ-Էս-Բի-Սի բանկ-Հայաստան	+	+	+	+
Հայգյուղփոխբանկ	+		+	
Արցախ բանկ	+			
«ԻԹԲ» Միջազգային առևտրային բանկ	+			
Յունիբանկ	+		+	
Ինեկո բանկ	+	+	+	
Մելլաթ բանկ	+			
Պրոմետեյ բանկ	+			
Կասկադ բանկ	+			
Առէկսիմբանկ			+	
Հայխնայբանկ			+	

Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 10 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 100: Այդ թվում՝ «ԱրՔա» պլաստիկ քարտերի սպասարկումը իրականացվում է 74 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրվել են նաև 74 POS-տերմինալներ և 12 իմպրինտերներ, որոնց ընդհանուր քանակը համապատասխանաբար կազմել է 880 POS- տերմինալ և 74 իմպրինտեր:

Եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.1 անգամ (5710 քարտով) և կազմել 60576, միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակը նույնպես ավելացել է 1.1 անգամ (7054 քարտով), այդ թվում՝ VISA միջազգային քարտային համակարգի քարտերն ավելացել են 1.11 անգամ (6098 քարտով) և կազմել 59645, իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը ավելացել է 1.18 անգամ (748 քարտով)՝ կազմելով 4847:

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով եռամսյակի ընթացքում իրականացվել է 257646 գործառնություն՝ 7170 մլն ՀՀ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է մոտ 1.14 անգամ (921 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.004 անգամ (1105-ով):

VISA միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 10733 մլն ՀՀ դրամ (182629 գործառնություն), իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացվել է 2316 մլն ՀՀ դրամ ծավալով 25191 գործառնություն: VISA համակարգի քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ


ավելացել է 1.2 անգամ (1874 մլն ՀՀ դրամ ծավալով), իսկ MasterCard համակարգի քարտերով կատարված գործառնությունների ծավալը՝ 1.3 անգամ (521 մլն ՀՀ դրամ ծավալով):

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 96512 գործառնություն՝ 3915 մլն ՀՀ դրամ ծավալով, որը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 353 մլն ՀՀ դրամով:

Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող մեկ «ԱրՔա» քարտով շարունակվել է ամսական իրականացվել միջինը մոտ 2 գործառնություն: Մեկ գործառնության միջին ծավալը երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 3 հազար ՀՀ դրամով և կազմել 27 հազար ՀՀ դրամ:

Երրորդ եռամսյակի վերջի դրությամբ մեկ ավտոմատ գանձման մեքենայի կողմից սպասարկվող «ԱրՔա» քարտերի քանակը կազմել է միջինը 881 քարտ:

«ԱրՔա» քարտերի զարգացման դինամիկան



Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով «ԱրՔա» քարտերով կատարված գործարքներ (2005 թ. երրորդ եռամսյակ)

	Գումար (մլն դրամ)	*Քանակ*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	5089.9	195628
POS – տերմինալների միջոցով	2080.4	62018
Իմպրինտերների միջոցով	0.0	0
Ընդամենը	7170.3	257646

Միջազգային փոխանցումների համակարգեր

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը դրամական փոխանցումները արագ իրականացնելու նպատակով անդամակցում են՝ WESTERN UNION, MONEYGRAM, ANELIK, UNISTREAM և այլ համակարգերի: 2005թ. երրորդ եռամսյակի ընթացքում այս համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 79166 մլն ՀՀ դրամ (քանակը՝ 281671), որը 6.6 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.46 անգամ (25071 մլն ՀՀ դրամով): Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 281 հազ. ՀՀ դրամ, որը 2005թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 50 հազ. ՀՀ դրամով:

SWIFT համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումների ծավալը կազմել է 782027 մլն ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 75845 փոխանցում. մեկ փոխանցման միջին ծավալը 10.3 մլն ՀՀ դրամ է: Նախորդ եռամսյակի համեմատ SWIFT -ի միջոցով իրականացված մեկ փոխանցման ծավալը նվազել է 300 հազ. ՀՀ դրամով:

Մակրոտնտեսական ցուցանիշները 2005 թ. հունվար-սեպտեմբերին

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*Հունվար - հուլիս*	*Հունվար - օգոստոս*	*Հունվար-սեպտեմբեր*	*2005թ.հունվար-սեպտեմբերի իրական ածի հնդեքսը՝ 2004թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	915109.9	1160292.8	1441402.8	111.6
ՀՆԱ դեֆլյատոր *(%. ածողական)*	-	-	-	103.8
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ)* [1]	824.6	1043.5	1300.3	112.3
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	361997.4	417099.1	472443.3	106.2
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	3828.4	4291.6	4778.0	106.7
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	184544.8	253269.7	320996.7	109.0
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	426115.1	502850.7	577260.3	107.0
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	156503.8	201407.0	263307.8	134.0
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	715560.4	848466.8	968325.9	112.6[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	696680.1	820909.3	941650.0	108.9[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	49481	49886	50293	122.2[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1212.6	1213.5	1209.0	
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	102.8	101.6	100.5	
Գործազրկության մակարդակը (%)	8.5	8.4	8.3	

II. Արտաքին հատված

Անվանում	*Հունվար - հուլիս* *(մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար – օգոստոս* *(մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար – սեպտեմբեր* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2005թ. հունվար – սեպտեմբերը 2004թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(FOB)*	523.0	603.8	687.0	136.9
Ներմուծում *(CIF)*	933.2	1085.4	1248.3	129.8
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	410.2	481.7	561.3	122.1

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	105.4	100.5	100.7	98.2
Փետրվար	99.3	94.8	99.9	98.4
Մարտ	99.1	101.2	122.9	99.6
Ապրիլ	99.1	97.4	99.9	97.3
Մայիս	100.1	99.9	100.0	97.6
Հունիս	98.6	101.8	100.1	79.3
Հուլիս	95.5	96.3	100.1	81.8
Օգոստոս	98.6	102.4	101.0	88.0
Սեպտեմբեր	100.9	101.1	99.9	98.1
2005 թ. հունվար-սեպտեմբերը 2004 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ	100.9	110.5	118.4	87.3

IV. Գնաճ

ժամանակաշրջան	*2003*	*2004*	*2005*	*2005*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.1	2.5	5.4	5.4
Փետրվար	-1.5	-0.6	-0.7	4.7
Մարտ	-0.5	0.3	-0.9	3.7
Ապրիլ	2.0	1.2	-0.9	2.8
Մայիս	1.2	1.1	0.1	2.9
Հունիս	1.4	-0.1	-1.4	1.4
Հուլիս	-5.5	-2.5	-4.5	-3.1
Օգոստոս	-2.3	-2.4	-1.4	-4.5
Սեպտեմբեր	2.5	-0.7	0.9	-3.6
Հոկտեմբեր	-0.1	0.1		
Նոյեմբեր	2.2	0.8		
Դեկտեմբեր	5.2	2.3		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	8.6	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	4.7	7.0		

V. Բնականոն գնաճը[1]

Ցուցանիշ	**2003**	**2004**	**2005**
	Նախորդ ամսվա նկատմամբ, %		
Հունվար	0.69	0.65	0.71
Փետրվար	-0.46	0.05	-0.37
Մարտ	0.00	0.03	-0.26
Ապրիլ	0.23	0.05	-0.26
Մայիս	0.06	0.04	-0.08
Հունիս	0.61	-0.13	-0.10
Հուլիս	-0.55	-0.50	-0.42
Օգոստոս	-0.18	-0.31	-0.28
Սեպտեմբեր	1.20	-0.30	0.29
Հոկտեմբեր	0.04	-0.16	
Նոյեմբեր	0.94	-0.05	
Դեկտեմբեր	2.07	0.30	
	Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %		
Հունվար	1.16	4.45	0.72
Փետրվար	0.86	5.60	1.07
Մարտ	1.04	6.37	0.71
Ապրիլ	0.37	6.39	0.13
Մայիս	0.49	6.23	-0.74
Հունիս	2.44	5.41	-0.57
Հուլիս	2.26	6.71	-0.78
Օգոստոս	2.61	6.90	-0.52
Սեպտեմբեր	5.33	6.02	0.26
Հոկտեմբեր	4.65	5.67	
Նոյեմբեր	4.23	4.39	
Դեկտեմբեր	4.67	0.55	

VI. Բնականոն գնաճին առավելապես նպաստող 10 ապրանքատեսակները

Անվանում	***Նպաստումը բնականոն գնաճին, տոկոսային կետ***
	Նախորդ ամսվա նկատմամբ, %
Բնականոն գնաճ, *այդ թվում՝*	**0.29**
օդային տրանսպորտ	0.05
այլ յուղեր	0.04
կարագ	0.04
միջքաղաքային երթուղային տաքսի	0.02
լվացքի փոշի	0.02
թարմ կաղամբ	0.01
կանանց ջեմպր	0.01
ոսպ	0.01
տղամարդու կաշվե կոշիկ	0.01
խոզի միս	0.01

[1] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:*

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն ՀՀ դրամ)

ժամանակաշրջան	Պահանջներ կառավարության նկատմամբ			Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ	Կառավարության զուտ պահանջների փոփոխություն[2]
	Կառավարության արժեթղթերում կատարված ներդրումներ	Վարկեր կառավարությանը և կառավարության միջոցներում կատարված ներդրումներ	Ընդամենը	Հոսքային ընթացիկ հաշիվներ և ավանդներ	Հոսքային ժամկետային ավանդներ	ԾԻԳ-երի միջոցներ դրամով	ԾԻԳ-երի միջոցներ արտարժույթով	Ընդամենը		
2004										
Դեկտեմբեր [4]	193	5711	5904	42512	126	0	97	42735	**-36830**	***-36815***
2005										
Հունվար	193	5658	5852	63919	124	0	97	64141	**-58289**	***-58268***
Փետրվար	193	5598	5792	64629	122	0	98	64849	**-59057**	***-59162***
Մարտ [4]	193	5526	5719	65220	119	90	99	65528	**-59809**	***-60054***
Ապրիլ	193	6783	6977	71670	114	35	98	71917	**-64941**	***-65255***
Մայիս	193	6543	6736	67461	115	29	100	67706	**-60969**	***-61476***
Հունիս [4]	135	6402	6537	60819	115	29	108	61071	**-54534**	***-55050***
Հուլիս	135	6321	6456	54990	116	29	110	55245	**-48789**	***-49300***
Օգոստոս	135	6185	6320	55834	121	156	115	56227	**-49907**	***-50540***
Սեպտեմբեր [4]	0	5986	5986	53887	118	156	109	54270	**-48284**	***-48864***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[2] Կառավարության նկատմամբ պահանջների և կառավարության ավանդների տարբերությունը:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:
[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [4]	Հ - 05	Փ - 05	Մ - 05 [4]	Ա - 05	Մ - 05	Հ - 05[4]	Հ - 05	Օ - 05	Ս – 05 [4]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)										
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***149266***	***160018***	***165260***	***171489***	***180578***	***182491***	***201173***	***216726***	***232366***	***227142***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-17216***	***-42573***	***-48403***	***-47871***	***-50196***	***-44718***	***-50354***	***-47115***	***-50546***	***-53320***
Կառավարություն	-36830	-58289	-59057	-59809	-64941	-60969	-54534	-48789	-49907	-48284
Բանկեր	10857	9653	5100	5064	8339	8192	2882	4127	9120	9696
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	1157	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	-2000	-700	-6600	-4100	-2000	-1500	-1300	-1550	-1300	-1300
Հակադարձ ռեպո (-)	0	-1347	0	-2536	-1361	-2008	-6470	-6023	-1280	-704
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0	0	-1049	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)							-3453	-6330	-9701	-13501
Զուտ այլ ակտիվներ	8757	6063	5554	6874	6406	8059	4751	3877	-58	-1231
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***129830***	***117152***	***119542***	***123374***	***129198***	***137449***	***153985***	***169682***	***180840***	***174922***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***132050***	***117444***	***116857***	***123618***	***130382***	***137773***	***150819***	***169611***	***181820***	***173823***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	105534	91268	92635	98827	105457	110017	113392	124414	133091	132210
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	25800	25604	23700	23834	24338	27195	18102	20950	15721	20765
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)							18773	23672	32417	20277
Այլ հաշիվներ	716	572	521	957	586	561	552	574	592	571
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	561	529	507	588	578	561	552	571	557	569
Այլ հաշիվներ (արտարժույթով)	155	43	14	369	8	0	1	4	34	2
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***10752***	***5242***	***6229***	***9089***	***1913***	***18682***	***15553***	***15640***	***-5224***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-25357***	***-5829***	***532***	***-2326***	***5478***	***-5636***	***3239***	***-3431***	***-2774***
Կառավարություն	-	-21459	-768	-752	-5132	3972	6435	5745	-1118	1 623
Բանկեր	-	-1204	-4553	-36	3275	-147	-5310	1246	4993	576
այդ թվում՝ ավանդներ (-)	-	-1300	5900	-2500	-2100	-500	-200	250	-250	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր							3453	2877	3371	3800
Զուտ այլ ակտիվներ	-	-2694	-508	1320	-468	1653	-3309	-875	-3934	-1173
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-12679***	***2390***	***3832***	***5824***	***8251***	***16536***	***15697***	***11158***	***-5918***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-14606***	***-587***	***6761***	***6764***	***7391***	***13046***	***18792***	***12210***	***-7998***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-14265	1367	6192	6630	4560	3375	11022	8677	-882
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-196	-1904	134	505	2857	-9093	2848	-5230	5045
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)							18773	4899	8745	-12140
Այլ հաշիվներ	-	-144	-51	436	-371	-25	-9	22	17	-21
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-33	-21	81	-10	-17	-9	19	-13	11
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-112	-29	355	-361	-8	1	3	31	-32
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***7.2***	***3.3***	***3.8***	***5.3***	***1.1***	***10.2***	***7.7***	***7.2***	***-2.2***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-147.3***	***-13.7***	***1.1***	***-4.9***	***10.9***	***-12.6***	***6.4***	***-7.3***	***-5.5***
Կառավարություն	-	-58.3	-1.3	-1.3	-8.6	6.1	10.6	10.5	-2.3	3.3
Բանկեր	-	-11.1	-47.2	-0.7	64.7	-1.8	-64.8	43.2	121.0	6.3
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր							100.0	83.3	53.3	39.2
Զուտ այլ ակտիվներ	-	-30.8	-8.4	23.8	-6.8	25.8	-41.0	-18.4	-101.5	-2025.9
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-9.8***	***2.0***	***3.2***	***4.7***	***6.4***	***12.0***	***10.2***	***6.6***	***-3.3***
ՓՈՂԻ ԲԱԶԱ [4]	***-***	***-11.1***	***-0.5***	***5.8***	***5.5***	***5.7***	***9.5***	***12.5***	***7.2***	***-4.4***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.5	1.5	6.7	6.7	4.3	3.1	9.7	7.0	-0.7
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-0.8	-7.4	0.6	2.1	11.7	-33.4	15.7	-25.0	32.1
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)							100	26.1	36.9	-37.4
Այլ հաշիվներ	-	-20.2	-8.8	83.6	-38.8	-4.3	-1.6	4.0	3.0	-3.5

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ՁԱՄ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ՁԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀԴՒ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

[4] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04	Հ – 05	Փ – 05	Մ –05	Ա - 05	Մ - 05	Հ - 05	Հ - 05	Օ - 05	Ս - 05
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**55829**	**56969**	**53242**	**50846**	**44797**	**43228**	**35555**	**35784**	**35105**	**33656**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	117646	117724	113184	107917	99969	101800	97621	102216	105176	97154
Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով	-57154	-56395	-56223	-53699	-50917	-53614	-56815	-61003	-62465	-58130
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-4663	-4360	-3719	-3373	-4255	-4958	-5251	-5430	-7606	-5368
ԶՆԱ	**130829**	**130156**	**129619**	**135579**	**139351**	**144583**	**161895**	**173764**	**186444**	**175274**
Կառավարություն	19598	20248	18730	24151	27842	28571	29458	29546	27867	29119
Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	20989	24849	25598	25777	22542	26514	44943	53884	57407	53376
Պահուստային ակտիվներ	34083	36625	37449	37707	34319	38370	56874	65660	69261	65305
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-13094	-11776	-11851	-11930	-11777	-11856	-11930	-11776	-11854	-11929
Տնտեսություն	142426	136997	136586	141043	143390	150247	154759	157621	167210	167247
Ձեռնարկություններ	80113	75460	72354	73767	75828	78213	80799	81704	87143	86842
Դրամով	27361	24391	24240	24542	26419	27473	28554	30423	33159	33931
Արտարժույթով	49224	47601	48094	49206	49389	50721	52220	51256	53960	52886
Արժեթղթեր	3529	3468	20	20	19	19	25	25	25	25
Տնային տնտեսություններ	56001	55202	57624	60323	62354	66074	68114	70021	74130	72845
Դրամով	14325	13445	13999	15426	17122	18152	19618	21077	22651	24267
Արտարժույթով	41676	41757	43625	44897	45232	47921	48496	48944	51479	48578
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	42	46	31	29	38	44	48	53	52	292
Դրամով	25	25	22	19	23	29	32	38	36	237
Արտարժույթով	17	21	10	10	15	15	16	16	16	55
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924	5170	5916	5798	5842	5884	7268
Դրամով	2042	1984	2522	3082	2019	3360	4266	4535	4106	5762
Արտարժույթով	4227	4305	4054	3843	3152	2557	1532	1307	1778	1506
Այլ ռեզիդենտներ[1]	0	0	1	0	0	0	0	0	0	0
Դրամով	0	0	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթով	0	0	1	0	0	0	0	0	0	0
Ջուտ այլ ակտիվներ	-52183	-51938	-51296	-55392	-54423	-60749	-67266	-67287	-66040	-74468
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	1836	1572	1604	1600	1289	1343	1478	1356	1456	1446
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	3052	2249	2279	1785	2804	2073	2366	2722	3309	3320
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.)	-799	-656	-857	-796	-1189	-887	-950	-1097	-1967	-1986
Ներդրումներ փայաբաժիններում	445	445	445	457	459	470	478	493	500	498
Միջբանկային պահանջներ	6097	4139	3242	3721	10616	12318	6927	5496	6247	7369
Այլ ակտիվներ	32887	33359	36639	39005	41313	42027	43286	44392	42296	39798
Միջբանկային պարտավորություններ	-5530	-3617	-2793	-3265	-10156	-11498	-5738	-4897	-5785	-7081
Դրամական շուկայի գործիքներ	-3406	-3371	-3335	-3207	-3091	-3150	-3407	-3469	-334	-319
Կապիտալ հաշիվներ	-68842	-68635	-70214	-73661	-76607	-79060	-80479	-82328	-85757	-89633
Այլ պարտավորություններ	-17924	-17423	-18305	-21031	-19861	-24386	-31227	-29954	-26006	-27879
ԱՎԱՆԴՆԵՐ	**186659**	**187126**	**182861**	**186424**	**184148**	**187812**	**197450**	**209548**	**221549**	**208930**
Դրամով ավանդներ	46588	47838	49712	53477	56067	58176	58632	65052	62927	66341
Ցպահանջ ավանդներ	33283	32250	35629	36675	38203	40048	41257	47455	45105	47523
Ժամկետային ավանդներ	13304	15588	14083	16802	17864	18127	17375	17597	17822	18818
Ավանդներ արտարժույթով	140071	139288	133149	132947	128080	129636	138818	144496	158622	142589
Ցպահանջ ավանդներ	74453	71481	66296	69120	64726	64956	74368	77817	87029	64980
Ժամկետային ավանդներ	65618	67807	66853	63827	63354	64680	64450	66679	71593	77609

[1] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [5]	Հ - 05	Փ - 05	Մ - 05 [5]	Ա - 05	Մ - 05	Հ - 05 [5]	Հ - 05	Օ - 05	Ս – 05 [5]
(ննջացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***205095***	***216987***	***218502***	***222334***	***225375***	***225720***	***236728***	***252510***	***267472***	***260798***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***80848***	***52841***	***49899***	***56461***	***57900***	***64680***	***66568***	***74175***	***78494***	***71645***
Կառավարություն	-17232	-38041	-40327	-35659	-37099	-32398	-25076	-19243	-22040	-19165
Տնտեսություն	142469	137037	136622	141075	143419	150274	154784	157644	167233	167271
Չեռնարկ. և կազմակերպ.	80114	75460	72355	73767	75828	78213	80799	81704	87143	86842
որից՝ կուտակված տոկոսներ	651	637	565	667	667	714	720	778	762	762
Տնային տնտեսություններ	56044	55241	57659	60354	62383	66100	68139	70045	74154	72868
որից՝ կուտակված տոկոսներ	790	854	880	945	954	1057	1067	1144	1220	1097
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	42	46	31	29	38	44	48	53	52	292
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0	0	0	0	0	1
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924	5170	5916	5798	5842	5884	7268
որից՝ կուտակված տոկոսներ	48	36	36	42	27	28	22	16	14	16
Զուտ այլ ակտիվներ	-44388	-46154	-46395	-48955	-48420	-53196	-63140	-64226	-66699	-76461
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [2]	***145538***	***130296***	***135012***	***145246***	***154908***	***160536***	***164245***	***181909***	***187022***	***189578***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	***285172***	***269000***	***267511***	***277883***	***282339***	***289595***	***302525***	***325786***	***345008***	***331547***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [3]	***285943***	***269828***	***268401***	***278796***	***283275***	***290399***	***303296***	***326685***	***345966***	***332443***
Շրջաառությունում կանխիկ ՀՀ դրամ	98569	82131	85019	91415	98541	102027	105294	116563	123825	122942
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [4]	33845	32778	36136	37263	38781	40610	41809	48026	45662	48092
կուտակված տոկոսներ	38	41	53	43	49	33	17	32	40	21
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	13304	15588	14083	16802	17864	18127	17375	17597	17822	18818
կուտակված տոկոսներ	142	160	173	191	230	194	215	245	248	253
Արտարժույթով ավանդներ	140226	139331	133163	133316	128088	129636	138819	144499	158657	142591
Ցպահանջ [4]	74607	71525	66310	69489	64733	64956	74369	77821	87064	64982
կուտակված տոկոսներ	52	55	65	51	60	36	9	42	73	8
Ժամկետային	65618	67807	66853	63827	63354	64680	64450	66679	71593	77609
կուտակված տոկոսներ	539	573	599	627	597	541	530	580	597	614
(փոփոխությունները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***11892***	***1515***	***3832***	***3040***	***345***	***11008***	***15782***	***14962***	***-6674***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-28007***	***-2942***	***6562***	***1439***	***6780***	***1888***	***7607***	***4319***	***-6849***
Կառավարություն	-	-20809	-2286	4668	-1440	4701	7322	5833	-2797	2875
Տնտեսություն	-	-5432	-415	4453	2344	6855	4511	2860	9589	37
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-4654	-3105	1413	2061	2385	2586	905	5439	-301
որից՝ կուտակված տոկոսներ	-	-15	-72	102	0	47	7	58	-16	0
Տնային տնտեսություններ	-	-802	2418	2695	2028	3718	2039	1906	4109	-1285
որից՝ կուտակված տոկոսներ	-	64	25	65	10	102	10	77	76	-123
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	4	-15	-3	9	6	4	5	-1	240
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0	0	0	0	0	0	1
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	20	287	348	-1754	746	-118	44	42	1384
որից՝ կուտակված տոկոսներ	-	-12	0	6	-15	1	-6	-6	-2	3
Զուտ այլ ակտիվներ	-	-1766	-241	-2560	535	-4776	-9945	-1086	-2473	-9762
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-15242***	***4716***	***10234***	***9662***	***5628***	***3709***	***17664***	***5113***	***2556***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	***-***	***-16173***	***-1488***	***10372***	***4456***	***7256***	***12930***	***23261***	***19222***	***-13461***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-16115***	***-1427***	***10395***	***4479***	***7125***	***12897***	***23389***	***19281***	***-13523***
Շրջաառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16438	2889	6395	7126	3486	3268	11269	7262	-883
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-1067	3358	1127	1518	1828	1199	6217	-2364	2430
կուտակված տոկոսներ	-	3	12	-10	6	-15	-16	15	8	-19
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	2284	-1505	2720	1062	263	-753	222	225	996
կուտակված տոկոսներ	-	18	13	18	39	-35	21	30	3	5
Արտարժույթով ավանդներ	-	-894	-6168	153	-5228	1548	9183	5680	14158	-16066
Ցպահանջ	-	-3083	-5215	3179	-4755	222	9413	3452	9243	-22082
կուտակված տոկոսներ	-	2	10	-13	9	-24	-27	33	31	-65
Ժամկետային	-	2188	-953	-3027	-472	1326	-230	2229	4914	6016
կուտակված տոկոսներ	-	34	26	28	-30	-56	-11	50	17	17

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ՀՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***5.8***	***0.7***	***1.8***	***1.4***	***0.2***	***4.9***	***6.7***	***5.9***	***-2.5***
ՀՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***-34.6***	***-5.6***	***13.2***	***2.5***	***11.7***	***2.9***	***11.4***	***5.8***	***-8.7***
Կառավարություն	-	-120.8	-6.0	11.6	-4.0	12.7	22.6	23.3	-14.5	13.0
Տնտեսություն	-	-3.8	-0.3	3.3	1.7	4.8	3.0	1.8	6.1	0.02
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-5.8	-4.1	2.0	2.8	3.1	3.3	1.1	6.7	-0.3
Տնային տնտեսություններ	-	-1.4	4.4	4.7	3.4	6.0	3.1	2.8	5.9	-1.7
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	10.0	-32.1	-8.1	31.0	16.6	8.6	11.4	-1.8	461.7
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	0.3	4.6	5.3	-25.3	14.4	-2.0	0.8	0.7	23.5
Զուտ այլ ակտիվներ	-	-4.0	-0.5	-5.5	1.1	-9.9	-18.7	-1.7	3.8	-14.6
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ	-	***-10.5***	***3.6***	***7.6***	***6.7***	***3.6***	***2.3***	***10.8***	***2.8***	***1.4***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	-	***-5.7***	***-0.6***	***3.9***	***1.6***	***2.6***	***4.5***	***7.7***	***5.9***	***-3.9***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	-	***-5.6***	***-0.5***	***3.9***	***1.6***	***2.5***	***4.4***	***7.7***	***5.9***	***-3.9***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16.7	3.5	7.5	7.8	3.5	3.2	10.7	6.2	-0.7
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-3.2	10.2	3.1	4.1	4.7	3.0	14.9	-4.9	5.3
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	17.2	-9.7	19.3	6.3	1.5	-4.2	1.3	1.3	5.6
Արտարժույթով ավանդներ	-	-0.6	-4.4	0.1	-3.9	1.2	7.1	4.1	9.8	-10.1
Ցպահանջ	-	-4.1	-7.3	4.8	-6.8	0.3	14.5	4.6	11.9	-25.4
Ժամկետային	-	3.3	-1.4	-4.5	-0.7	2.1	-0.4	3.5	7.4	8.4

[1] ՁԱՀ-ն ընդգրկում է միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՁԱՀ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար, առևտրային բանկերի ՁԱՀ-ն՝ փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[4] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

[5] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	**2004**	**2005**								
	Դ [4,5]	**Հ**	**Փ**	**Մ [4]**	**Ա**	**Մ**	**Հ [4]**	**Հ**	**Օ**	**Մ [4]**
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	547.8	561.9	570.4	579.3	593.1	588.7	621.8	647.6	675.4	661.9
Համախառն միջազգային պահուստներ	575.9	572.1	580.6	589.5	603.3	598.9	632.0	657.8	688.0	688.9
Ոսկի	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	12.0	11.7	6.7	6.6	0.9	0.9	2.1	0.05	17.0	16.9
Արտարժույթ [2]	563.9	560.4	574.0	583.0	602.5	598.0	629.9	657.7	671.0	672.0
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [3]	550.0	564.3	572.9	581.5	596.2	593.0	625.9	653.2	681.9	668.6

[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

[5] ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են՝ հիմք ընդունելով 2004 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է տարեվերջի՝ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2004[4]	2005								
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս
Վարկեր [1]										
Իրավաբանական անձանց										
ՀՀ դրամով	18.8	12.2	20.3	17.8	18.4	18.6	17.7	19.4	15.1	17.9
ԱՄՆ դոլարով	16.9	11.5	14.2	13.9	11.7	15.0	12.9	14.5	14.8	14.5
Ֆիզիկական անձանց										
ՀՀ դրամով	22.0	21.7	21.7	22.0	20.5	23.8	20.1	21.9	22.7	22.4
ԱՄՆ դոլարով	24.3	24.3	24.3	23.8	23.7	23.7	23.5	23.5	22.7	23.4
Ավանդներ [1]										
Իրավաբանական անձանցից										
ՀՀ դրամով	2.8	7.5	8.3	7.3	6.4	6.5	5.7	3.7	6.4	5.5
ԱՄՆ դոլարով	5.3	5.8	3.8	5.6	3.3	6.0	4.1	2.9	3.8	4.9
Ֆիզիկական անձանցից										
ՀՀ դրամով	6.3	7.2	7.3	7.8	6.5	6.4	6.0	6.3	6.2	6.0
ԱՄՆ դոլարով	5.8	6.1	4.7	3.8	5.2	4.6	4.5	5.1	5.3	4.3
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	3.75	4.5	4.5	3.75	3.75	3.75	3.75	3.75	3.0	3.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	1.0	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.0	1.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	16.0	16.0	16.0	16.0	16.0	16.0	16.0	16.0	16.0	16.0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերի եկամտաբերությունը [2]							4.9	4.9	4.2	4.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [3]	5.6	6.0	4.6	4.6	5.3	4.9	5.7	5.3	5.1	-
Գնած	2.0	5.4	-0.7	-0.9	-0.9	0.1	-1.4	-4.5	-1.4	0.9

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[1] Ներկայացված են 91 - 180-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:

[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի եկամտաբերությունը:

[3] Ներկայացված է միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[4] Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները: Գնածը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Ավանդի ծավալ[1]	Տոկոսադրույք	Վարկի ծավալ[1]	Տոկոսադրույք
2004				
Հունվար	11650	3.5	-	-
Փետրվար	8840	3.5	-	-
Մարտ	14830	3.0	-	-
Ապրիլ	8450	2.1	-	-
Մայիս	1500	1.0	-	-
Հունիս	1500	1.0	-	-
Դեկտեմբեր	2100	1.0	-	-
2005				
Հունվար	9850	1.75	-	-
Փետրվար	19070	1.75	-	-
Մարտ	23910	1.75	-	-
Ապրիլ	16540	1.75	-	-
Մայիս	7250	1.75	-	-
Հունիս	6950	1.75	-	-
Հուլիս	5900	1.75	-	-
Օգոստոս	12150	1.39	-	-
Սեպտեմբեր	5400	1.0	-	-

[1] Մարումները հանված չեն:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Ռեպո համաձայնագրերի ծավալը[1]	Ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	Հակադարձ ռեպո համաձայնագրերի ծավալը[1]	Հակադարձ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը
2004				
Հունվար	-	-	1025.4	7.0
Փետրվար	-	-	1030.7	7.0
Մայիս	-	-	923.5	6.0
Հունիս	-	-	2304.4	6.0
Հոկտեմբեր	252.4	3.75	-	-
Դեկտեմբեր	1156.9	3.75	-	-
2005				
Հունվար	-	-	2017.5	4.5
Մարտ	-	-	2535.5	3.75
Ապրիլ	-	-	2194.4	3.75
Մայիս	-	-	2008.0	3.75
Հունիս	-	-	6469.8	3.75
Հուլիս	-	-	6022.7	3.75
Օգոստոս	-	-	1279.7	3.0
Սեպտեմբեր	-	-	704.1	3.0

[1] *Մարումները հանված չեն:*

ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(ԱՄՆ դոլար)

ժամկետ	Արտարժույթի տրամադրման սվոփի ծավալը[1]	Միջին կշռված տոկոսադրույքը	Արտարժույթի ներգրավման սվոփի ծավալը[1]	Միջին կշռված տոկոսադրույքը
2004				
Փետրվար	3600000	5.90	-	-
Մարտ	1150000	4.91	-	-
Ապրիլ	5000000	4.90	-	-
Մայիս	6250000	4.90	-	-
Հուլիս	-	-	4600000	3.58
Սեպտեմբեր	-	-	3800000	2.16
Հոկտեմբեր	-	-	3000000	2.13
2005				
Հունիս	2300000	0.54	-	-
Սեպտեմբեր	-	-	-	-

[1] *Մարումները հանված չեն:*

ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ [1]

Ցուցանիշներ	Միջբանկային ռեպո շուկայի շրջանառությունը									
	մինչև 7 օր		8 – 14 օր		15 – 28 օր		28 օր և ավելի		Ընդամենը	
	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%
2005										
Հունվար	*3047.97*	*3.86*	*745.44*	*4.43*	*260.43*	*5.00*			*4053.84*	*4.04*
Առավելագույն տոկոսադրույք		5.00		5.00		5.00				5.00
Նվազագույն տոկոսադրույք		2.50		4.00		5.00				2.50
Ստանդարտ շեղում		0.58		0.37		-				0.62
Փետրվար	*1339.21*	*3.60*	*665.00*	*3.66*	*1373.45*	*4.66*	*278.00*	*4.50*	*3655.66*	*4.08*
Առավելագույն տոկոսադրույք		5.00		4.50		5.00		4.50		5.00
Նվազագույն տոկոսադրույք		2.50		3.00		3.50		4.50		2.50
Ստանդարտ շեղում		0.95		0.63		0.56		-		0.81
Մարտ	*4202.30*	*3.06*	*1096.66*	*3.14*	*997.80*	*3.87*	*176.70*	*4.50*	*6473.46*	*3.23*
Առավելագույն տոկոսադրույք		4.00		3.50		4.50		4.50		4.50
Նվազագույն տոկոսադրույք		2.50		3.00		3.00		4.50		2.50
Ստանդարտ շեղում		0.41		0.25		0.64		-		0.51
Ապրիլ	*7613.29*	*2.89*	*1886.82*	*3.01*	*751.02*	*3.19*			*10251.1*	*2.94*
Առավելագույն տոկոսադրույք		4.00		4.50		3.50				4.50
Նվազագույն տոկոսադրույք		2.50		2.50		3.00				2.50
Ստանդարտ շեղում		0.45		0.50		0.24				0.44
Մայիս	*8388.77*	*3.12*	*3368.49*	*3.23*	*854.88*	*3.38*	*255.85*	*3.89*	*12867.98*	*3.18*
Առավելագույն տոկոսադրույք		5.00		4.50		3.75		4.50		5.00
Նվազագույն տոկոսադրույք		2.50		2.70		3.00		2.50		2.50
Ստանդարտ շեղում		0.51		0.49		0.28		1.41		0.51
Հունիս	*5569.00*	*3.11*	*2133.01*	*3.37*	*1170.18*	*3.23*	*945.24*	*4.12*	*9817.43*	*3.28*
Առավելագույն տոկոսադրույք		3.50		4.00		4.00		4.75		4.75
Նվազագույն տոկոսադրույք		2.75		2.00		2.00		2.50		2.00
Ստանդարտ շեղում		0.26		0.38		0.48		0.61		0.48
Հուլիս	*3454.70*	*2.96*	*3173.75*	*3.40*	*1524.04*	*3.44*	*439.50*	*3.73*	*8591.98*	*3.25*
Առավելագույն տոկոսադրույք		3.50		4.00		5.93		4.00		5.93
Նվազագույն տոկոսադրույք		2.50		3.00		2.50		3.00		2.50
Ստանդարտ շեղում		0.26		0.24		0.72		0.50		0.49
Օգոստոս	*2549.91*	*2.85*	*2561.00*	*2.96*	*859.20*	*3.04*	*1118.17*	*3.49*	*7088.29*	*3.01*
Առավելագույն տոկոսադրույք		4.00		4.00		3.50		4.50		4.50
Նվազագույն տոկոսադրույք		2.25		2.50		2.50		2.50		2.25
Ստանդարտ շեղում		0.39		0.37		0.34		0.58		0.48
Սեպտեմբեր	4457.54	2.73	1940.94	3.05	1604.35	2.97	624.43	3.62	8627.26	2.91
Առավելագույն տոկոսադրույք		3.50		4.00		3.50		4.25		4.25
Նվազագույն տոկոսադրույք		2.25		2.50		2.50		3.00		2.25
Ստանդարտ շեղում		0.35		0.44		0.41		0.45		0.47
Ընդամենը	40622.68	3.07	17571.11	3.25	9395.36	3.54	3837.89	3.84	71427.03	3.22
Առավելագույն տոկոսադրույք		5.00		5.00		5.93		4.75		5.93
Նվազագույն տոկոսադրույք		2.25		2.00		2.00		2.50		2.00

[1] *ԿԲ կողմից իրականացված գործառնություններն ընդգրկված չեն:*

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05	Ա -05	Մ - 05	Հ - 05	Հ - 05	Օ - 05	Ս - 05
1	500.05	-	477.61	471.00	457.30	-	445.98	441.26	447.96	466.09
2	499.19	-	473.16	470.70	-	439.25	445.98	441.05	447.17	464.45
3	497.87	-	478.13	470.50	-	439.17	447.38	-	448.85	-
4	-	486.05	474.87	470.25	457.30	441.11	-	-	449.00	-
5	-	486.05	-	470.05	456.60	443.94	-	-	449.90	463.27
6	493.87	-	-	-	454.46	459.39	448.32	440.76	-	463.27
7	487.89	488.75	474.35	-	453.31	-	449.63	440.32	-	462.36
8	484.89	493.37	474.05	-	452.23	-	450.44	440.16	451.27	461.36
9	478.00	-	473.55	470.05	-	-	454.99	-	451.37	459.27
10	478.00	495.01	473.02	469.35	-	459.03	455.89	-	452.21	-
11	-	497.39	474.91	469.35	452.23	457.13	-	439.03	452.80	-
12	-	499.67	-	-	451.56	455.83	-	438.56	454.85	457.05
13	478.00	501.20	-	-	451.56	454.69	456.70	438.06	-	456.19
14	483.44	501.80	473.77	469.06	450.56	-	456.23	436.89	-	455.24
15	483.44	-	473.26	469.06	450.02	-	455.81	435.75	457.44	453.26
16	484.34	-	472.61	468.43	-	453.03	455.49	-	457.47	452.50
17	484.64	500.21	471.61	468.23	-	452.87	453.50	-	460.21	-
18	-	499.45	473.45	467.31	448.02	452.14	-	439.21	463.14	-
19	-	497.38	-	-	443.77	450.91	-	441.85	464.37	451.26
20	484.64	493.43	-	-	445.25	449.30	451.04	441.85	-	449.27
21	484.75	488.97	472.68	466.11	445.25	-	448.48	447.19	-	-
22	484.97	-	472.57	464.83	443.75	-	446.12	447.69	465.87	449.27
23	483.83	-	472.26	462.77	-	448.85	444.42	-	469.01	448.27
24	483.92	487.20	471.76	461.60	-	447.85	443.81	-	473.95	-
25	-	484.07	471.22	460.39	442.29	446.91	443.81	447.69	477.82	-
26	-	482.34	471.22	-	440.89	446.10	-	447.17	478.03	447.46
27	484.37	481.07	-	-	439.31	446.06	443.38	447.95	478.03	447.07
28	485.57	-	471.22	459.20	439.41	-	443.22	447.47	-	446.35
29	486.23	-	-	457.75	439.25	-	442.85	447.71	473.40	445.28
30	485.84	-	-	458.13	439.25	445.55	442.34	447.71	471.28	444.21
31	-	478.48	-	458.13	-	445.08	-	-	468.34	-
ժամանակահատվածի վերջ	485.84	478.48	471.22	458.13	439.25	445.08	442.34	447.71	468.34	444.21
ժամանակահատվածի միջին	486.26	491.68	473.39	466.01	447.89	449.25	448.95	442.63	460.99	454.42

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	Մնացորդը 30.06.05թ. դրությամբ	Փոփոխություններ					Մնացորդը 30.09.05թ. դրությամբ
		Գործառնությունների հաշվին	Գնեղրի փոփոխությունների հաշվին	Փոխարժեքի փոփոխությունների հաշվին	Այլ ճշտումներ	Ընդհանուր փոփոխություններ	
Ակտիվներ	228.8	-2.1	0.0	0.0	0.0	-2.1	226.71
Ուղղակի ներդրումներ արտերկրներում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Բաժնետիրական կապիտալ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Վերաներդրված շահույթ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Այլ կապիտալ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Պորտֆելային ներդրումներ	1.7	1.4	0.0	0.0	0.0	1.4	3.2
Բաժնետոմսեր	0.3	-0.1		0.0		-0.1	0.2
Պարտքային պարտավորություններ	1.5	1.5	0.0	0.0	0.0	1.5	2.9
Այլ ներդրումներ	227.0	-3.5	0.0	0.0	0.0	-3.5	223.5
Վարկեր	24.0	-4.1	0.0	0.0	0.0	-4.1	19.9
Երկարաժամկետ	3.2	-0.5		0.0		-0.4	2.8
Կարճաժամկետ	20.8	-3.6		0.0		-3.7	17.1
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	197.6	0.6	0.0	0.0	0.0	0.6	198.2
Կանխիկ դրամական միջոցներ	30.8	3.8		0.0		3.8	34.6
Ավանդներ	166.8	-3.2	0.0	0.0	0.0	-3.2	163.6
Երկարաժամկետ	0.2	0.6		0.0		0.6	0.8
Կարճաժամկետ	166.6	-3.8		0.0		-3.8	162.8
Այլ ակտիվներ	5.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	5.4
Պարտավորություններ	194.1	14.1	0.0	0.1	0.0	14.1	208.2
Ուղղակի ներդրումներ հաշվետու երկրում	45.4	8.4	0.0	0.1	0.0	8.5	53.9
Բաժնետիրական կապիտալ	47.2	12.3		0.0		12.3	59.5
Վերաներդրված շահույթ	-8.8	3.1		0.1		3.2	-5.6
Այլ կապիտալ	7.0	-7.0		0.0		-7.0	0.0
Պորտֆելային ներդրումներ	3.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	3.6
Բաժնետոմսեր	3.6	0.0		0.0		0.0	3.58
Պարտքային պարտավորություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Այլ ներդրումներ	145.2	5.7	0.0	0.0	0.0	5.6	150.8
Վարկեր	37.7	-4.8	0.0	0.0	0.0	-4.8	32.9
Երկարաժամկետ	23.8	1.8		0.0		1.8	25.54
Կարճաժամկետ	13.9	-6.6		0.0		-6.6	7.3
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	99.5	11.5	0.0	-0.1	0.0	11.4	110.9
Երկարաժամկետ	3.3	2.8		0.0		2.8	6.1
Կարճաժամկետ	96.1	8.7		0.0	0.0	8.6	104.8
Այլ պարտավորություններ	8.0	-1.1	0.0	0.0	0.0	-1.0	7.01
Զուտ ներդրումային դիրքը	34.7	-16.1	0.0	-0.1	0.0	-16.2	18.5

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԸ

մլն ԱՄՆ դոլար

	2005 II եռամսյակ						2005 III եռամսյակ					
		Արտարժույթ						Արտարժույթ				
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌՈՒ ռուբլի	Այլ	Ընդամենը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌՈՒ ռուբլի	Այլ	Ընդամենը
Ակտիվներ	**1.7**	**189.4**	**26.9**	**5.0**	**5.7**	**227.1**	**1.2**	**186.0**	**26.8**	**7.0**	**5.8**	**225.5**
Կապիտալի արժեթղթեր	-	0.3	0.0	0.0	0.0	0.3	-	0.2	0.0	0.0	0.0	0.2
Պարտքային արժեթղթեր	0.0	1.5	0.0	0.0	0.0	1.5	0.0	2.9	0.0	0.0	0.0	2.9
Կանխիկ դրամական միջոցներ	-	19.9	7.9	2.8	0.3	30.8	-	25.5	5.8	3.0	0.3	34.6
Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր	1.6	21.3	0.8	0.0	0.2	22.4	0.9	18.3	0.5	0.0	0.2	19.0
Ավանդներ	0.0	141.2	18.1	2.2	5.2	166.8	0.0	133.9	20.4	4.0	5.3	163.6
Այլ	0.1	5.3	0.1	0.0	0.0	5.4	0.3	5.1	0.0	0.0	0.0	5.2
Պարտավորություններ	**62.3**	**129.5**	**8.6**	**2.1**	**0.4**	**140.7**	**75.0**	**124.8**	**9.3**	**4.4**	**0.3**	**138.92**
Կապիտալի արժեթղթեր	50.8					0.0	63.1					0.0
Պարտքային արժեթղթեր	0.0	7.0	0.0	0.0	0.0	7.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր	0.0	37.6	0.0	0.0	0.0	37.7	0.0	32.8	0.0	0.0	0.0	32.9
Ավանդներ	9.8	79.2	8.6	1.7	0.2	89.7	11.5	86.3	9.0	3.9	0.2	99.5
Այլ	1.7	5.6	0.1	0.4	0.2	6.3	0.4	5.7	0.3	0.6	0.1	6.6
Զուտ դիրք*	**-60.6**	**59.9**	**18.3**	**2.9**	**5.3**	**86.4**	**-73.8**	**61.1**	**17.4**	**2.6**	**5.5**	**86.6**

** Ի տարբերություն փողի զանգվածում ՀՀ առևտրային բանկերի ԶԱՄ-ի, այստեղ ներառված են նաև ՀՀ առևտրային բանկերի «Կապիտալի արժեթղթերը»՝ պարտավորությունների մասում, ոչ փոխարկելի արտարժույթը և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվներն ու պարտավորությունները:*

ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՊՊԱՏԱԿՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԱՐԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ

հազար ԱՄՆ դոլար

Երկրներ	2004											
	I եռ.			II եռ.			III եռ.			Ընդամենը		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստան	58446	10649	47798	87333	11337	75996	126594	14941	111653	419014	68210	350803
ԱՄՆ	7438	3307	4131	20065	4099	15966	24801	5047	19753	78787	20519	58268
Գերմանիա	2386	1264	1122	4399	2764	1634	3927	1653	2274	15319	8114	7206
Լատվիա	2917	932	1984	1813	1858	-46	4567	1386	3181	13393	6421	6973
Շվեյցարիա	1802	1261	542	5196	871	4325	2972	1290	1682	12846	4364	8481
Մեծ Բրիտանիա	748	611	137	3611	658	2953	3139	603	2536	11657	2654	9002
Ուկրաինա	1627	1930	-303	1046	2122	-1077	1156	2171	-1015	5249	8306	-3057
ԱՄԷ	566	2300	-1735	1025	3259	-2234	1360	2858	-1498	4199	10308	-6109
Թուրքիա	239	1287	-1048	322	1571	-1249	311	2883	-2572	1065	8568	-7503
Այլ երկրներ	17107	8394	8713	20974	8281	12693	22899	7993	14907	82492	33832	48659
Ընդամենը	**93277**	**31936**	**61341**	**145782**	**36820**	**108962**	**191726**	**40826**	**150900**	**644019**	**171296**	**472723**

հազար ԱՄՆ դոլար

Երկրներ	2005								
	I եռ.			II եռ.			III եռ.		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստան	79605	14895	64710	124181	21543	102637	163535	17610	145925
ԱՄՆ	17690	4739	12951	16322	11180	5142	24982	5719	19263
Գերմանիա	3592	992	2600	3948	1398	2550	4298	1591	2707
Լատվիա	1239	2446	-1207	1274	354	920	791	429	362
Շվեյցարիա	2927	1092	1835	3042	398	2644	1365	337	1028
Մեծ Բրիտանիա	2350	928	1421	2409	765	1644	2851	640	2211
Ուկրաինա	823	1801	-978	1380	1670	-290	1745	1108	637
ԱՄԷ	2720	2331	389	670	1964	-1295	695	1419	-724
Թուրքիա	143	1516	-1373	285	2315	-2030	284	2148	-1865
Այլ երկրներ	14220	7066	7154	20523	12061	8462	19450	9461	9989
Ընդամենը	**125308**	**37806**	**87502**	**174033**	**53648**	**120384**	**219996**	**40462**	**179534**

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(2005 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ)

Հաշվեկշիռ

(հազար ՀՀ դրամ)

	30.09.05	*30.06.05*	*31.12.04*
Ակտիվներ			
Ակտիվներ ոսկով և արտարժույթով			
Կանխիկ դրամական միջոցներ	277,578	316,362	263,649
Օտարերկրյա բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	153,490,222	159,819,368	200,665,499
ԱՄՀ-ում հատուկ փոխառության իրավունք	66,766,812	60,213,002	74,997,910
Ներդրումային արժեթղթեր			
- վաճառքի համար նախատեսված ներդրումներ	1,227	1,221	1,514
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	147,720,763	120,334,155	74,091,282
Այլ արտարժույթով ակտիվներ	42,604	1,018,385	1,228,824
	368,299,206	**341,702,493**	**351,248,678**
Ակտիվներ ՀՀ դրամով			
Վարկեր և այլ պահանջներ	11,952,788	11,955,594	13,020,001
Ներդրումային արժեթղթեր			
- վաճառքի համար նախատեսված ներդրումներ	7,854,216	2,866,671	8,442,489
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	5,598,683	5,612,865	5,621,345
Այլ ակտիվներ ՀՀ դրամով	1,301,126	6,820,338	470,529
	26,706,813	**27,255,468**	**27,554,364**
Ընդամենը ակտիվներ	**395,006,019**	**368,957,961**	**378,803,042**
Պարտավորություններ			
Արտարժույթով պարտավորություններ			
Փոխառված միջոցներ			
- բանկեր և վարկային կազմակերպություններ	29,280,878	27,715,322	11,088,132
- ԱՄՀ	82,325,441	84,457,981	104,337,934
- Հայաստանի կառավարություն	12,231,469	4,738,108	13,878,092
Այլ ավանդային հաշիվներ արտարժույթով	1,877,992	506	154,751
Այլ պարտավորություններ արտարժույթով	828,555	100,066	43,970
	126,544,335	**117,011,983**	**129,502,879**
ՀՀ դրամով պարտավորություններ			
Շրջանառության մեջ թղթադրամներ և մետաղադրամներ	132,209,580	113,392,048	105,533,669
Փոխառված միջոցներ			
- բանկեր և վարկային կազմակերպություններ	23,002,642	28,277,745	28,436,945
- ԱՄՀ	59,238,775	60,186,409	70,244,915
- Հայաստանի կառավարություն	54,771,394	61,513,073	42,610,033
Այլ ավանդային հաշիվներ ՀՀ դրամով	1,193,022	1,300,577	1,184,367
Թողարկված արժեթղթեր	13,586,148	3,457,486	-
ՀՀ դրամով այլ պարտավորություններ	182,962	203,975	225,823
	284,184,523	**268,331,313**	**248,235,752**
Ընդամենը պարտավորություններ	**410,728,858**	**385,343,296**	**377,738,631**
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	100,000	100,000	100,000
Գլխավոր պահուստ	9,870,486	9,870,486	9,870,486
Կուտակված շահույթ / (վնաս) և այլ պահուստներ	(25,693,325)	(26,355,821)	(8,906,075)
Ընդհանուր կապիտալ	**(15,722,839)**	**(16,385,335)**	**1,064,411**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	**395,006,019**	**368,957,961**	**378,803,042**

Հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 7-ին և ստորագրվել:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Նախագահ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

ՀՀ-ՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Վիճակագրության վարչություն
Ա. Շաբոյան, Վ. Նիկողոսյան

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համաձայն ԱՎԾ տվյալների՝ 2004թ. գյուղատնտեսության ճյուղի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 21.3%: Մինչդեռ 2004թ. հունիսի վերջի դրությամբ ՀՀ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությանը տրամադրված վարկերը կազմել են տնտեսության բոլոր ճյուղերին տրամադրված միջոցների ընդամենը 12.7%-ը:

Նման իրավիճակի ձևավորումն ունի մի քանի պատճառներ, որոնցից հիմնականներն են՝

- Գյուղատնտեսական արտադրության խիստ բարձր ռիսկայնությունը՝ կապված բնակլիմայական պայմանների անորոշության հետ:
- Բանկերի համար ընդունելի գրավի առարկաների բացակայությունը: Մասնավորապես՝ բանկերի կողմից որպես գրավ հիմնականում ընդունվում են ավտոմեքենաները, գյուղացիական տեխնիկան, ոսկյա իրերն ու զարդերը, Երևանում գտնվող բնակարանները: Որոշ դեպքերում որպես գրավ կարող է ընդունվել նաև տան գույքը, իսկ շատ հազվադեպ՝ հողատարածքները, գյուղական վայրերում գտնվող տներն ու խոշոր եղջերավոր անասունները:
- Գյուղացիական տնտեսությունների՝ տարածքային առումով հեռու գտնվելը բանկերի մասնաճյուղերից, որի պատճառով գյուղատնտեսական վարկավորմամբ զբաղվում են հիմնականում ՀՀ մարզերում մասնաճյուղերի լայն ցանց ունեցող բանկերը:

Գյուղատնտեսական վարկերի ծավալների ընդլայնմանն ուղղված միջոցառումների մշակման համար անհրաժեշտ է նախևառաջ գնահատել այդ վարկերի իրական պահանջարկը: Այդ նպատակով ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության կողմից 2005թ. հուլիս-օգոստոսին հանրապետության տարբեր մարզերի գյուղացիական տնտեսություններում իրականացվել է հարցում, որի տվյալների հիման վրա փորձ է արվել գնահատել գյուղատնտեսական վարկերի իրական պահանջարկի ծավալները:

Հարցումը նաև նպատակ է ունեցել բացահայտելու գյուղատնտեսական վարկավորման ոլորտում առկա խոչընդոտները, վարկերի մի շարք չափանիշների հարցում գյուղացիական տնտեսությունների նախընտրությունները: Այդպիսի չափանիշներից են՝ վարկի տրամադրման արժույթը, ժամկետայնությունը, առավելագույն տոկոսադրույքը և այլն:

2. ՀԱՐՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ

2.1. Հարցման շրջանակներում ուսումնասիրված գյուղացիական տնտեսությունների ընտրության սկզբունքները

Գյուղացիական տնտեսությունների ընտրանքը կատարվել է հետևյալ սկզբունքներով և հաջորդականությամբ: Նախ, որոշվել է հետազոտության օբյեկտների ընտրանքում ընդգրկվելիք ընտանիքների քանակը, որը հնարավորինս պետք է ապահովի հետազոտության ներկայացուցչականությունը: Այնու-

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

հետև իրականացվել է ՀՀ մարզերի ընտրությունը, որից հետո գյուղացիական տնտեսությունները բաշխվել են ըստ ընտրված մարզերի:

Ընտրանքի նախնական չափը որոշելու համար անհրաժեշտ է ունենալ գլխավոր համակցության օբյեկտների ընդհանուր քանակը և ուսումնասիրվող ցուցանիշի ստանդարտ շեղումը գլխավոր համակցությունում: Հարկ է նշել, որ ՀՀ-ում գյուղացիական տնտեսությունների ընդհանուր քանակը հայտնի է[1], սակայն սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվող ցուցանիշների ստանդարտ շեղումները՝ ոչ (մինչև հարցման իրականացումը), քանի որ նման հարցում իրականացվել է առաջին անգամ: Հարցման համար ընտրանքը ձևավորվել է այնպես, որ դրանում գյուղացիական տնտեսությունները բավարար ներկայացուցչություն ունենան (աղյուսակ 1): Հաշվի առնելով տնտեսություններում գյուղատնտեսական վարկերի նկատմամբ պահանջարկի անհավասարաչափ բաշխումը՝ ընտրանքը ձևավորելիս կատարվել է ենթադրություն, որ գլխավոր համակցության համապատասխան ցուցանիշի (վարկի պահանջարկ) վարիացիայի գործակիցը կլինի բավականին բարձր՝ 60%: Ընտրանքի մեծությունը հաշվարկվել է՝ կիրառելով մաթվիճակագրության մեջ հայտնի հետևյալ բանաձևը.

$$n = \frac{Nv^2t^2}{(N-1)\Delta_x^2 + v^2t^2} \quad (1)$$

որտեղ՝

v -ն գլխավոր համակցության ուսումնասիրվող ցուցանիշի վարիացիայի գործակիցն է, %,

t –ն՝ ընտրված t չափանիշի մեծությունը,

Δ_x –ը՝ գլխավոր համակցության ուսումնասիրվող ցուցանիշի սխալի հարաբերական մեծությունը (սխալի մեծությունը հարաբերած գլխավոր համակցության միջինին), %:

Այսպիսով, կիրառելով վերոհիշյալ բանաձևը՝ որոշվել է ընտրանքի ընդհանուր նախնական չափն այնպես, որ ընտրանքի և գլխավոր համակցության ուսումնասիրվող ցուցանիշների միջև սխալը 95% հավանականությամբ չգերազանցի 3-4% սահմանը: Կիրառելով բանաձև **(1)**-ը՝ ընտրանքի անհրաժեշտ չափը ստացվել է շուրջ 600 գյուղացիական տնտեսություն: Հարցմանը մասնակցել է 635 գյուղացիական տնտեսություն:

Ներկայացուցչականությունն ապահովող ընտրանքի չափը որոշելուց հետո իրականացվել է համապատասխան մարզերի ընտրությունը: Ընտրանքի ձևավորումը կատարվել է այնպես, որ հնարավորինս ապահովվեն գլխավոր համակցության (գյուղացիական տնտեսությունների) տեղաբաշխման համամասնությունները: Այս սկզբունքով ըստ բնակավայրերի ընտրանքը ձևավորելուց հետո, հարցվողների ընտրությունն իրականացվել է պատահական ձևով:

Հարցմանը մասնակցած 635 գյուղացիական տնտեսություններն ըստ հանրապետության ընտրված մարզերի ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ընտրանքի բաշխումն ըստ ՀՀ մարզերի

Մարզ	Հարցվողների քանակ	Հարցվողների տեսակարար կշիռ	Գյուղացիական տնտեսությունների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ
Արագածոտն	92	12.5%	11.0%
Արարատ	74	11.7%	15.7%
Արմավիր	40	11.3%	14.9%
Գեղարքունիք	85	13.4%	15.2%
Լոռի	67	10.6%	9.6%
Կոտայք	78	12.3%	11.1%
Շիրակ	86	10.5%	8.3%
Սյունիք	36	5.7%	3.8%
Վայոց ձոր	26	4.1%	3.8%
Տավուշ	51	8.0%	6.5%
Ընդամենը	**635**	**100.0%**	**100.0%**

Այսպիսով, յուրաքանչյուր մարզից ընտրանքում ընդգրկվող գյուղերի քանակը հաշվարկելուց հետո որոշվել է այն գյուղերի ցանկը, որոնք պետք է մասնակցեն հարցմանը: Այդ գյուղերի ցանկը որոշելու համար օգտագործվել է գյուղերի բնակչության ցուցանիշը, և ընտրվել են թվով ամենաշատ բնակչություն ունեցող գյուղերը: Գյուղերի ընտրությունը կատարելուց հետո, պահպանելով «մարզի յուրաքանչյուր գյու-

[1] *Գյուղացիական տնտեսությունների ընդհանուր քանակի վերաբերյալ (338027) տեղեկատվությունը տրամադրվել է Ազգային վիճակագրական ծառայության կողմից (2004թ.):*

ղում միջինը 8 գյուղացիական տնտեսություն» սկզբունքը, իրականացվել է յուրաքանչյուր մարզում հետազոտվող գյուղացիական տնտեսությունների տեղաբաշխումը ըստ ընտրված գյուղերի՝ հաշվի առնելով տվյալ գյուղի բնակչության թվաքանակը:

2.2. Հարցման իրականացման մեթոդաբանությունը

Հարցման հիմնական նպատակը ՀՀ-ում գյուղատնտեսական վարկերի իրական պահանջարկի մեծության գնահատումն է: Քանի որ այս աշխատանքի նպատակը վարկերի իրական պահանջարկի գնահատումն է, ուստի արդյունքների ամփոփման ժամանակ անհրաժեշտ է ոչ միայն հաշվի առնել հարցվողների կողմից վարկի ցանկալի ծավալի վերաբերյալ հարցին տրված պատասխանները, այլ նաև վարկառուի վարկարժանությունը, ինչպես նաև վարկի ստացման համար անհրաժեշտ գրավի առկայությունը (բանկերի կողմից ընդունելի գրավի):

Հարկ է նշել, որ վարկի իրական պահանջարկն առավել իրատեսական գնահատելու նպատակով ԿԲ վիճակագրության վարչության և Հայգյուղփոխբանկի ղեկավար վարկային մասնագետների միջև կազմակերպվել են հանդիպումներ, որի ընթացքում փոխհամաձայնեցված մոտեցումները հաշվի են առնվել վարկի պահանջարկը գնահատելիս:

Այսպիսով, գյուղացիական տնտեսության վարկարժանության գնահատման նպատակով հարցաթերթիկում ներառվել են գյուղացիական տնտեսության եկամուտների և ծախսերի վերաբերյալ հարցեր (կանխիկ հոսքերի գնահատման նպատակով), որոնց միջոցով էլ փորձ է արվել գնահատել յուրաքանչյուր տնտեսության գործունեության շահութաբերության մակարդակը: Հնարավորության դեպքում գնահատվել են ընթացիկ տարվա ֆինանսական արդյունքները, սակայն այն դեպքերում, երբ գյուղատնտեսական արտադրանքը դեռևս չէր ստացվել, և բերքի ծավալները կամ դրա իրացման գները բավարար ճշգրտությամբ հնարավոր չէր գնահատել, գնահատվել են նախորդ տարվա ֆինանսական արդյունքները: Նշենք նաև, որ հասույթի գնահատման ժամանակ հաշվի են առնվել միայն արտադրանքի իրացումից ստացված միջոցները: Դա նշանակում է, որ արտադրանքի այն մասը, որն ուղղվել է անձնական սպառմանը կամ էլ կուտակմանը, չի ներառվել հասույթի հաշվարկներում, քանի որ իրացված հասույթն է վարկի մարման համար ապահովում անհրաժեշտ դրամական միջոցներ:

Հաշվի առնելով բանկերի պրակտիկան՝ որպես շահութաբերության նվազագույն սահման է ընդունվել 40%-ը, այսինքն՝ գյուղատնտեսական վարկերի իրական պահանջարկի մեծության գնահատման ժամանակ իրատեսական է համարվել միայն այն գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված վարկային պահանջարկը, որոնց գյուղատնտեսական գործունեության շահութաբերությունը մեծ է կամ հավասար 40%-ի:

Կախված վարկի ցանկալի ժամկետայնությունից՝ դրանք բաժանվել են երկու խմբի՝

1. վարկեր, որոնց ժամկետայնությունը չի գերազանցում 2 տարին,
2. վարկեր, որոնց ժամկետայնությունը 2 տարուց ավելի է:

Նման տարանջատման պատճառն այն է, որ հարցաթերթիկների արդյունքների ամփոփման, ինչպես նաև այս ոլորտի փորձագետների հետ իրականացված քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ 2 տարին չգերազանցող վարկերը հիմնականում նախատեսված են գյուղացիական տնտեսությունների ընթացիկ ծախսերը ֆինանսավորելու, իսկ ավել ժամկետայնությամբ վարկերը՝ հիմնականում ընդլայնված վերարտադրության համար (գոմի շինարարություն, նոր հողատարածքների մշակում): Նշված ժամկետայնություններից յուրաքանչյուրի համար վարկերի պահանջարկը գնահատվել է առանձին-առանձին, և, բացի այդ, տարբեր մոտեցումներ են կիրառվել տրամադրվելիք վարկի առավելագույն մեծության սահմանման ժամանակ:

Այսպես՝ 2 տարի և պակաս ժամկետայնությամբ վարկերի համար, նույնիսկ եթե տնտեսությունն ունի շահութաբերության բավարար մակարդակ, որպես վարկի իրական պահանջարկի մեծություն վերցվել է ոչ թե հարցվողի կողմից ներկայացված մեծությունը, այլ այդ մեծության և ընթացիկ (կամ նախորդ) տարվա արդյունքում ստացված հասույթի մեծություններից նվազագույնը: Այստեղ այն ենթադրությունն է կատարվել, որ մինչև 2 տարի ժամկետայնությամբ վարկեր տրամադրվում են գյուղացիական տնտեսությունների ընթացիկ ծախսերը ֆինանսավորելու համար, այսինքն՝ պարզ վերարտադրություն ապահովելու համար: Մինչդեռ, 2 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի համար որպես տրամադրվելիք վարկի առավելագույն գումար է ընդունվել ընթացիկ (կամ նախորդ) տարվա ընթացքում գյուղացիական տնտեսության կողմից ստացված շահույթի և վարկի տրամադրման տարիների քանակի արտադրյալի մեծությունը: Այստեղ կատարվել է այն ենթադրությունը, որ 2 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկեր տրամադրվում են հիմնականում նոր տնտեսությունների հիմնադրման (օրինակ՝ լրացուցիչ հողատարած-

քում նոր ծառեր տնկելու, խաղողի այգի հիմնելու կամ անասնագոմ կառուցելու համար), այսինքն՝ ընդլայնված վերարտադրության համար: Բնականաբար, նոր տնտեսության կողմից վարկի մարում դեռ մի քանի տարի չի կարող իրականացվել, քանի որ հասույթը բացակայում է: Այդ պատճառով, մինչև նոր տնտեսությունում հասույթների առաջացումը, վարկը պետք է մարվի հին տնտեսության շահույթի հաշվին: Հարկ է նշել, որ նման ենթադրությունները ձևավորվել են գյուղացիական տնտեսությունների հետ կատարված քննարկումների հիման վրա:

Ներկայումս ՀՀ առևտրային բանկերը որպես գյուղատնտեսական վարկերի ապահովման միջոց հիմնականում վերցնում են ավտոմեքենաներ և գյուղտեխնիկա: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ հաշվարկվել է վարկերի իրական պահանջարկը սահմանափակող մեկ այլ գնահատական ևս, որտեղ վարկի տրամադրման պարտադիր նախապայմաններին ավելացել է ավտոմեքենայի կամ գյուղտեխնիկայի առկայությունը: Այս տեղեկատվությունն առկա է լրացված հարցաթերթիկներում: Գրավադրվող ավտոմեքենայի կամ գյուղտեխնիկայի շուկայական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացակայության պայմաններում, փորձագիտական գնահատականների հիման վրա որպես դրանց միջին գին է ընդունվել 2 մլն ՀՀ դրամը: Նշենք սակայն, որ գյուղացիական տնտեսությունների գերակշիռ մասը պատրաստակամություն էր հայտնում վարկավորման դեպքում գրավադրել ինչպես իրենց հողատարածքները, այնպես էլ առանձնատները:

Տվյալների ամփոփման ընթացքում պարզ դարձավ, որ վարկերի իրական պահանջարկի թվային շարքերն ունեն ոչ թե նորմալ, այլ լոգարիթմական նորմալ բաշխում: Այդ իսկ պատճառով, թվային շարքերը նախ և առաջ լոգարիթմվել են, հաշվարկվել են դրանց միջին ցուցանիշները, այնուհետև հետ են բերվել բացարձակ միավորների: Նման մեթոդաբանությամբ ստացվել են գյուղատնտեսական վարկավորման ծավալները ողջ հանրապետության համար, իսկ այնուհետև, համախառն գյուղատնտեսական արտադրանքի ծավալում յուրաքանչյուր մարզի տեսակարար կշիռների համաձայն, իրականացվել է ստացված ցուցանիշի բաշխում ըստ ՀՀ մարզերի:

Բացի այդ, հարցումների ընթացքում հնարավորության դեպքում գյուղապետերից կամ գյուղապետարանների ներկայացուցիչներից ստացվել են տվյալներ գյուղում բնակվող տնային տնտեսությունների քանակի պաշտոնական և փաստացի ցուցանիշների վերաբերյալ: Հետագայում իրականացվել է տվյալ տեղեկատվության ամփոփում մարզային մակարդակով, և ստացված ցուցանիշների հիման վրա էլ իրականացվել են ըստ մարզերի գյուղացիական տնտեսությունների թվաքանակի բաշխվածության վերաբերյալ պաշտոնական ցուցանիշների ճշգրտումներ:

2.3. Հետազոտության հարցաթերթիկների կառուցվածքը և լրացման առանձնահատկությունները

Հետազոտությունն իրականացվել է նախապես մշակված հարցաթերթիկի օգնությամբ, որը բաղկացած է երկու հիմնական մասից. առաջին մասի հիմնական նպատակն է գնահատել գյուղացիական տնտեսության ֆինանսական արդյունքները, որի հիման վրա էլ որոշվել է վարկերի իրական պահանջարկը, իսկ երկրորդ մասում ամփոփվել են վարկավորման գործընթացի վերաբերյալ գյուղացիական տնտեսությունների կարծիքները:

Այսպես՝ առաջին հատվածում, գյուղացիական տնտեսության վերաբերյալ մի քանի ընդհանուր տեղեկությունների հետ միասին (ընտանիքի անդամների քանակը, առկա գյուղտեխնիկան և հողատարածքի ընդհանուր մեծությունը), մանրամասն տեղեկատվություն է ներկայացվում գյուղացիական տնտեսության կողմից արտադրվող գյուղմթերքի յուրաքանչյուր տեսակի վերաբերյալ: Մասնավորապես՝ լրացվում են տվյալներ յուրաքանչյուր գյուղմթերքի արտադրությանը հատկացված հողատարածքի մեծության (անասնապահության դեպքում՝ անասունների գլխաքանակի), բերքատվության (մթերատվության), արտադրության ծավալի, իրացման ծավալի, կատարված ընդհանուր ծախսերի մեծության, ինչպես նաև գյուղմթերքի օգտագործման ուղղությունների (անձնական սպառում, կուտակում և իրացում) վերաբերյալ:

Հարցաթերթիկի երկրորդ մասում ներառված են հարցեր գյուղացիական տնտեսության կողմից արդեն ստացված վարկերի, վարկավորման գործընթացում առկա խոչընդոտների, ինչպես նաև տնտեսությանն անհրաժեշտ վարկային միջոցների մի շարք չափանիշների (ծավալը, ժամկետայնությունը, առավելագույն ընդունելի տոկոսադրույքը, առաջարկվող գրավը, ցանկալի արժույթը, ինչպես նաև վարկի օգտագործման ուղղությունները) վերաբերյալ:

Հարցաթերթիկը լրացվել է հարցազրուցավարի կողմից՝ գյուղացիների հետ անցկացված հարցազրույցի ընթացքում: Վիճակագրության վարչության աշխատակիցների կողմից հարցազրուցավարներին նախապես տրվել են հարցաթերթիկի լրացման սկզբունքների վերաբերյալ անհրաժեշտ հրահանգներ: Բացի այդ, հարցման ընթացքում յուրաքանչյուր շաբաթ կազմակերպվել են հանդիպումներ և քննարկվել հարցաթերթիկի լրացման ժամանակ ծագած խնդիրները և վերջիններիս լուծման ուղիները:

Մինչև հարցումների անցկացումը համապատասխան հարցաթերթիկները փորձարկվել են մի շարք գյուղերում: Փորձնական հարցման արդյունքում ի հայտ են բերվել հարցաթերթիկների որոշ թերություններ՝ մասնավորապես կապված մի քանի հարցերի ներկայացման ձևի, հնարավոր պատասխանների ձևակերպման, հարցաթերթիկի ձևաչափի հետ: Նշված բոլոր թերությունները հնարավորինս շտկվել են և հարցաթերթիկներում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Հարցաթերթիկների փորձարկումից հետո իրականացվել է նաև ստացված տեղեկատվության ամփոփում և նախնական վերլուծություն, որի ընթացքում բացահայտվել են այն հարցերը, որոնք առավել կարևորվում են ամփոփման տեսանկյունից:

3.ՀԱՐՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարցման ընթացքում ստացված տվյալների ամփոփման արդյունքում գյուղատնտեսական վարկերի պահանջարկի միանշանակ գնահատական չի ստացվել: Գնահատվել են վարկի պահանջարկի մի քանի այլընտրանքային ցուցանիշներ, որոնք միմյանցից տարբերվում են վարկի ապահովվածության աստիճանով: Բացի այդ, յուրաքանչյուր դեպքում առանձին հաշվարկվել են 2 տարի և պակաս ժամկետայնությամբ և 2 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի պահանջարկները:

Աղյուսակ 2-ում ներկայացված գյուղատնտեսական վարկերի պահանջարկը ստացվել է առավել մեղմ մոտեցման կիրառման արդյունքում, այսինքն՝ այստեղ արտացոլվել է գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված պահանջարկը՝ առանց հիմնավորման: Այս դեպքում պարզապես ամփոփվել են հարցվողների կողմից գյուղատնտեսական վարկավորման ցանկալի ծավալի վերաբերյալ հարցին տրված պատասխանների արդյունքները՝ առանց հաշվի առնելու գյուղացիական տնտեսությունների շահութաբերությունը և գրավի առկայությունը:

Ինչպես երևում է աղյուսակից, գյուղատնտեսական վարկերի պահանջարկը բավականին մեծ է՝ շուրջ 210 մլրդ ՀՀ դրամ, որից շուրջ 60 մլրդ-ն կազմում են կարճաժամկետ վարկերը:

Մինչդեռ 2005թ. օգոստոսի վերջի դրությամբ ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված գյուղատնտեսական վարկերի ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 11.6 մլրդ դրամ: Դա նշանակում է, որ այս ձևով գնահատված վարկերի պահանջարկի դեպքում ներկայումս բավարարված է վարկերի ընդհանուր պահանջարկի շուրջ 5%-ը, իսկ կարճաժամկետ վարկերի՝ շուրջ 20%-ը:

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական վարկերի պահանջարկը՝ըստ գյուղացիական տնտեսությունների ներկայացրած պահանջարկի (մեղմ մոտեցում)

մլն ՀՀ դրամ

Մարզ	2 տարի և պակաս	2 տարի և ավելի	Ընդամենը
Արագածոտն	4374	11591	15964
Արարատ	7535	19968	27503
Արմավիր	8733	23143	31876
Գեղարքունիք	8531	22607	31138
Լոռի	6337	16793	23130
Կոտայք	5326	14115	19442
Շիրակ	5803	15378	21180
Սյունիք	5687	15072	20759
Վայոց ձոր	2656	7039	9695
Տավուշ	3392	8989	12382
Ընդամենը	58374	154695	213069

Աղյուսակ 3-ում ներկայացված են գյուղատնտեսական վարկերի պահանջարկի ավելի իրատեսական գնահատված ցուցանիշներ: Այսինքն՝ այստեղ որպես վարկերի բավարարման նախապայման է ընդունված ընթացիկ (կամ նախորդ) տարվա ֆինանսական արդյունքներով առնվազն 40% շահութաբերության ապահովումը: Բացի այդ, սահմանված են վարկերի բավարարման առավելագույն սահմաններ. 2 տարի և պակաս ժամկետայնությամբ վարկերի համար ընթացիկ (կամ նախորդ) տարում ստացված հասույթի, իսկ 2 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի համար՝ ընթացիկ (կամ նախորդ) տարվա ընթացքում ստացված շահույթի և վարկի տրամադրման տարիների քանակի արտադրյալի մեծության չափով:

Այսպիսի մոտեցման դեպքում վարկերի ընդհանուր պահանջարկը, նախորդ մոտեցման համեմատ, կրճատվում է շուրջ 3 անգամ՝ հասնելով 70 մլրդ ՀՀ դրամի, որից 25 մլրդ-ն կազմում է կարճաժամկետ վարկերի պահանջարկը:

Գյուղատնտեսական վարկերի առկա ծավալների համեմատությունից պարզվում է, որ ներկայումս բավարարված է վարկերի ընդհանուր պահանջարկի շուրջ 17%-ը, իսկ կարճաժամկետ վարկերի՝ շուրջ 46%-ը:

Աղյուսակ 3. Գյուղատնտեսական վարկերի պահանջարկը՝ հաշվի առնելով տնտեսությունների եկամտաբերության մակարդակը (միջին խստության մոտեցում)

մլն ՀՀ դրամ

Մարզ	2 տարի և պակաս	2 տարի և ավելի	Ընդամենը
Արագածոտն	1884	3357	5241
Արարատ	3246	5784	9030
Արմավիր	3762	6704	10466
Գեղարքունիք	3675	6549	10223
Լոռի	2730	4864	7594
Կոտայք	2294	4089	6383
Շիրակ	2500	4454	6954
Սյունիք	2450	4366	6816
Վայոց ձոր	1144	2039	3183
Տավուշ	1461	2604	4065
Ընդամենը	25145	44809	69955

Աղյուսակ 4-ում ներկայացված տվյալների ստացման ժամանակ ներդրվել է վարկերի պահանջարկի բավարարման ևս մեկ լրացուցիչ նախապայման՝ որպես գրավ ավտոմեքենայի կամ գյուղտեխնիկայի առկայությունը: Այսինքն՝ այս դեպքում ամփոփվել է միայն այն գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված գյուղատնտեսական վարկերի պահանջարկը, որոնք բավարարում են նախորդ աղյուսակում ներկայացված վարկերի պայմաններին և ունեն նաև ավտոմեքենա կամ գյուղտեխնիկա: Ընդ որում, գյուղացիական տնտեսությունների հետ իրականացված քննարկումների արդյունքների հիման վրա անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի դիմաց տրամադրվող վարկի առավելագույն գումարը ընդունվել է 2 մլն ՀՀ դրամ:

Այսպիսի մոտեցման դեպքում վարկերի ընդհանուր իրական պահանջարկը կրճատվում է ավելի քան կրկնակի՝ հասնելով 32 մլրդ ՀՀ դրամի, իսկ կարճաժամկետ վարկերինը՝ 11 մլրդ-ի: Փաստորեն, այս մեթոդով հաշվարկված կարճաժամկետ գյուղատնտեսական վարկերի պահանջարկը ներկայումս ամբողջովին բավարարված է առևտրային բանկերի կողմից: Դա նշանակում է, որ վարկավորման նմանատիպ պայմանների պահպանման դեպքում գյուղատնտեսական վարկերի ծավալների ավելացում գրեթե հնարավոր չէ: Այսինքն՝ ներկայումս գոյություն ունի գյուղատնտեսական վարկերի ծավալի ավելացման երկու հիմնական ճանապարհ՝

- տրամադրվող վարկերի ժամկետայնության ավելացում,
- որպես գրավ ընդունվող առարկաների անվանացանկի ընդլայնում:

Աղյուսակ 4. Գյուղատնտեսական վարկերի պահանջարկը՝ հաշվի առնելով տնտեսությունների եկամտաբերության մակարդակը և գրավի առկայությունը (խիստ մոտեցում)

մլն ՀՀ դրամ

Մարզ	2 տարի և պակաս	2 տարի և ավելի	Ընդամենը
Արագածոտն	811	1565	2376
Արարատ	1397	2697	4094
Արմավիր	1619	3126	4745
Գեղարքունիք	1582	3053	4635
Լոռի	1175	2268	3443
Կոտայք	987	1906	2894
Շիրակ	1076	2077	3153
Սյունիք	1054	2036	3090
Վայոց ձոր	492	951	1443
Տավուշ	629	1214	1843
Ընդամենը	10822	20893	31715

Այսպիսով, ամփոփելով արդյունքները, եզրակացնում ենք, որ միջին խստությամբ գնահատված վարկերի պահանջարկը կազմում է տրամադրված վարկերի 18.3%, իսկ խիստ մոտեցմամբ գնահատված վարկերի պահանջարկը կազմում է 40.4%: Ընդ որում, խիստ մոտեցմամբ գնահատված կարճաժամկետ (2 տարի և պակաս) վարկերի պահանջարկը ներկայումս բավարարված է ամբողջությամբ, իսկ միջին խստությամբ գնահատված կարճաժամկետ վարկերի պահանջարկը բավարարված է կիսով չափ: Այս արդյունքներն մանրամասն արտացոլված են ստորև ներկայացված աղյուսակում, որտեղ տրված են նաև տվյալներ վարկերի միջին ծավալի վերաբերյալ:

Աղյուսակ 5. Գյուղատնտեսական վարկերի պահանջարկը

	Միջին խստության մոտեցում			Խիստ մոտեցում			Փաստացի
	2 տարի և պակաս	2 տարուց ավելի	ընդամենը	2 տարի և պակաս	2 տարուց ավելի	ընդամենը	
Վարկի պահանջարկ *(մլն դրամ)*	21144	44809	69955	10822	20893	31715	12813
Վարկի միջին ծավալ *(հազար դրամ)*	500.2	1284.8	736.1	712.6	1246.7	780.4	846.3
Պահանջարկի փաստացի բավարարվածության աստիճան *(%)*	51.5	4.3	18.3	100.6	9.2	40.4	

4. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐՎԱԾ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Գյուղացիական տնտեսությունների փաստացի քանակի վերաբերյալ գյուղապետերի շրջանում իրականացված հարցման արդյունքում պարզվել է, որ հանրապետության մասշտաբով ներկայումս գյուղերում բնակվում է գյուղացիական տնտեսությունների պաշտոնական թվաքանակի 85.1%-ը (աղյուսակ 5): Ըստ մարզերի ամենացածր ցուցանիշը գրանցվել է Լոռվա մարզում (71.2%), իսկ ամենաբարձրը՝ Կոտայքի մարզում (94.0%):

Աղյուսակ 6. Գյուղերում փաստացի առկա գյուղացիական տնտեսությունների տեսակարար կշիռը (%)

Մարզ	Կշիռ
Արագածոտն	90.9%
Արարատ	88.3%
Արմավիր	81.2%
Գեղարքունիք	78.0%
Լոռի	71.2%
Կոտայք	94.0%
Շիրակ	87.8%
Սյունիք	86.9%
Վայոց ձոր	91.6%
Տավուշ	89.6%
Ընդամենը	85.1%

2. Այն հարցին, թե ինչ արժույթով կցանկանային վարկ ստանալ, հարցվողների 88.2%-ը պատասխանել է, որ նախընտրում է ՀՀ դրամը և միայն 8.2%-ն է նախընտրել ԱՄՆ դոլարը:

Աղյուսակ 7. Վարկի նախընտրելի արժույթը

Արժույթը	Կշիռը
ՀՀ դրամ	88.2%
ԱՄՆ դոլար	8.2%
Եվրո	0.2%
միևնույն է	3.4%

Որպես ՀՀ դրամին նախապատվություն տալու հիմնական պատճառ նշվել է դրամի փոխարժեքի կայունությունը (61.1%), ՀՀ դրամի նկատմամբ վստահությունը (13.2%), առևտուրը ՀՀ դրամով կատարելու հանգամանքը (18.4%): Այն հարցվողները, ովքեր նախընտրել են վարկ ստանալ ԱՄՆ դոլարով, հաճախ կամ ընդհանրապես որևէ պատճառ չեն մատնանշել կամ էլ նշել են ոչ այնքան տրամաբանված

պատասխաններ: Սակայն, օգոստոսի վերջի դրությամբ գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի ընդամենը 30.1%-ն է արտահայտված ՀՀ դրամով, ինչը հակասում է հարցման արդյունքներին կամ էլ կարող է վկայել այն մասին, որ բանկերը, չնայած բնակչության՝ դրամով վարկերի պահանջարկին, այնուհանդերձ, նախընտրում են վարկերը հիմնականում տրամադրել արտարժույթով:

Աղյուսակ 8. Վարկի տրամադրման արժույթի ընտրության պատճառները

Նախընտրության պատճառ	Արժույթ	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Փոխարժեքը կայուն է	*61.1 %*	*14.7 %*
Վստահելի է	*13.2 %*	*17.6 %*
Առևտուրը տվյալ արժույթով է	*18.4 %*	*16.6 %*
Դրամը մեր ազգային արժույթն է	*3.3 %*	-
Տոկոսադրույքներն ավելի ցածր են	-	*8.8 %*
Այլ	*4.0 %*	*41.3 %*
Ընդամենը	**100%**	**100%**

3. Աղյուսակ 8-ում բերված են վարկերի տոկոսադրույքների առավելագույն ընդունելի մակարդակներն ըստ միջակայքերի: Պատասխանները կշռվել են ինչպես պատասխանների քանակով, այնպես էլ հարցվողների կողմից գյուղատնտեսական վարկերի նկատմամբ ներկայացված պահանջարկի ծավալներով: Ընդ որում, որպես վարկի պահանջարկ պարզապես վերցվել են գյուղացիների կողմից տրված մեծությունները՝ առանց հաշվի առնելու վերջիններիս վարկունակությունը և գրավի առկայությունը:

Աղյուսակ 9. Վարկի տոկոսադրույքի առավելագույն ընդունելի մակարդակները (%)

Տեսակարար կշիռ՝ կշռված	մինչև 9	9-12	12-15	15-18	18-21	21-24	24-ից ավել	
ըստ պահանջվող վարկի ծավալների	0.9	43.6	11.7	11.3	18.5	13.0	1.0	100
ըստ պատասխանների քանակի	1.0	32.6	14.4	27.0	10.2	13.1	1.7	100

Ըստ աղյուսակի տվյալների՝ առավել մեծ տեսակարար կշիռ է կազմում 9-12% տոկոսադրույքով վարկերի պահանջարկը, սակայն քիչ չէ նաև ավելի բարձր տոկոսադրույքներով վարկերի պահանջարկը: Նշենք նաև, որ ներկայումս Հայգյուղփոխբանկի կողմից տրամադրվող գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքները կազմում են 16-24%՝ կախված տարածաշրջանից:

4. Աղյուսակ 9-ում ըստ մարզերի ներկայացված են հարցվող գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական վարկերի ստացման նպատակով տրված դիմումների քանակը և դրանց բավարարման մակարդակը: Հանրապետության տարածքում հարցված 635 տնտեսությունների կողմից ընդհանուր առմամբ ներկայացվել է գյուղատնտեսական վարկի ստացման 487 դիմում, որից բավարարվել է 362-ը կամ դիմումների 74.3%-ը:

Աղյուսակ 10. Գյուղատնտեսական վարկերի ստացման նպատակով տրված դիմումների քանակը և դրանց բավարարման մակարդակը

Մարզեր	Հարցվողների քանակ	Դիմումների քանակ	Բավարարված դիմումների քանակ	Բավարարված դիմումների կշիռ (%)
Արագածոտն	92	115	81	70.4 %
Արարատ	74	62	51	82.3 %
Արմավիր	40	54	41	75.9 %
Գեղարքունիք	85	47	31	66.0 %
Լոռի	67	38	34	89.5 %
Կոտայք	78	30	27	90.0 %
Շիրակ	86	71	44	62.0 %
Սյունիք	36	27	22	81.5 %
Վայոց ձոր	26	5	4	80.0 %
Տավուշ	51	38	27	71.1 %
Ընդամենը	**635**	**487**	**362**	**74.3 %**

Դիմումների բավարարման առավելագույն մակարդակը գրանցվել է Կոտայքի մարզում (90.0 %), իսկ Շիրակի մարզում բավարարված դիմումների մակարդակը ամենացածրն է՝ (62.0 %): Որպես դիմումների մերժման հիմնական պատճառ հարցվողների գերակշիռ մասը (76.7%) նշել է գրավի հետ կապված խնդիրները:

5. Աղյուսակ 10-ում ամփոփված են գյուղատնտեսական վարկավորման գործընթացում առկա խոչընդոտների վերաբերյալ հարցին տրված պատասխանները: Որպես գյուղատնտեսական վարկավորման զարգացմանը խոչընդոտող հիմնական պատճառներ հարցվողները մատնանշել են գյուղատնտեսությանը բնորոշ ռիսկի բարձր մակարդակը, բանկերի կողմից ընդունելի գրավի բացակայությունը կամ ոչ բավարար ծավալները, բարձր տոկոսադրույքները և վարկի ստացման գործընթացում առկա բյուրոկրատական քաշքշուկները:

Աղյուսակ 11. Գյուղատնտեսական վարկավորման գործընթացում առկա խոչընդոտները

Խոչընդոտներ	Պատասխանների քանակ	Պատասխանների կշիռ (%)
Ռիսկ	82	30.6
Գրավի բացակայություն	75	28.0
Բարձր տոկոսադրույք	40	14.9
Քաշքշուկ	27	10.1
Կարճ ժամկետներ	15	5.6
Մուծումների մեծ քանակ	6	2.2
Կաշառքի պահանջ	5	1.9
Ոչ բավարար ծավալներ	4	1.5
Այլ	14	5.2
Ընդամենը	**268**	**100.0**

6. Գյուղացիական տնտեսությունների 40.9%-ի կողմից պահանջվող վարկի ծավալը չի գերազանցում 500 հազ. դրամը՝ կազմում է վարկային պահանջարկի ընդամենը 4.9%-ը (աղյուսակ 11): Միևնույն ժամանակ, 40 մլն դրամ և ավելի վարկ ցանկացողները չնայած կազմում են պահանջարկ ներկայացրածների 1.4%-ը, սակայն նրանց կողմից պահանջվող վարկերի գումարը կազմում է ընդհանուր վարկային պահանջարկի ավելի քան 35%-ը:

Աղյուսակ 12. Պահանջվող վարկի ծավալը (մլն դրամ)

Պահանջվող վարկի ծավալ	Կշռված ըստ պատասխանների քանակի	Կշռված ըստ պահանջվող վարկի ծավալների
0.5 և պակաս	40.9%	4.9%
0.5-ից 2	27.6%	10.8%
2-ից 5	23.6%	25.8%
5-ից 40	6.5%	23.3%
40 և ավել	1.4%	35.2%
Ընդամենը	**100.0%**	**100.0%**

Նշենք նաև, որ որպես վարկի պահանջարկ են ընդունվել գյուղացիների կողմից ներկայացված մեծությունները՝ առանց հաշվի առնելու վերջիններիս վարկունակությունը և գրավի առկայությունը:

7. Պահանջվող վարկերի ժամկետայնությանը վերաբերող տվյալները ներկայացված են աղյուսակ 12-ում: Այսպես՝ հարցվողների 32.5%-ը ցանկություն է հայտնել ստանալ մեկ տարի և պակաս ժամկետայնություն ունեցող գյուղատնտեսական վարկ: Սրանք հիմնականում նախատեսված են գյուղացիական տնտեսության ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար, և տրամաբանական է, որ դրանց ծավալները համեմատաբար փոքր են և կազմում են ընդհանուր վարկային պահանջարկի ընդամենը 9.3%-ը: Մինչդեռ միջինժամկետ և երկարաժամկետ վարկերի մեջ գերակշիռ մաս են կազմում այնպիսի վարկերը, որոնք նպատակաուղղվելու են գոյություն ունեցող տնտեսության ընդլայնմանը, նոր տնտեսության հիմնադրմանը (հիմնականում խաղողի և այլ մրգերի այգիների հիմնում), ինչպես նաև հիմնական միջոցների ձեռքբերմանը (գոմի շինարարություն, գյուղտեխնիկայի գնում):

Համաձայն բանկերի վարկային ներդրումների վերաբերյալ թիվ 6 հաշվետվության՝ սույն թվականի օգոստոսի վերջի դրությամբ գյուղատնտեսության ճյուղին տրամադրված վարկերի ծավալի շուրջ 33%-ի ժամկետայնությունը փոքր է 1 տարուց:

Աղյուսակ 12-ի վերջին սյունակում ներկայացված է հոկտեմբերի վերջի դրությամբ գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի ժամկետային բաշխվածության վերաբերյալ վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվությունը: Սակայն վարկային ռեգիստրի տվյալները վերաբերում են միայն 1.5 մլն և ավելի ծավալով վարկերին, որոնք կազմում են ընդհանուր գյուղատնտեսական վարկային ներդրումների 60%-ը:

Աղյուսակ 13. Պահանջվող վարկերի ժամկետայնությունը

Ժամկետ	Կշռված ըստ պատասխանների քանակի	Կշռված ըստ պահանջվող վարկի ծավալների	Կշռված ըստ վարկերի փաստացի ծավալների
1 տարի և պակաս	32.5%	9.3%	18.0%
1-ից 2 տարի	35.7%	43.1%	56.4%
2-ից 5 տարի	22.2%	22.1%	19.7%
5 տարուց ավելի	9.6%	25.5%	5.9%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%

8. Հարցման արդյունքներից պարզվեց, որ վարկի պահանջարկ ունեցողների գերակշիռ մասը (64.1%) նպատակ ունի վարկային միջոցներն ուղղել անասնապահության ոլորտ, ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուր տասներորդը մտադիր է իրականացնել նաև գոմի շինարարություն:

Աղյուսակ 14. Պահանջվող վարկերի օգտագործման հիմնական ուղղությունները

Վարկի օգտագործման ուղղությունները	Կշռված ըստ պատասխանների քանակի
Անասնապահություն	64.1%
որից՝ գոմի կառուցում	6.0%
Հողագործություն	35.9%
որից՝ գյուղտեխնիկայի ձեռքբերում	3.2%
Ընդամենը	100.0%

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկերի գյուղատնտեսական վարկավորման պայմաններն ավելի շատ մոտ են մեր կողմից կիրառված «խիստ» մոտեցմանը, հարցման արդյունքներից կարելի է ենթադրել, որ կարճաժամկետ գյուղատնտեսական վարկերի պահանջարկը հիմնականում բավարարված է առևտրային բանկերի կողմից: Դա նշանակում է, որ վարկավորման նմանատիպ պայմանների պահպանման դեպքում գյուղատնտեսական վարկերի ծավալների ավելացում արդեն գրեթե հնարավոր չէ: Այսինքն՝ ներկայումս գոյություն ունի գյուղատնտեսական վարկերի ծավալի ավելացման երկու հիմնական ճանապարհ՝

- տրամադրվող վարկերի ժամկետայնության ավելացում,
- գրավի պայմանների թեթևացում:

Հարցման արդյունքներից նաև եզրակացնում ենք, որ թեև օգոստոսի վերջի դրությամբ գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի 30%-ը կազմում են դրամային վարկերը, այնուհանդերձ հարցմանը մասնակցած գյուղացիական տնտեսությունների 88%-ը հակված է վարկը ստանալ դրամով և որպես դրամային վարկերի նախընտրության պատճառ մեծամասամբ նշում է դրամի փոխարժեքի կայունությունը:

Ըստ հարցման արդյունքների՝ գյուղացիական տնտեսությունների համար վարկի առավելագույն ընդունելի տոկոսադրույքը 9-12%-է, մինչդեռ Հայգյուղփոխբանկի կողմից տրամադրվող գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքները ներկայումս կազմում են 16-24%:

Գյուղացիական տնտեսությունները հիմնականում ունեն փոքրածավալ վարկերի պահանջարկ: Այսպես. գյուղացիական տնտեսությունների մոտ 40%-ի վարկի նկատմամբ պահանջարկը չի գերազանցում 500 հազար դրամը: Միևնույն ժամանակ, 40 մլն դրամի և ավելի վարկ ցանկացողները չնայած կազմում են պահանջարկ ներկայացրածների 1.4%-ը, սակայն նրանց կողմից պահանջվող վարկերի գումարը կազմում է ընդհանուր վարկային պահանջարկի ավելի քան 35%-ը:

Ինչ վերաբերում է պահանջվող վարկերի ժամկետայնությանը, ապա գյուղացիական տնտեսություններն առավել հակված են վարկեր վերցնել 1-ից 2 տարի ժամկետայնությամբ:

Գյուղատնտեսական վարկավորման զարգացմանը խոչընդոտող հիմնական պատճառներ են՝ գյուղատնտեսությանը բնորոշ ռիսկի բարձր մակարդակը, բանկերի կողմից ընդունելի գրավի բացակայությունը կամ ոչ բավարար ծավալները, բարձր տոկոսադրույքները և վարկի ստացման գործընթացում առկա բյուրոկրատական քաշքշուկները:

ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005 Թ. ՕԳՈՍՏՈՍ)

Վիճակագրության վարչություն
Տնտեսական վիճակագրության զարգացման բաժին

Հաշվի առնելով ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 02.16.2005թ. թիվ 67 Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության կողմից իրականացվող հարցումների հայեցակարգի դրույթները՝ 2005թ. օգոստոսին իրականացվել են տնային տնտեսությունների, բանկերի, վարկային կազմակերպությունների և ոչ ֆինանսական կազմակերպությունների հարցումներ:

Ոչ ֆինանսական կազմակերպությունների հարցումներ

Հարցման մեջ ընդգրկվել են 447 կազմակերպություններ, որոնցից հարցմանը մասնակցել են 361-ը (ընտրանքում ընդգրկվածների 80.8%-ը): Վերջիններիս բաշխվածությունը ըստ տնտեսության ճյուղերի ունի հետևյալ կառուցվածքը.

Աղյուսակ 1

Տնտեսության ճյուղեր	Կազմակերպությունների քանակ
Արդյունաբերություն	134
Շինարարություն	28
Առևտուր	120
Այլ ծառայություններ	79
Ընդամենը	**361**

Հետազոտված կազմակերպություններում արտադրական հզորությունների օգտագործման բաշխվածությունը ըստ ճյուղերի ընթացիկ և գալիք ժամանակահատվածներում ունի հետևյալ տեսքը[1].

Աղյուսակ 2

Տնտեսության ճյուղեր	Ընթացիկ եռամսյակ	Գալիք եռամսյակ
Արդյունաբերություն	56.0	60.0
Շինարարություն	64.3	61.5
Առևտուր	82.1	86.3
Այլ ծառայություններ	80.8	84.3
Ընդամենը	**69.9**	**69.6**

Հարցումների արդյունքների հիման վրա հաշվարկվել են ՀՀ տնտեսության առանձին ճյուղերի և ընդհանուր տնտեսության գործարար միջավայրի և տնտեսական ակտիվության ինդեքսները: Գործարար միջավայրի ինդեքսը հաշվարկվել է ռիսկերի և ընդհանուր տնտեսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ կազմակերպությունների կողմից տրված գնահատականների հիման վրա: Յուրաքանչյուր հարցի համար հաշվարկվել են պատասխանների դիֆուզիոն ինդեքսներ[2], որոնց միջինացման արդյուն-

[1] *Արտադրական հզորությունների օգտագործման աստիճանի վերաբերյալ կազմակերպությունների գնահատականները կշռվել են աշխատողների թվաքանակով:*
[2] *Այստեղ դիֆուզիոն ինդեքսները հաշվարկվել են որպես դրական պատասխանների տեսակարար կշռի (արտահայտված տոկոսով) և չեզոք պատասխանների տեսակարար կշռի կեսի գումար:*

քում ստացվել է գործարար միջավայրի ինդեքսը: Տնտեսական ակտիվության ինդեքսը հաշվարկվել է թողարկման ծավալների, արտադրության պատվերների և պաշարների վերաբերյալ կազմակերպությունների սպասումների հիման վրա: Տնտեսության առանձին ճյուղերի համար հաշվարկված գործարար միջավայրի և տնտեսական ակտիվության ինդեքսների արժեքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Գործարար միջավայրի և տնտեսական ակտիվության ինդեքսների մեծությունները 2005թ. երկրորդ եռամսյակի համար

Տնտեսության ճյուղեր	Գործարար միջավայրի ինդեքսի պատասխանների հաշվեկշիռ	Գործարար միջավայրի ինդեքս	Տնտ. ակտիվության ինդեքսի պատասխանների հաշվեկշիռ	Տնտեսական ակտիվության ինդեքս
Արդյունաբերություն	60.6	97.1	55.6	77.1
Շինարարություն	56.9	105.8	65.1	102.8
Առևտուր	61.7	116.1	67.6	116.5
Ծառայություններ	59.2	105.9	66.9	92.1
Ընդամենը [3]	**59.7**	**104.3**	**62.7**	**92.0**


Ստորև ամփոփ ներկայացված են կազմակերպությունների կողմից հարցերին տրված պատասխանները: Պատասխանների հիման վրա կառուցվել են նաև խաչածև աղյուսակներ, որոնք ցույց են տալիս հարցերի փոխկապվածությունները:


1. Արդյունաբերություն

Աղյուսակ 4

Արդյունաբերական կազմակերպությունների եռամսյակային հարցման պատասխանների հաշվեկշիռները


Պատասխանների հաշվեկշիռները	2005թ. II եռ. փաստ՝ ըստ II եռամսյակի հարցման	2005թ. III եռ. սպասում՝ ըստ II եռամսյակի հարցման	Փաստ՝ ըստ 2005թ. III եռամսյակի հարցման	2005թ. IV եռ. սպասում՝ ըստ III եռամսյակի հարցման
Ծավալների փոփոխությունը	76.0	81.5	63.0	48.5
Գների փոփոխությունը	49.0	--	89.0	--
Միջին աշխ.վարձի փոփոխությունը	--	63.0	--	84.5
Աշխ. թվաքանակի փոփոխությունը	--	67.5	--	76.0
Պատվերների փոփոխությունը	--	79.5	--	55.5
Պաշարների փոփոխությունը	--	51.3	--	55.0
Ռիսկերի փոփոխությունը	53.8[4]	56.5	59.0[4]	59.0
Տնտ. վիճակի փոփոխությունը	61.3[4]	78.0	56.5[4]	68.0






[3] *Գործարար միջավայրի և տնտեսական ակտիվության ինդեքսների հաշվարկը տնտեսության համար իրականացվել է առանձին ճյուղերի դիֆուզիոն ինդեքսները կշռելով ավելացված արժեքների տեսակարար կշիռներով:*
[4] *Ներկայացված են նախորդ եռամսյակի վերաբերյալ գնահատականները:*

Արտադրանքի գները
(ընթացիկ եռամսյակ)




Աճ Նույն մակարդակ Նվազում

Միջին աշխատավարձը
(գալիք եռամսյակ)




Աճ Նույն մակարդակ Նվազում

Աշխատողների թվաքանակը
(գալիք եռամսյակ)




Աճ Նույն մակարդակ Նվազում

Արտադրանքի պատվերները
(գալիք եռամսյակ)




Աճ Նույն մակարդակ Նվազում

Արտադրանքի պաշարները
(գալիք եռամսյակ)




Աճ Նույն մակարդակ Նվազում

Չեռնարկության ռիսկերը
(գալիք եռամսյակ)




Աճ Նույն մակարդակ Նվազում

Չեռնարկության ռիսկերը
(նախորդ եռամսյակ)




Աճ Նույն մակարդակ Նվազում

Ընդհանուր տնտեսական վիճակը
(գալիք եռամսյակ)



Լավացում Նույն մակարդակ Վատացում

Ընդհանուր տնտեսական վիճակը
(նախորդ եռամսյակ)



Լավացում Նույն մակարդակ Վատացում

Աղյուսակ 5

Ընդհանուր տնտեսական վիճակը (գալիք եռամսյակ)	Թողարկման ծավալները (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կաճեն (19%)	Կմնան նույնը (59%)	Կնվազեն (22%)	
Կլավանա (49%)	13.8	83.1	3.1	100
Կմնա նույնը (38%)	26.0	42.0	32.0	100
Կվատանա (13%)	17.6	11.8	70.6	100
Կոռելյացիայի գործակից	**0.515**			

Աղյուսակ 6

Արտադրանքի գները (ընթացիկ եռամսյակ)	Թողարկման ծավալները (ընթացիկ եռամսյակ)			Ընդամենը
	Կաճեն (43%)	Կմնան նույնը (40%)	Կնվազեն (17%)	
Կաճեն (8%)	89.7	5.2	5.2	100
Կմնան նույնը (85%)	84.3	9.8	5.9	100
Կնվազեն (7%)	77.3	9.1	13.6	100
Կոռելյացիայի գործակից	**0.148**			

Աղյուսակ 7


Արտադրական հզորությունների օգտագործումը (գալիք եռամսյակ)	Աշխատողների թվաքանակը (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կաճի (28%)	Կմնա նույնը (62%)	Կնվազի (10%)	
Կաճի (17%)	54.5	--	45.5	100
Կմնա նույնը (28%)	62.2	29.7	8.1	100
Կնվազի (54%)	62.0	36.6	1.4	100
Կոռելյացիայի գործակից	**0.479**			


2. Շինարարություն


Աղյուսակ 8


Շինարարական կազմակերպությունների եռամսյակային հարցման պատասխանների հաշվեկշիռները


Պատասխանների հաշվեկշիռները	2005թ. II եռ. փաստ.՝ ըստ II եռամսյակի հարցման	2005թ. III եռ. սպասում՝ ըստ II եռամսյակի հարցման	Փաստ.՝ ըստ 2005թ. III եռամսյակի հարցման	2005թ. IV եռ. սպասում՝ ըստ III եռամսյակի հարցման
Ծավալների փոփոխությունը	60.0	70.0	77.0	70.0
Գների փոփոխությունը	70.0	--	67.5	--
Միջին աշխ.վարձի փոփոխությունը	--	55.0	--	53.5
Աշխ. թվաքանակի փոփոխությունը	--	50.0	--	52.0
Պատվերների փոփոխությունը	--	60.0	--	48.0
Ռիսկերի փոփոխությունը	50.0[4]	55.0	48.0[4]	64.0
Տնտ. վիճակի փոփոխությունը	50.0[4]	60.0	55.5[4]	60.5


























Աղյուսակ 9

Ընդհանուր տնտեսական վիճակը (գալիք եռամսյակ)	Շինարարական աշխատանքները (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կաճեն (50%)	Կմնան նույնը (40%)	Կնվազեն (10%)	
Կլավանա (25%)	80.0	10.0	10.0	100
Կմնա նույնը (71%)	40.0	10.0	50.0	100
Կվատանա (4%)	--	42.9	57.1	--
Կոռելյացիայի գործակից	**0.558**			

Աղյուսակ 10


Շինարարական աշխատանքների գները (ընթացիկ եռամսյակ)	Շինարարական աշխատանքները (ընթացիկ եռամսյակ)			Ընդամենը
	Կաճեն (68%)	Կմնան նույնը (18%)	Կնվազեն (14%)	
Կաճեն (39%)	72.7	9.1	18.2	100
Կմնան նույնը (57%)	68.8	25.0	6.3	100
Կնվազեն (4%)	--	--	100.0	100
Կոռելյացիայի գործակից	**0.467**			


3. Առևտուր


Աղյուսակ 11


Յուրաքանչյուր հարցին տրված պատասխանների հաշվեկշիռները՝ ըստ 2005 թ. երկրորդ և երրորդ եռամսյակներում իրականացված հարցումների արդյունքների


Պատասխանների հաշվեկշիռները	2005թ. II եռ. փաստ.՝ ըստ II եռամսյակի հարցման	2005թ. III եռ. սպասում՝ ըստ II եռամսյակի հարցման	Փաստ.՝ ըստ 2005թ. III եռամսյակի հարցման	2005թ. IV եռ. սպասում՝ ըստ III եռամսյակի հարցման
Ծավալների փոփոխությունը	60.0	60.0	59.6	77.5
Գների փոփոխությունը	56.0	--	51.7	--
Միջին աշխ.վարձի փոփոխությունը	--	56.0	--	55.5
Աշխ. թվաքանակի փոփոխությունը	--	58.0	--	58.8
Պատվերների փոփոխությունը	--	60.0	--	73.8
Պաշարների փոփոխությունը	--	52.0	--	59.6
Ռիսկերի փոփոխությունը	58.0[4]	58.0	56.7[4]	57.9
Տնտ. վիճակի փոփոխությունը	38.0[4]	56.0	57.1[4]	75.2





























Աղյուսակ 12

Ընդհանուր տնտեսական վիճակը (գալիք եռամսյակ)	Առևտրի ծավալները (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կաճեն (69%)	Կմնան նույնը (18%)	Կնվազեն (13%)	
Կլավանա (59%)	88.6	8.6	2.9	100
Կմնա նույնը (33%)	46.2	35.9	17.9	100
Կվատանա (8%)	20.0	10.0	70.0	100
Կոռելյացիայի գործակից		**0.550**		

Աղյուսակ 13

Ապրանքների գները (ընթացիկ եռամսյակ)	Առևտրի ծավալները (ընթացիկ եռամսյակ)			Ընդամենը
	Կաճեն (43%)	Կմնան նույնը (33%)	Կնվազեն (24%)	
Կաճեն (15%)	47.1	21.4	31.4	100
Կմնան նույնը (73%)	35.9	53.8	10.3	100
Կնվազեն (12%)	50.0	20.0	30.0	100
Կոռելյացիայի գործակից		**0.328**		


Աղյուսակ 14


Առևտրի ծավալները (գալիք եռամսյակ)	Ապրանքների պաշարները (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կաճեն (35%)	Կմնան նույնը (49%)	Կնվազեն (16%)	
Կաճեն (69%)	40.2	46.3	13.4	100
Կմնան նույնը (18%)	22.7	68.2	9.1	100
Կնվազեն (13%)	25.0	37.5	37.5	100
Կոռելյացիայի գործակից		**0.276**		


Աղյուսակ 15


Յուրաքանչյուր հարցին տրված պատասխանների հաշվեկշիռները՝ ըստ 2005թ. երկրորդ և երրորդ եռամսյակներում իրականացված հարցումների արդյունքների


Պատասխանների հաշվեկշիռները	2005թ. II եռ. փաստ.՝ ըստ II եռամսյակի հարցման	2005թ. III եռ. սպասում՝ ըստ II եռամսյակի հարցման	Փաստ.՝ ըստ 2005թ. III եռամսյակի հարցման	2005թ. IV եռ. սպասում՝ ըստ III եռամսյակի հարցման
Ծավալների փոփոխությունը	68.0	72.0	67.7	67.7
Գների փոփոխությունը	48.0	--	51.3	--
Միջին աշխ.վարձի փոփոխությունը	--	54.0	--	53.8
Աշխ. թվաքանակի փոփոխությունը	--	58.0	--	58.9
Պատվերների փոփոխությունը	--	78.0	--	65.4
Ռիսկերի փոփոխությունը	60.4[4]	47.9	56.3[4]	57.0
Տնտ. վիճակի փոփոխությունը	62.5[4]	68.8	58.9[4]	64.6


























Աղյուսակ 16

Ընդհանուր տնտեսական վիճակը (գալիք եռամսյակ)	Ծառայությունների ծավալները (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կաճեն (54%)	Կմնան նույնը (27%)	Կնվազեն (19%)	
Կլավանա (32%)	84.8	9.1	6.1	100
Կմնա նույնը (54%)	36.1	47.2	16.7	100
Կվատանա (14%)	20.0	10.0	70.0	100
Կոռելյացիայի գործակից	**0.566**			

Աղյուսակ 17

Ծառայությունների գները (ընթացիկ եռամսյակ)	Ծառայությունների ծավալները (ընթացիկ եռամսյակ)			Ընդամենը
	Կաճեն (48%)	Կմնան նույնը (39%)	Կնվազեն (13%)	
Կաճեն (10%)	37.5	50.0	12.5	100
Կմնան նույնը (82%)	47.7	40.0	12.3	100
Կնվազեն (8%)	66.7	16.7	16.7	100
Կոռելյացիայի գործակից	**0.146**			

Աղյուսակ 18

Ծառայությունների գները (ընթացիկ եռամսյակ)	Միջին աշխատավարձը (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կաճի (13%)	Կմնա նույնը (82%)	Կնվազի (5%)	
Կաճեն (10%)	--	87.5	12.5	100
Կմնան նույնը (82%)	14.1	82.8	3.1	100
Կնվազեն (8%)	16.7	66.7	16.7	100
Կոռելյացիայի գործակից	**0.228**			

Բանկերի և վարկային կազմակերպությունների հարցումներ


Բանկերի և վարկային կազմակերպությունների եռամսյակային հարցման հիմնական նպատակն է գնահատել վերջիններիս դատողությունները ընթացիկ գործունեության և հաջորդ ժամանակահատվածում տնտեսական սպասումների վերաբերյալ:


Հարցմանը մասնակցել են ՀՀ բոլոր բանկերն ու վարկային կազմակերպությունները (21 բանկ և 10 վարկային կազմակերպություն):


Հարցումների արդյունքում հավաքագրված որակական տվյալների հիման վրա հաշվարկվել են պատասխանների հաշվեկշիռներ, իսկ քանակական տվյալների հիման վրա՝ պատասխանների կշռված միջին գնահատականը:


Ստորև ամփոփ ներկայացված են յուրաքանչյուր հարցին տրված պատասխանները:

1. Տնտեսական ակտիվության փոփոխության (պատասխանները կշռված են բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվներում վերջիններիս տեսակարար կշիռներով) գնահատումները:









Պատասխանների հաշվեկշիռները[5].


Պատասխանների հաշվեկշիռները	2005թ. II եռ. փաստ.՝ ըստ II եռամսյակի հարցման	2005թ. III եռ. սպասում՝ ըստ II եռամսյակի հարցման	Փաստ.՝ ըստ 2005թ. III եռամսյակի հարցման	2005թ. IV եռ. սպասում՝ ըստ III եռամսյակի հարցման
	85.4	81.6	85.0	99.8
Տնտեսական ակտիվության ինդեքսը նախորդ եռամսյակի նկատմամբ [6]	**110.7**			


Տնտեսական ակտիվության նվազում կանխատեսել է միայն մեկ վարկային կազմակերպություն:


[5] Պատասխանների հաշվեկշիռները հաշվարկվել են որպես դրական պատասխանների տեսակարար կշռի և չեզոք (կայուն մակարդակ) պատասխանների տեսակարար կշռի կեսի գումար: Պատասխանների հաշվեկշիռները տատանվում են [0:100] միջակայքում: Հաշվեկշռի 0 արժեքը ցույց է տալիս, որ բոլոր ռեսպոնդենտները պատասխանել են նվազում կամ վատացում, 100 արժեքը՝ աճ կամ լավացում: Հաշվեկշռի 50 արժեքը ցույց է տալիս, որ դրական և բացասական պատասխանները բաշխվել են հավասարաչափ: 1-ին և 5-րդ հարցերի պատասխանները կշռվել են բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվներում վերջիններիս տեսակարար կշիռներով:


[6] Ընթացիկ և նախորդ եռամսյակների հարցումների արդյունքում հաշվարկված ընթացիկ և գալիք ժամանակահատվածների վերաբերյալ պատասխանների հաշվեկշիռների միջին թվաբանական մեծությունների հարաբերությունն է:

2. Տնտեսական միջավայրի փոփոխությունների գնահատումներ.











Պատասխանների հաշվեկշիռները.


Պատասխանների հաշվեկշիռները	2005թ. II եռ. փաստ.՝ ըստ II եռամսյակի հարցման	2005թ. III եռ. սպասում.՝ ըստ II եռամսյակի հարցման	Փաստ.՝ ըստ 2005թ. III եռամսյակի հարցման	2005թ. IV եռ. սպասում՝ ըստ III եռամսյակի հարցման
	68.5	77.0	64.5	82.3
Գործարար միջավայրի ինդեքսը նախորդ եռամսյակի նկատմամբ[7]	100.9			


3. Տնտեսության ճյուղերում զբաղված հաճախորդների ֆինանսական վիճակի (պատասխանները կշռված են բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվներում վերջիններիս տեսակարար կշիռներով) գնահատումները:





[7] *Ընթացիկ և նախորդ եռամսյակների հարցումների արդյունքում հաշվարկված ընթացիկ և գալիք ժամանակահատվածների վերաբերյալ պատասխանների հաշվեկշիռների միջին թվաբանական մեծությունների հարաբերությունն է:*





Պատասխանների հաշվեկշիռները.

Պատասխանների հաշվեկշիռները	2005թ. II եռ. փաստ.՝ ըստ II եռամսյակի հարցման	2005թ. III եռ. սպասում՝ ըստ II եռամսյակի հարցման	Փաստ.՝ ըստ 2005թ. III եռամսյակի հարցման	2005թ. IV եռ. սպասում՝ ըստ III եռամսյակի հարցման
	76.8	86.8	77.8	75.9
Ֆին. վիճակի փոփոխության ինդեքսը նախորդ եռամսյակի նկատմամբ [8]	93.9			

4. Հաջորդ եռամսյակում տնտեսությանը տրամադրվելիք վարկային միջոցների փոփոխության (պատասխանները կշռված են բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներում վերջիններիս տեսակարար կշիռներով) գնահատումները:


Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հաջորդ եռամսյակում սպասվող վարկային միջոցների աճը կկազմի 11.0%: Տնտեսությանը տրամադրվող վարկային միջոցների նվազում որևէ բանկ կամ վարկային կազմակերպություն չի կանխատեսել:


Վարկային միջոցների անփոփոխ մակարդակ են ակնկալում ութ կազմակերպություններ, որոնցից երեքը վարկային կազմակերպություն է: Նշված ութ կազմակերպությունների տեսակարար կշիռը բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներում կազմում է 17.7%:

Տնային տնտեսությունների հարցումներ

Հարցման մեջ ընդգրկվել են 792 տնային տնտեսություններ, ընդ որում՝ 58 (7.3%) տնային տնտեսություն հրաժարվել է մասնակցել հարցմանը:

Ռեսպոնդենտների սեռատարիքային[9] կառուցվածքը ներկայացված է ստորև բերված գծապատկերներում:





[8] *Ընթացիկ և նախորդ եռամսյակների հարցումների արդյունքում հաշվարկված ընթացիկ և գալիք ժամանակահատվածների վերաբերյալ պատասխանների հաշվեկշիռների միջին թվաբանական մեծությունների հարաբերությունն է:*

[9] *Տարիքային բաշխումն իրականացվել է պայմանականորեն՝ հետևյալ կերպ. երիտասարդ՝ 16-40 տարեկան, միջին՝ 41-65 տարեկան, տարեց՝ 66 և ավելի:*

Սպառողների եռամսյակային հարցման հիմնական նպատակն է գնահատել տնտեսության ներկա և սպասվող պայմանների վերաբերյալ սպառողների վերաբերմունքը: Հարցման հարցաթերթիկը բաղկացած է ներկա և ապագա իրավիճակն արտահայտող հարցերից:


Հարցումների արդյունքների հիման վրա հաշվարկվել են սպառողների վստահության (Consumer Confidence Index), ներկա և ապագա իրավիճակներն արտացոլող ինդեքսներ: Սպառողների վստահության ինդեքսը (ՍՎԻ) իրենից ներկայացնում է սպառողներին տրված վեց հարցերի հիման վրա հաշվարկված դիֆուզիոն ինդեքսների միջին թվաբանական[10]: Ներկա իրավիճակն արտահայտող ինդեքսը հաշվարկվել է որպես ներկա պայմաններին վերաբերող հարցերի (հարցեր 1, 3 և 6) հիման վրա հաշվարկված դիֆուզիոն ինդեքսների, իսկ ապագա իրավիճակն արտահայտող ինդեքսը՝ ապագային վերաբերող հարցերի (հարցեր 2, 4 և 5) դիֆուզիոն ինդեքսների միջին թվաբանական: Ինդեքսները տատանվում են [0, 100] միջակայքում: Ինդեքսների 0 արժեքը նշանակում է նվազում, 100 արժեքը՝ աճ, իսկ 50 արժեքը՝ կայուն վիճակ (աճ և նվազում ակնկալող ռեսպոնդենտների քանակը հավասար է)[11]: Հարցման արդյունքների հիման վրա հաշվարկված ինդեքսներն ունեն հետևյալ արժեքները.


ՍՎԻ բաղադրատարրեր	2005թ. II եռամսյակ	2005թ. III եռամսյակ	Փոփոխությունը, %
Սպառողների վստահության ինդեքս	**51.3**	**52.8**	**103.0**
Ընթացիկ պայմանների ինդեքս	49.2	47.0	95.5
Կենցաղային ապրանքների ձեռքբերման ծախսերը նախորդ եռամսյակի նկատմամբ	57.5	50.5	87.8
Եկամուտների փոփոխությունը նախորդ եռամսյակի նկատմամբ	43.5	47.0	108.0
ՀՀ ներկա տնտեսական վիճակի վերաբերյալ տնային տնտեսությունների գնահատականները	46.5	43.5	93.5
Ապագա պայմանների ինդեքս	53.5	58.7	109.7
Կենցաղային ապրանքների ձեռքբերման ծախսերը գալիք եռամսյակում	56.5	60.0	106.2
Եկամուտների փոփոխությունը գալիք եռամսյակում	51.0	60.5	118.6
Ընտանիքի զբաղվածությունը գալիք եռամսյակում	53.0	55.5	104.7

Հաշվարկված բոլոր ինդեքսները մոտ են 50-ին, ինչը ցույց է տալիս, որ ըստ սպառողների գնահատումների՝ տնտեսությունը համեմատաբար կայուն վիճակում է: Ընթացիկ պայմանների ինդեքսը զիջում է ապագա պայմանների ինդեքսին, ինչն իր հերթին վկայում է, որ սպառողները հաջորդ եռամսյակում սպասում են ավելի մեծ ակտիվություն, քան ընթացիկ եռամսյակում:

Ստորև ամփոփ ներկայացված են յուրաքանչյուր հարցին տրված պատասխանները:


1. Տնային տնտեսությունների բաշխվածքը՝ ըստ կենցաղային ապրանքների ձեռքբերման ծախսերի փոփոխության.






[10] *Այստեղ դիֆուզիոն ինդեքսները հաշվարկվել են որպես դրական պատասխանների տեսակարար կշռի և չեզոք պատասխանների տեսակարար կշռի կեսի գումար:*
[11] *Որպես կայուն մակարդակ ընդունել ենք ինդեքսի տատանումը 45-ց մինչև 55-ը:*







2. Տնային տնտեսությունների բաշխվածքը՝ ըստ եկամուտների փոփոխության.











3. Հաջորդ եռամսյակի ընթացքում ընտանիքում զբաղված անդամների քանակի աճ կանխատեսող տնային տնտեսությունների բաշխվածքը.





4. Տնային տնտեսությունների գնահատականները ներկա տնտեսական պայմանների վերաբերյալ.





Այսպիսով, համաձայն 734 տնային տնտեսությունների հարցման արդյունքների՝ 2005թ. երրորդ եռամսյակում սպառողների զգայունությունը տնտեսական երևույթների նկատմամբ համեմատաբար կայուն է: Այնուամենայնիվ ապագա պայմանների ինդեքսը ցույց է տալիս, որ չորրորդ եռամսյակում, երրորդի համեմատ, որոշակի ակտիվություն է սպասվում:

Տնային տնտեսությունների պատասխանների հիման վրա կառուցվել են նաև խաչաձև աղյուսակներ (cross-tabs), որոնք ցույց են տալիս հարցերի փոխկապվածությունը:

Աղյուսակ 19

Եկամուտների և կենցաղային ծախսերի փոխկապվածությունը

Եկամուտներն ընթացիկ եռամսյակի ընթացքում	Կենցաղային ապրանքների ծախսերը հաջորդ եռամսյակի ընթացքում			Ընդամենը
	Աճ (27.0%)	Նույն մակարդակ (66.0%)	Նվազում (7.0%)	
Աճ (11.0%)	44.0	50.0	6.0	100
Նույն մակարդակ (72.0%)	26.6	69.4	4.0	100
Նվազում (17.0%)	20.0	61.6	18.4	100

Աղյուսակում ներկայացված ցուցանիշների հիման վրա հաշվարկվել է կոռելյացիայի գործակիցը, որը կազմել է 0.25: Այդ ցուցանիշի ցածր մակարդակը վկայում է, որ ընթացիկ եռամսյակում բնակչության եկամուտները բավականին թույլ են ազդում գալիք եռամսյակում բնակչության կենցաղային ծախսերի վրա:

Աղյուսակ 20

Եկամուտների և կենցաղային ծախսերի փոխկապվածությունը հաջորդ եռամսյակում.

Եկամուտները հաջորդ եռամսյակում	Կենցաղային ծախսերը հաջորդ եռամսյակում			Ընդամենը
	Աճ (27.0%)	Նույն մակարդակ (66.0%)	Նվազում (7.0%)	
Աճ (27.0%)	61.2	37.3	1.5	100
Նույն մակարդակ (67.0%)	15.0	79.0	6.0	100
Նվազում (6.0%)	10.9	52.2	37.0	100

Աղյուսակ 20-ում ներկայացված ցուցանիշների միջև կոռելյացիայի գործակցի մակարդակը համեմատաբար բարձր է՝ 0.49, հետևաբար գալիք եռամսյակում բնակչության եկամուտների փոփոխությունը դրական է ազդում նույն եռամսյակում կատարվող կենցաղային ծախսերի փոփոխության վրա:

Աղյուսակ 21

Ընթացիկ եռամսյակում եկամուտների փոփոխության և ՀՀ տնտեսության վիճակի փոխկապվածությունը.

Եկամուտները ընթացիկ եռամսյակում	ՀՀ տնտեսության վիճակը			Ընդամենը
	Դրական (20.0%)	Բացասական (47.0%)	Չեզոք (33.0%)	
Աճ (11.0%)	31.0	28.6	40.5	100
Նույն մակարդակ (72.0%)	19.1	47.8	33.1	100
Նվազում (17.0%)	13.6	61.6	24.8	100

Աղյուսակ 21-ում ներկայացված ցուցանիշների միջև հաշվարկված կոռելյացիայի գործակիցը կազմում է 0.18, ինչը նշանակում է, որ տնային տնտեսությունների եկամուտների և ընդհանուր տնտեսական վիճակի փոփոխությունների կախվածությունը թույլ է:

ՀՀ ԵՎ ԼՂՀ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ (30.06.2005 Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Նյութում վերլուծված են միայն ՀՀ և ԼՂՀ[1] տարածքներում ներգրավված և տեղաբաշխված միջոցները, ուստի ներկայացված տվյալները կարող են տարբերվել ՀՀ տարածքից դուրս տեղաբաշխված միջոցների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի այլ տեղեկատվական նյութերում հրապարակված տվյալներից:

Վերլուծությունում դիտարկվել են հինգ ժամանակաշրջաններում.

1) ՀՀ-ում գործող բոլոր բանկերի[2] (30.09.00թ.՝ 31 բանկ, 31.12.01թ.՝ 30 բանկ, 30.06.03թ,՝ 22 բանկ. 30.06.04թ.՝ 20 բանկ և 30.06.05թ.՝ 21 բանկ)՝

- *վարկային ներդրումների և ավանդների աճի միտումները,*
- *բանկերի համընդհանուր վարկերի և ավանդների ծավալները:*

2) 30.06.05թ. դրությամբ գործող 21 առևտրային բանկերի՝

- *համընդհանուր վարկերի ծավալները՝ նշված ժամանակաշրջանում,*
- *ավանդների ծավալները՝ նշված ժամանակաշրջանում:*

Աճի միտումների համեմատական դիտարկումները բանկային համակարգի՝ ըստ մարզերի վարկային ներդրումների և ավանդների ավելի իրատեսական պատկերն արտացոլելու նպատակ ունեն: Դիտարկվող ժամանակաշրջաններում գործող բանկերի քանակը համադրելի չէ, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկային համակարգը «լքած» բանկերի ավանդների և վարկերի մի մասը, տեղափոխվելով այլ բանկեր, մնացել է համակարգի ներսում, անհրաժեշտ է ՀՀ-ում առկա բոլոր բանկերի համընդհանուր ցուցանիշները համեմատել չորս ժամանակաշրջաններում: Միևնույն ժամանակ, լուծարվող բանկերում զգալի ծավալով վատորակ վարկեր դուրս են գրվել և չեն մնացել համակարգի ներսում, և միայն բոլոր բանկերի ցուցանիշների համեմատությունը կարող է ստվեր գցել ներկայումս ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերի համընդհանուր վարկային ներդրումների և ավանդների կայուն աճի միտումների վրա: Այս առումով, համեմատվում են նաև ներկայումս ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 21 բանկերի համընդհանուր ցուցանիշները չորս ժամանակաշրջաններում:

1. ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

30.09.00-30.06.05թթ. ժամանակահատվածում ներկայիս գործող բանկերի՝ ՀՀ տարածքում տեղաբաշխած ընդհանուր վարկերն ավելացել են 137%-ով, իսկ եթե ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումները համեմատվում են 30.09.2000թ. գործող բոլոր բանկերի ընդհանուր վարկային ներդրումների հետ, ապա աճը կազմում է 64% (*տե՛ս աղյուսակ 1 և գծապատկեր 1*): Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումները դիտարկվող բոլոր ժամանակաշրջաններում դրսևորել են կայուն աճի միտումներ, ինչը չի կարելի ասել յուրաքանչյուր ժամանակահատվածում գործող բոլոր բանկերի համընդհանուր վարկային ներդրումները համեմատելիս *(տե՛ս հավելված 1.5–1.13)*: Սա հիմնականում պայմանավորված է բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչված բանկերի վատորակ վարկերի դուրսգրումներով:


Աղյուսակ 1. Բանկերի տրամադրած վարկերի ծավալները

	30.09.00 *(հազար դրամ)*	31.12.01 *(հազար դրամ)*	30.06.03 *(հազար դրամ)*	30.06.04 *(հազար դրամ)*	30.06.05 *(հազար դրամ)*	30.09.00-30.06.05 *(%)*	30.06.04-30.06.05 *(%)*
Բոլոր բանկերը	96933303	87004070	91163755	124386546	159043302	64	28
30.06.05թ. դրությամբ գործող բանկերը	67143742	74703547	90146752	124386546	159043302	137	28

[1] *ԼՂՀ-ին վերաբերող տվյալները տարանջատված չեն ՀՀ մարզային տվյալներից, և ԼՂՀ ու ՀՀ տարածքների տվյալները դիտարկված են համընդհանուր համատեքստում:*

[2] *«Բոլոր բանկեր» արտահայտությունը վերաբերում է դիտարկվող որոշակի ժամանակահատվածում ՀՀ-ում գործող առևտրային բանկերին:*


Գծապատկեր 1



Գրեթե բոլոր մարզերում հիմնականում արձանագրվել է վարկային ներդրումների աճ, ընդ որում՝ առավել արտահայտված աճ է արձանագրվել 2004թ. և 2005թ. (*տե՛ս գծապատկեր 2*): Հաշվետու տարում (30.06.04-30.06.05թթ.) բոլոր մարզերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ. Երևանում՝ 24% աճ (20.5 մլրդ դրամով), իսկ ՀՀ մնացյալ 10 մարզերում և ԼՂՀ-ում ընդհանուր վարկային ներդրումներն ավելացել են 61%-ով (14.1 մլրդ դրամով), ինչը վկայում է, որ Երևանին հատկացված վարկերի համեմատությամբ մարզերի վարկերը սկսել են ցուցաբերել առաջանցիկ աճի տեմպեր: Հաշվետու տարում ՀՀ 10 մարզերում (բացառությամբ Երևանի) և ԼՂՀ-ում վարկերի ընդհանուր աճի 49%-ը ապահովել է սպառողական վարկերի աճը:

Գծապատկեր 2-ը ցույց է տալիս, որ 2000-2003թթ. ժամանակահատվածում Լոռու մարզում արձանագրվել են վարկային ներդրումների էական տատանումներ, ինչը պայմանավորված է քիմիական արդյունաբերությանը տրամադրած վարկերի ծավալների փոփոխություններով, իսկ մարզի վարկերի վերջին տարիների աճը՝ սպառողական վարկերի աճի արդյունք է:

Գծապատկեր 2




** Պատկերի հստակության նպատակով երևանի ցուցանիշները չեն ներառվել:*

30.06.2005թ. դրությամբ ՀՀ և ԼՂՀ տարածքներում գործող առևտրային բանկերի ընդհանուր վարկային ներդրումներում ամենամեծ բաժինն ունի Երևանը՝ 67.7 %, ընդ որում՝ 30.06.04 թ. համեմատ Երևան քաղաքին տրամադրած վարկային ներդրումների մասնաբաժինը նվազել է 2.3 տոկոսային կետով (*տե՛ս գծապատկեր 3, հավելված 1.2*):

Գծապատկեր 3

Ընդհանուր վարկային ներդրումների կառուցվածքն ըստ մարզերի




1.Երևան, 2.Արարատի մարզ, 3.Կոտայքի մարզ, 4.Արմավիրի մարզ, 5.Արագածոտնի մարզ, 6.Շիրակի մարզ, 7. Լոռու մարզ, 8.Գեղարքունիքի մարզ, 9.Տավուշի մարզ, 10.Վայոց ձորի մարզ, 11. Սյունիքի մարզ, 12. ԼՂՀ

Վարկային ներդրումներում Երևանի մասնաբաժինը հիմնականում տատանվել է 70%-ի շրջանակներում (*տե՛ս գծապատկեր 4*): Բացառություն է կազմում 31.12.01 թ., երբ Երևանում վարկային ներդրումների մասնաբաժինը զգալի նվազել էր: Սա պայմանավորված էր Լոռու մարզում քիմիական արդյունաբերության վարկավորման ծավալների 4.8 մլրդ դրամ աճով և Երևանում էներգետիկայի վարկավորման ծավալների 5.5 մլրդ դրամ նվազմամբ: Հետագայում, Լոռու մարզում քիմիական արդյունաբերության վարկավորման ծավալների 8.2 մլրդ դրամ նվազումը և Երևանում առևտրի և սպառողական ոլորտներում վարկային ներդրումների զգալի աճը դարձյալ հանգեցրել են վարկային ներդրումներում Երևանի մասնաբաժնի աճի:

Գծապատկեր 4

Վարկային ներդրումների միջմարզային կառուցվածքը (բոլոր բանկերը)



Երևանում 30.09.00-30.06.05թթ. ժամանակահատվածում վարկային ներդրումներն ավելացել են 60%-ով, ընդ որում՝ վարկերի աճը հիմնականում ապահովվել է վերջին երկու տարիներին *(տե՛ս հավելվածներ 1.5–1.8)*: Ըստ ներկայումս գործող բանկերի՝ նշված աճը 30.09.00-30.06.05թթ. ժամանակաշրջանում կազմել է 144%, ընդ որում՝ 30.06.03-30.06.04թթ. Երևանում վարկային ներդրումներն ավելացել են 37%-ով, իսկ 30.06.04-30.06.05թթ.՝ 24%-ով *(տե՛ս հավելվածներ 1.9–1.13)*:

Ըստ տնտեսության ճյուղերի՝ ընդհանուր վարկային ներդրումների ծավալներում (բոլոր բանկերը) 30.09.00-30.06.05թթ. ժամանակահատվածում արձանագրվել են հետևյալ փոփոխությունները. արդյունաբերության ճյուղում վարկային ներդրումների ծավալներն ավելացել են 6%-ով, տրանսպորտի և կապի ճյուղում՝ 111%-ով, գյուղատնտեսության ճյուղում՝ 57%-ով, շինարարության ճյուղում՝ 171%-ով, առևտրի ճյուղում՝ 233%-ով, սպառողական վարկերը՝ 171%-ով, իսկ այլ ճյուղերի ընդհանուր վարկերը նվազել են 37%-ով *(տե՛ս հավելված 1.8)*: Ավելացել են ներկայումս գործող բանկերի վարկային ներդրումների ծավալները տնտեսության բոլոր ճյուղերում. խոշոր աճ է արձանագրվել սպառողական, առևտրի և շինարարության ոլորտների վարկային ներդրումներում՝ համապատասխանաբար 451%, 397% և 311% *(տե՛ս հավելված 1.12)*: Հատկանշական է, որ նշված ժամանակահատվածում բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է սպառողական վարկերի և առևտրի ոլորտի վարկերի աճ: Գյուղատնտեսության վարկերը (բոլոր բանկերը) ևս աճել են գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ Արմավիրի և Շիրակի մարզերի), իսկ ներկայիս գործող բանկերի կողմից գյուղատնտեսությանը տրամադրված վարկերը ավելացել են բոլոր մարզերում *(տե՛ս հավելվածներ 1.8 և 1.12)*: 30.09.00-30.06.05թթ. ժամանակահատվածում 5 մարզերում արձանագրվել է արդյունաբերության վարկերի նվազում, ընդ որում՝ էական նվազումներ են եղել Լոռու մարզում (քիմիական արդյունաբերության վարկեր) և Արարատի մարզում (սննդի արդյունաբերության վարկեր):

Վերոնշյալ փոփոխությունների արդյունքում, ըստ տնտեսության ճյուղային բաշխվածության, 30.09.00-30.06.2005 թթ. ժամանակաշրջանում ընդհանուր վարկային ներդրումներում արդյունաբերության ճյուղի տեսակարար կշիռը զգալի նվազել է, իսկ առևտրի և սպառողական ոլորտի վարկերինը՝ էապես աճել *(տե՛ս աղյուսակ 2)*:

Աղյուսակ 2 . Վարկային ներդրումների տեսակարար կշիռներն ըստ ճյուղերի (բոլոր բանկերը)

%

	30.09.00	31.12.01	30.06.03	30.06.04	30.06.05
Արդյունաբերություն	34	38	31	26	22
Գյուղատնտեսություն	8	11	10	7	8
Շինարարություն	2	3	4	4	4
Տրանսպորտ և կապ	2	2	1	1	2
Առևտուր	11	17	20	21	22
Ֆինանսական հատված	7	6	7	7	5
Սպառողական վարկեր	18	14	21	27	31
Այլ ճյուղեր	18	9	6	7	6

30.06.2005 թ. դրությամբ ընդհանուր վարկերի բաշխվածությունը տնտեսության ճյուղերում ըստ մարզերի հիմնականում բևեռացված բնույթ ունի և կենտրոնացված է Երևանում (միջին հաշվով՝ 70%՝ բացառությամբ գյուղատնտեսության ճյուղի), չնայած, նախորդ տարվա համեմատ, Երևանում վարկերի կենտրոնացվածության մակարդակը նվազել է *(տե՛ս հավելված 1.2)*: Գյուղատնտեսության ճյուղին տրամադրված վարկերը մարզերի միջև համեմատաբար հավասարաչափ են բաշխված. ամենամեծ տեսակարար կշիռն ունի Արմավիրի մարզը (17%), իսկ ամենափոքր տեսակարար կշիռը՝ Վայոց ձորի մարզը (2%):

Հատկանշական է, որ Երևանում գյուղատնտեսության վարկերից հետո ցածր կենտրոնացվածություն ունեն սպառողական վարկերը՝ 60% (նախորդ տարի՝ 63%): Միևնույն ժամանակ, վերջին տարիներին դրսևորվում են սպառողական վարկերի կայուն աճի միտումներ, ինչը նպաստում է սպառողական վարկերի տեսակարար կշռի ավելացմանը: Նման միտումների դեպքում, եթե վարկային ներդրումներում հետզհետե ավելանա Երևանում համեմատաբար նվազ կենտրոնացված սպառողական վարկերի տեսակարար կշիռը, ապա ապագայում ենթադրվում է, որ Երևանում վարկերի կենտրոնացվածության մակարդակը կնվազի:

Արդեն ստացվող նոր տեղեկատվությունը փաստում է, որ սպառողական վարկերի 13.5%-ը կազմում են հիփոթեքային վարկերը՝ 6.5 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որի 96%-ը բաժին է ընկնում Երևանին:

Վարկային ներդրումների ժամկետայնության առումով հատկանշական է, որ 30.06.04-30.06.05թթ. ժամանակաշրջանում, ի տարբերություն կարճաժամկետ վարկերի, երկարաժամկետ վարկերը (1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ) ապահովել են ավելի արագատեմպ աճ, որի արդյունքում ընդհանուր վարկերում վերջիններիս տեսակարար կշիռն ավելացել է 5 տոկոսային կետով և կազմել 52%: Երևանում, ԼՂՀ-ում և Կոտայքի մարզում գերակշռում են երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռները, իսկ մյուս ինը մարզերում՝ հակառակը (*տե՛ս հավելված 1.3*): Երևանին բաժին է ընկնում կարճաժամկետ վարկերի ընդհանուր ծավալի 58%-ը, իսկ երկարաժամկետ վարկերի՝ 76%-ը:

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին առևտրի և սպառողական վարկերի ծավալների էական աճը հանգեցրեց կարճաժամկետ վարկերի տեսակարար կշռի աճի, սակայն վերջին տարվա ընթացքում դրսևորվեց հակառակ պատկերը՝ պայմանավորված նաև սպառողական վարկերի կազմում հիփոթեքային և ավտոմեքենաների վարկերի արագատեմպ աճով: Հարկ է նշել, որ 30.09.00թ. դրությամբ ընդհանուր վարկային ներդրումներում կարճաժամկետ (մինչև 1 տարի) վարկերը կազմել են 53%, 31.12.01թ. դրությամբ՝ 41 %, 30.06.03թ. դրությամբ՝ 50% և 30.06.04թ. դրությամբ՝ 53%:

Հաշվետու տարում (30.06.04-30.06.05թթ. ժամանակահատվածում) վարկային ներդրումների կառուցվածքում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը նվազել է 0.6 տոկոսային կետով և 30.06.05թ. դրությամբ կազմել ընդհանուր վարկերի 66.9%-ը (30.06.04թ. դրությամբ 67.5%-ը) (*տե՛ս հավելված 1.4*): Երևանում, Սյունիքի, Կոտայքի և Արարատի մարզերում արձանագրվել է արտարժութային վարկերի տեսակարար կշռի աճ, իսկ մնացած 7 մարզերում և ԼՂՀ-ում՝ նվազում: Վարկային ներդրումների համեմատաբար մեծ մասնաբաժին ունեցող Երևան քաղաքում, ԼՂՀ-ում և Կոտայքի մարզերում ըստ արժույթի տեսակի վարկային կառուցվածքը հետևյալն է.

Աղյուսակ 3. Արժութային վարկերի տեսակարար կշիռները՝ ըստ ժամանակահատվածների

%

Վարկեր	Երևան	ԼՂՀ	Կոտայքի մարզ	Ընդամենը
Արտարժույթով 30.09.00թ.	88	46	85	84
Արտարժույթով 31.12.01թ.	82	83	75	82
Արտարժույթով 30.06.03թ.	65	92	90	71
Արտարժույթով 30.06.04թ.	65	67	72	68
Արտարժույթով 30.06.05թ.	67	55	74	67

Աղյուսակ 3-ից երևում է, որ չնայած դիտարկվող առանձին տարածքներում դրամային վարկերի տեսակարար կշռի աճի կայուն միտումներ չեն դրսևորվում, այնուամենայնիվ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում տեղաբաշխված ընդհանուր վարկային ներդրումներում ՀՀ դրամով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը կայուն աճի միտում ունի, որը վկայում է ներկայումս ՀՀ դրամի նկատմամբ ինչպես վարկառուների, այնպես էլ վարկատուների վստահության բարձրացման մասին:

Հաշվետու տարում ընդհանուր վարկային ներդրումների կազմում փոքր և միջին բիզնեսին[3] տրամադրված վարկերի տեսակարար կշիռը աճել է 12 տոկոսային կետով և 30.06.05 թ. դրությամբ կազմել 39% (ընդհանուր վարկերի կառուցվածքում փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերը գերակշռում են միայն ԼՂՀ-ում (84 %)) (*տե՛ս հավելված 1.1*): Փոքր և միջին բիզնեսին համակարգի կողմից տրամադրված ընդհանուր վարկերի 71%-ը բաշխվել է Երևան քաղաքում, 9%-ը՝ ԼՂՀ-ում (*տե՛ս հավելված 1.2*): Հաշվետու տարում փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի ծավալներն ավելացել են 82%-ով, իսկ 30.09.00-30.06.05թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը) 188%-ով (*տե՛ս հավելվածներ 1.8 և 1.13*):

Միջազգային ծրագրերով ստացված վարկերը հատկացվել են հիմնականում Երևանին, Արմավիրի, Արարատի և Լոռու մարզերին (*տե՛ս գծապատկեր 5*):


Մարզերին տրամադրված ընդհանուր վարկերի մեջ միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը բավականին բարձր է (19%-48%), մասնավորապես բարձր է Տավուշի (48%), Արագածոտնի (45%) և Արմավիրի (44%) մարզերում և ցածր՝ ԼՂՀ-ում (0 %) և Երևանում (12 %) (*տե՛ս հավելված 1.1*): Սա վկայում է ՀՀ մարզերի համար միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող վարկավորման կարևորությունը:

Հաշվետու տարում միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի ծավալներն աճել են 32%-ով, իսկ 30.09.00-30.06.05թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը)՝ 69%-ով (*տե՛ս հավելվածներ 1.8 և 1.13*):

[3] Փոքր և միջին բիզնեսը ներառում է այն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, որոնց աշխատողների թվաքանակը կազմում է մինչև 100 աշխատող:

Գծապատկեր 5

Միջազգային ծրագրերով տրամադրած վարկերի կառուցվածքն ըստ մարզերի



1.Երևան, 2.Արարատի մարզ, 3.Կոտայքի մարզ, 4.Արմավիրի մարզ, 5.Արագածոտնի մարզ, 6.Շիրակի մարզ, 7. Լոռու մարզ, 8.Գեղարքունիքի մարզ, 9.Տավուշի մարզ, 10.Վայոց ձորի մարզ, 11. Սյունիքի մարզ, 12. ԼՂՀ


Ըստ վարկային ներդրումների վերադարձելիության՝ հաշվետու տարում դարձյալ պահպանվել է ժամկետանց վարկերի տեսակարար կշռի նվազման միտումը. 30.06.05 թ. դրությամբ ընդհանուր վարկերի կառուցվածքում ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմել է 1.0 % (*տե՛ս հավելված 1.1 և գծապատկեր 6*):

Համակարգի ընդհանուր ժամկետանց վարկերի 73 %-ը բաժին է ընկնում միայն Երևանին, այն դեպքում, երբ Երևանն ընդհանուր վարկային ներդրումներում ունի 68% տեսակարար կշիռ (*տե՛ս հավելված 1.2*):

30.09.00թ. դրությամբ 31 բանկերի ընդհանուր վարկերի մեջ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմել է 14%, 31.12.01թ. դրությամբ՝ 9%, 30.06.03թ. դրությամբ՝ 2.7% և 30.06.04թ. դրությամբ՝ 1.6%, ինչը վկայում է ներկայումս վարկերի որակի բարձրացման մասին: Ընդ որում, վատորակ վարկեր ունեցող բանկերի՝ բանկային համակարգը «լքելու» հանգամանքը ավելի թույլ ազդեցություն է ունեցել, քան ներկայումս գործող բանկերում վարկերի որակի բարձրացման փաստը, քանի որ 30.09.00-30.06.05թթ. ժամանակահատվածում բոլոր բանկերի ժամկետանց վարկերի ծավալները նվազել են 89%-ով, իսկ ներկայումս ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերում նվազել են 76%-ով (*տե՛ս հավելվածներ 1.8 և 1.12*):

Գծապատկեր 6

Ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը մարզի ընդհանուր վարկերում



Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումները

30.06.05թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 9 վարկային կազմակերպություններ, որոնց տրամադրած ընդհանուր վարկերի ծավալը կազմել է բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի ծավալի ընդամենը 2.9%-ը:

30.06.04-30.06.05թթ. ժամանակահատվածում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերն ավելացել են 115%-ով (2.5 մլրդ դրամով), ընդ որում՝ խոշոր աճ է արձանագրվել արդյունաբերության ճյուղի վարկերում և սպառողական վարկերում:

Դիտարկվող ժամանակաշրջաններում վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ճյուղերի ունեցել են հետևյալ կառուցվածքը.

Աղյուսակ 4. Վարկերն ըստ տնտեսության ճյուղերի

Տնտեսության ճյուղեր	*Վարկերի ծավալ*			*Տեսակարար կշիռ (%)*		
	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.03	30.06.04	30.06.05
Արդյունաբերություն	717895	497017	1371292	23	36	29
այդ թվում՝ սննդի	591431	313166	741669	14	30	16
Գյուղատնտեսություն	268669	312495	536673	14	14	11
Առևտուր	53991	110849	270017	5	3	6
Շինարարություն	120900	88759	112000	4	6	2
Սպառողական	492011	864447	1584248	40	25	34
Այլ ճյուղեր	324007	314835	831509	14	16	18
Ընդամենը	1977473	2184827	4705739	100	100	100

Հատկանշական է, որ 30.06.04-30.06.05թթ. ժամանակահատվածում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերում զգալի մեծացել է Կոտայքի, Լոռու և Շիրակի մարզերում տեղաբաշխած միջոցների տեսակարար կշիռները և նվազել Սյունիքի և Արարատի մարզերում վարկավորման տեսակարար կշիռները (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Վարկերն ըստ մարզերի

	Երևան	Արարատ	Կոտայք	Արմավիր	Արագածոտն	Շիրակ	Լոռի	Գեղարքունիք	Տավուշ	Վայոց ձոր	Սյունիք
30.06.03											
վարկերի ծավալները	732523	140711	347977	328411	24715	10955	18282	5198	31693	8359	328640
տեսակարար կշիռները (%)	37.0	7.1	17.6	16.6	1.2	0.6	0.9	0.3	1.6	0.4	16.6
30.06.04											
վարկերի ծավալները	1464134	76409	28056	41233	75318	18110	26532	12726	70551	30724	341034
տեսակարար կշիռները (%)	67.0	3.5	1.3	1.9	3.4	0.8	1.2	0.6	3.2	1.4	15.6
30.06.05											
վարկերի ծավալները	3054690	38852	216496	127993	142609	165228	199822	40155	165667	55467	498759
տեսակարար կշիռները (%)	64.9	0.8	4.6	2.7	3.0	3.5	4.3	0.9	3.5	1.2	10.6

2. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ


ՀՀ և ԼՂՀ տարածքներում 30.09.00-30.06.05թթ. ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ներգրավված միջոցներն ավելացել են 126%-ով (128.8 մլրդ դրամով) և կազմել 231.0 մլրդ դրամ, ընդ որում՝ 128%-ով (55.4 մլրդ դրամով)՝ ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցները և 125%-ով (73.3 մլրդ դրամով)՝ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները (*տե՛ս հավելված 1.8*):

Ներկայիս գործող բանկերի ներգրավված միջոցները նշված ժամանակահատվածում աճել են 234%-ով (161.9 մլրդ դրամով). 203%-ով (66.2 մլրդ դրամով) աճել են ֆիզիկական անձանցից ներգրավ-

ված միջոցները և 263%-ով (95.8 մլրդ դրամով)՝ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները (*տե՛ս հավելված 1.12*):

Ըստ ընդհանուր ներգրավված միջոցների տարածքային բաշխվածության՝ նկատվում է կենտրոնացվածության բարձր մակարդակ (այնուամենայնիվ, դրսևորվում է կենտրոնացվածության կայուն միտում). ներգրավված միջոցների 83%-ը բաժին է ընկնում Երևանին, 7%-ը՝ Սյունիքի մարզին, 3%-ը՝ ԼՂՀ-ին և մնացյալ 7%-ը բաշխված է 9 մարզերի միջև: Ընդ որում՝ 30.06.04թ. Երևանին բաժին էր ընկնում ներգրավված միջոցների 85%-ը, իսկ 30.09.00թ.՝ 84%-ը: 30.06.05թ. դրությամբ՝ ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցների 91%-ը, իսկ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցների 78 %-ը բաժին է ընկնում Երևանին (*տե՛ս հավելված 2.2*):

Գծապատկեր 7




** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.05 թ. դրությամբ ավանդների ծավալը կազմել է 192.2 մլրդ դրամ:*

30.09.00-30.06.05թթ. ժամանակահատվածում (ըստ բոլոր բանկերի տվյալների) միայն Կոտայքի և Վայոց ձոր մարզերում է արձանագրվել ավանդների փոքր-ինչ նվազում, իսկ հաշվետու տարում՝ Վայոց ձորի մարզում և ԼՂՀ-ում (*տե՛ս գծապատկեր 7*): Հաշվետու տարում ավանդների կտրուկ աճ է արձանագրվել Սյունիքի մարզում՝ պայմանավորված իրավաբանական անձանց հաշիվների աճով:

Եթե 30.06.04թ. ֆիզիկական անձանց ավանդները գերակշռում էին 7 մարզերում, ապա 30.06.05թ. ֆիզիկական անձանց ավանդները գերակշռում են ընդամենը 3 մարզերում: 30.06.05թ. դրությամբ ընդհանուր ներգրավված միջոցների 43%-ը կազմում են ֆիզիկական անձանց ավանդները (30.06.04թ. դրությամբ 53%) (*տե՛ս հավելված 2.1 և գծապատկեր 8*):

Գծապատկեր 8




30.06.05թ. Երևանին բաժին էր ընկնում ընդհանուր ֆիզիկական անձանց ավանդների 91%-ը և ընդհանուր իրավաբանական անձանց ավանդների 78%-ը. 30.06.04թ. Երևանին բաժին էր ընկնում համապատասխանաբար 88%-ը և 82%-ը, իսկ 30.09.00թ.՝ 83%-ը և 85%-ը: Այսպիսով, 30.09.00-30.06.05թթ. ժամանակահատվածում ֆիզիկական անձանց ավանդների կենտրոնացվածությունը Երևանում աստիճանաբար աճել է, իսկ իրավաբանական անձանց ավանդների կենտրոնացվածությունը՝ նվազել:

Ըստ ներգրավված միջոցների ժամկետայնության՝ հաշվետու տարում ցպահանջ և ժամկետային ավանդների տեսակարար կշիռները չեն փոփոխվել և 30.06.05թ. դրությամբ կազմել են ընդհանուր ներգրավված միջոցների 60%-ը և 40%-ը (30.09.00թ. դրությամբ ժամկետային ավանդներին բաժին է ընկել ընդհանուր ներգրավված միջոցների 63%-ը, իսկ ցպահանջ ավանդներին՝ 37%-ը): Բացառությամբ ԼՂՀ-ի, ինչպես նաև Արմավիրի, Շիրակի և Արագածոտնի մարզերի, մյուս բոլոր մարզերում ցպահանջ ավանդների ծավալները գերազանցում են ժամկետային ավանդների ծավալները (*տե՛ս հավելված 2.3 և գծապատկեր 9)*:

Գծապատկեր 9

Ժամկետային և ցպահանջ ներգրավված միջոցների կառուցվածքը 30.06.05թ. դրությամբ




30.06.05թ. Երևանին բաժին էր ընկնում ընդհանուր ցպահանջ ավանդների 82%-ը և ընդհանուր ժամկետային ավանդների 84%-ը, ընդ որում. 30.06.04թ. Երևանին բաժին էր ընկնում համապատասխանաբար 87%-ը և 82%-ը, իսկ 30.09.00թ.՝ 82%-ը և 85%-ը:

Ցպահանջ միջոցների գերակշիռ մասը (66 %) կազմում են իրավաբանական անձանց միջոցները, ինչը արտահայտված է բոլոր մարզերում, իսկ ժամկետային միջոցների գերակշիռ մասը (58 %) կազմում են ֆիզիկական անձանց ավանդները, ինչը դարձյալ արտահայտված է գրեթե բոլոր մարզերում (*տե՛ս հավելվածներ 2.5 և 2.7*):

30.06.05թ. դրությամբ ներգրավված միջոցների 26%-ը կազմում են ՀՀ դրամով ավանդները. 30.09.00թ. դրությամբ ՀՀ դրամով ավանդները կազմել են ներգրավված միջոցների 24 %-ը, իսկ 30.06.04թ. դրությամբ՝ 22%-ը: Դրամով ավանդների տեսակարար կշիռը ցածր է Սյունիքի մարզում (8%), Արմավիրի մարզում (18%), ԼՂՀ-ում (25%) և Երևանում (27%) (*տե՛ս հավելված 2.4 և գծապատկեր 10*):

Գծապատկեր 10

Դրամով և արտարժույթով ներգրավված միջոցների կառուցվածքը 30.06.05թ.




Այսպես, եթե 30.09.00թ. ԼՂՀ-ում, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում ներգրավված միջոցների մեծ տեսակարար կշիռը բաժին էր ընկնում դրամով ներգրավված միջոցներին, 30.06.03թ.՝ միայն Տավուշի մարզում, 30.06.04թ.՝ Արարատի, Կոտայքի, Տավուշի մարզերում, ապա 30.06.05թ. հինգ մարզերում արդեն իսկ գերակշռում են դրամով ներգրավված միջոցները (*տե՛ս գծապատկեր 10*):

Ըստ ներգրավման աղբյուրների՝ 30.06.05թ. դրությամբ արտարժույթով ներգրավված միջոցների 50%-ը, իսկ դրամով ներգրավված միջոցների 78%-ը հավաքագրվել է իրավաբանական անձանցից (*տե՛ս հավելվածներ 2.9 և 2.11*):

3. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

Բանկային համակարգում ներգրավված միջոցների ծավալները 30.06.05թ. դրությամբ 45%-ով գերազանցել են վարկային ներդրումների ծավալները (30.06.04թ.՝ 52%-ով): Սակայն գրեթե բոլոր մարզերում վարկային ներդրումների ծավալները գերազանցում են ներգրավված միջոցների ծավալները: Միայն Սյունիքի մարզում և Երևանում ավանդների ծավալները գերազանցել են վարկերի ծավալները: Այս առումով մարզերի համար վարկավորման հիմնական աղբյուր է հանդիսանում Երևանը: Միևնույն ժամանակ, կարևորելով միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի նշանակությունը, հարկ է նշել, որ մարզերում ընդհանուր վարկերում էական դեր ունեն նաև վերոնշյալ վարկերը (*տե՛ս գծապատկեր 11*):

Գծապատկեր 11




** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.05թ. ներգրավված միջոցները կազմել են 192.2 մլրդ դրամ և վարկերն առանց ՄՎԾ՝ 94.3:*

Բանկային համակարգի ակտիվների քանակը 30.06.04-30.06.05թթ. ավելացել է 66%-ով և կազմել 256 հազար, իսկ ավանդների քանակը ավելացել է 24%-ով և կազմել 557 հազար: Նշված աճի արդյունքում Երևանին 30.06.05թ. բաժին է ընկել ակտիվների քանակի 30%-ը և ավանդների քանակի 61%-ը (30.06.04թ.՝ համապատասխանաբար 30% և 48%):

Տարածքային ստորաբաժանումների բաշխվածության առումով կարելի է նշել, որ հաշվետու տարում մեկ մասնաճյուղին[4] բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները ավելացել են և 30.06.05թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 852 մլն դրամ և 587 մլն դրամ *(տե՛ս հավելված 3 և գծապատկեր 12)*:

[4] *Գլխամասային գրասենյակները դիտվել են որպես մասնաճյուղ:*


Գծապատկեր 12



Համեմատության համար նշենք, որ 30.09.00թ. դրությամբ մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները կազմել են համապատասխանաբար 485 մլն դրամ և 459 մլն դրամ, իսկ 30.06.04թ.՝ համապատասխանաբար 782 մլն դրամ և 516 մլն դրամ:

Մեկ շնչին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները դարձյալ ցուցաբերել են աճի միտումներ՝ 30.06.05թ. դրությամբ կազմելով համապատասխանաբար 69 հազար դրամ և 47 հազար դրամ (*տե՛ս հավելված 3 և գծապատկեր 13*):

Գծապատկեր 13



Համեմատության համար նշենք, որ 30.09.00թ. դրությամբ մեկ շնչին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները կազմել են համապատասխանաբար 27 հազար դրամ և 25 հազար դրամ, իսկ 30.06.04թ. դրությամբ՝ 56 հազար դրամ և 37 հազար դրամ:

4. ԱՄՓՈՓՈՒՄ

30.09.00-30.06.05թթ. ժամանակահատվածում

ՀՀ, ինչպես նաև ԼՂՀ տարածքներում գործող բոլոր առևտրային բանկերի կողմից տրամադրված ընդհանուր վարկային ներդրումների ծավալն ավելացել է 64%-ով և կազմել 159.0 մլրդ դրամ, ընդ որում՝ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Նույն ժամանակաշրջանում ներկայիս գործող բանկերի կողմից տրամադրված ընդհանուր վարկային ներդրումների ծավալն ավելացել է 137%-ով:

Նշված ժամանակահատվածի էական փոփոխություններն են.

- վարկերի աճն ուղեկցվել է վարկերի որակի նկատելի բարելավմամբ. 30.09.00թ. ժամկետանց վարկերը կազմում էին ընդհանուր վարկերի 14%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեին Շիրակի մարզը (30%) և Երևանը՝ (17%)), իսկ 30.06.05թ. դրությամբ՝ ընդհանուր վարկերի ընդամենը 1%-ը (ամենամեծ տեսակարար կշիռն ունեին Գեղարքունիքի մարզը (2.4%) և Լոռու մարզը՝ (1.9%)),
- ըստ տնտեսության ճյուղերի ընդհանուր վարկային ներդրումների կշիռներում զգալի նվազել է արդյունաբերության ճյուղի վարկավորման տեսակարար կշիռը և աճել են առևտրի և սպառողական վարկերի տեսակարար կշիռները (ընդ որում՝ վերոնշյալ միտումները դրսևորվել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում):

Ինչ վերաբերում է ըստ մարզերի վարկային ներդրումների կենտրոնացվածությանը, ապա պետք է նշել, որ թեպետ 30.06.00-30.06.05թթ. ժամանակահատվածում Երևանում վարկերի կենտրոնացվածությունը նվազել է 1.7 տոկոսային կետով, այնուամենայնիվ դեռևս վարկային ներդրումների կենտրոնացվածությունը Երևանում բարձր է (67.7%), որը 2000թ. առ այսօր տատանվում է այդ մակարդակի շրջանակներում:

Դիտարկվող ժամանակահատվածում (բոլոր բանկերը) ավանդներն ավելացել են 126%-ով (ներկայիս բանկերի կտրվածքով՝ 234% աճ) և կազմել 231.0 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում (բոլոր բանկերը) գրեթե բոլոր մարզերում (բացառությամբ Կոտայքի և Վայոց ձորի մարզերի) արձանագրվել է ավանդների աճ: Ինչ վերաբերում է ըստ մարզերի ավանդների կենտրոնացվածությանը, ապա 30.06.00-30.06.05թթ. ժամանակահատվածում Երևանում ավանդների կենտրոնացվածությունը նվազել է 1.0 տոկոսային կետով՝ կազմելով 83%, և 2000թ. առ այսօր տատանվում է այդ մակարդակի շրջանակներում:

30.06.04-30.06.05թթ. ժամանակահատվածում

ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է վարկային ներդրումների աճ, իսկ ավանդների աճ է արձանագրվել Երևանում և 8 մարզերում (բացառությամբ Տավուշի մարզի, Վայոց ձորի մարզի և ԼՂՀ-ի): 30.06.04-30.06.05թթ. ժամանակահատվածում վարկային ներդրումների աճի տեմպը (28% աճ) գերազանցել է ավանդների աճի տեմպը (22.5% աճ), ընդ որում՝ բացի Սյունիքի և Արմավիրի մարզերից, մյուս բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է վերոնշյալ պատկերը:

Հատկանշական է, որ ՀՀ մարզերում (բացառությամբ Երևանի) և ԼՂՀ-ում հաշվետու տարում արձանագրված 14.1 մլրդ դրամ աճի 49%-ը ապահովել է սպառողական վարկերի աճը: Քանի որ Երևանում գյուղատնտեսության ճյուղից հետո թույլ կենտրոնացվածություն ունեն սպառողական վարկերը (60%), ապա սպառողական վարկերի արագատեմպ աճի միտումները հանգեցրին հաշվետու տարում Երևանում վարկային ներդրումների կենտրոնացվածության մակարդակի նվազման՝ 70.0%-ից մինչ 67.7%-ի:

Հաշվետու տարվա էական փոփոխություններն են.

- 30.06.04-30.06.05թթ. ժամանակահատվածում ՀՀ 10 մարզերում և ԼՂՀ-ում տեղաբաշխված համընդհանուր վարկային ներդրումների աճի տեմպը (61% աճ) ավելի քան 2.5 անգամ գերազանցել է Երևանում տեղաբաշխված վարկային ներդրումների աճի տեմպը (24% աճ): Ակտիվների քանակն ավելացել է 66%-ով և կազմել 256 հազար, ընդ որում՝ ՀՀ 10 մարզերում և ԼՂՀ-ում համընդհանուր ակտիվների քանակի աճի տեմպը և Երևանում ակտիվների աճի տեմպը եղել են հավասարաչափ՝ կազմել են 66% (ընդհանուր ակտիվների քանակում Երևանի մասնաբաժինը 30.06.04-30.06.05թթ. չի փոփոխվել և կազմել է ընդհանուր ակտիվների քանակի 30%-ը),
- երկարաժամկետ վարկերը (1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ) ապահովել են ավելի արագատեմպ աճ՝ 42%, քան կարճաժամկետ վարկերը՝ 15% (այս պատկերն է եղել Երևանում, ԼՂՀ-ում, Կոտայքի և Շիրակի մարզերում): Նշվածի արդյունքում ընդհանուր վարկերում երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 5 տոկոսային կետով և կազմել 52%,
- ընդհանուր վարկային ներդրումների կազմում էապես (12 տոկոսային կետով) աճել է փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի տեսակարար կշիռը՝ 30.06.05թ. կազմելով ընդհանուր վարկերի 39%-ը (ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի տեսակարար կշռի աճ),
- ավանդների աճը ամբողջովին ապահովվել է իրավաբանական անձանց ավանդների աճի հաշվին, որի արդյունքում իրավաբանական անձանց ավանդների տեսակարար կշիռը ավելացել է

10 տոկոսային կետով՝ 30.06.05թ. կազմելով ընդհանուր ավանդների 57%-ը (բացի Արագածոտնի մարզից, ՀՀ մյուս բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է իրավաբանական անձանց ավանդների տեսակարար կշռի աճ),

- ավանդների քանակն ավելացել է 24%-ով, ընդ որում՝ ընդհանուր ավանդների քանակում Երևանի մասնաբաժինը ավելացել է 13 տոկոսային կետով՝ կազմելով 61%,
- դրամային ավանդների աճը (46% աճ) զգալի գերազանցել է արտարժութային ավանդների աճը (16% աճ), որի արդյունքում դրամով ավանդների տեսակարար կշիռն ավելացել է 4 տոկոսային կետով՝ 30.06.05թ. կազմելով ընդհանուր ավանդների 26%-ը (բացառությամբ Կոտայքի, Տավուշի և Սյունիքի մարզերի, ՀՀ մյուս բոլոր մարզերում արձանագրվել է դրամային ավանդների առաջանցիկ աճի տեմպ, իսկ ԼՂՀ-ում դրամային ավանդների նվազման տեմպը զիջել է արտարժութային ավանդների նվազման տեմպին):

30.06.05թ. դրությամբ

Տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում (բացառությամբ գյուղատնտեսության ճյուղի) վարկերի բաշխվածությունը հիմնականում կենտրոնացված է Երևանում:

Ըստ վարկային ներդրումների ներմարզային կառուցվածքի.

Արդյունաբերության ճյուղ. այս ճյուղում Սյունիքի և Կոտայքի մարզերը կենտրոնացվածություն են դրսևորում. տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 43%-ը և 37%-ը հատկացված է արդյունաբերության ճյուղին:

Գյուղատնտեսության ճյուղ. Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերում տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 45%-ը, 34%-ը և 32%-ը հատկացված է գյուղատնտեսության ճյուղին:

Սպառողական վարկեր. բոլոր մարզերում բավականին բարձրացել է սպառողական վարկերի տեսակարար կշիռը (տատանվում է 30-61%-ի միջակայքում), իսկ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Շիրակի, Գեղարքունիքի, Տավուշի և Լոռու մարզերը (48 - 61%): Չնայած հիփոթեքային վարկերի 96%-ը բաժին է ընկնում Երևանին և միայն 4%-ն է տեղաբաշխված ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում, այնուամենայնիվ հատկանշական է, որ 8 մարզերում ևս իրականացվել է հիփոթեքային վարկավորում (հիփոթեքային վարկեր դեռևս չեն տրամադրվել Տավուշի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերին) (*տե՛ս հավելված 1.1*):

Մարզերում միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի ծավալները մարզի ընդհանուր վարկային ներդրումների ծավալներում զբաղեցնում են նշանակալի տեղ (19%-48%), ընդ որում՝ ամենափոքր մասնաբաժինն ունի Սյունիքի մարզը, ամենամեծը՝ Տավուշի մարզը: Հատկանշական է, որ ԼՂՀ-ում միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկեր չկան:

Ներգրավված միջոցների կազմում դրամով ներգրավված միջոցների տեսակարար կշիռը կազմել է 26%, իսկ վարկերի կազմում՝ 33%: Դրամով ներգրավված միջոցների ծավալները գերազանցել են արտարժույթով ներգրավված միջոցների ծավալները հինգ մարզերում, իսկ վարկերի կազմում բոլոր մարզերում արտարժույթով վարկերի ժավալները գերազանցել են դրամով վարկերի ծավալները:

Ժամկետային ավանդների ծավալները գերազանցում են ցպահանջ ավանդների ծավալները ԼՂՀ-ում և երեք մարզերում՝ Արմավիրի, Շիրակի, Արագածոտնի մարզերում:

ՉԵԽԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

Դրամավարկային քաղաքականության վարչություն
Վահրամ Ջանվելյան

1. ՉԵԽԻԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

1993 թվականին Չեխիան շրջանառության մեջ մտցրեց իր սեփական արժույթը՝ չեխական կրոնան, որը փոխարինելու եկավ նախկին Չեխոսլովակիայի կրոնային: Նոր հիմնադրված Չեխիայի ազգային բանկի (Չեխիայի բանկ) դրամավարկային քաղաքականության իրականացման համար կարևոր նշանակություն ստացավ փոխարժեքի ռեժիմի ընտրությունը և կրոնայի փոխարժեքի սահմանումը: Բանկը երկու կարևոր խնդիր պետք է լուծեր: Նախ՝ ընտրություն կատարեր լողացող և հաստատագրված փոխարժեքների միջև, երկրորդ՝ հաստատագրված ռեժիմի ընտրության դեպքում սահմաներ սկզբնական փոխարժեք: Չեխիայի բանկը ընտրեց տատանումների որոշակի միջակայքով հաստատագրված փոխարժեքի ռեժիմը: Ըստ էության, հաստատագրված փոխարժեքի ռեժիմը կայունացրեց գնաճի սպասումները: Ընդհանուր առմամբ, Չեխիայի տնտեսությունը, Եվրոպայի մյուս անցումային երկրների համեմատությամբ, ավելի լավ վիճակում էր, ինչն արտահայտվել է ՀՆԱ (համախառն ներքին արդյունք) անկման, գնաճի և գործազրկության ավելի ցածր մակարդակներով, իսկ 1993 թվականից հետո ՀՆԱ նվազում այլևս տեղի չի ունեցել: 1991 թվականին, գների կտրուկ և համատարած ազատականացումից հետո, հզոր գնաճային ճնշում արձանագրվեց 1993 թվականին, երբ մտցվեց ԱԱՀ (ավելացված արժեքի հարկ) 23 % դրույքաչափ, որը Եվրոմիության չափանիշներով բավականին բարձր էր:

Չեխիայի բանկի դրամավարկային քաղաքականությունը ի սկզբանե հենվեց 2 սկզբունքների վրա: Առաջինը կրոնայի հաստատագրված փոխարժեքն էր հիմնական արժույթների զամբյուղի նկատմամբ: Մինչև 1996 թվականը փոխարժեքի տատանումների սահմանը հասցվեց ±0.5 %-ի: Սկզբնական շրջանում արժույթների զամբյուղը ներառում էր 5 արժույթ, սակայն ավելի ուշ՝ զամբյուղում մնացին միայն ԱՄՆ դոլարը և գերմանական մարկը, ընդ որում՝ վերջինս ավելի մեծ կշիռ ուներ: Դա արտահայտում էր Չեխիայի արտաքին առևտրային հարաբերությունների ուղղվածությունը: Անցման առաջին տարիներին արժեքավորման կամ արժեզրկման ճնշումներ չկային. վճարային հաշվեկշիռը հավասարակշռված էր, և դրամավարկային քաղաքականությունը կարող էր նպատակաուղղվել փողի առաջարկի կառավարմանը: Մյուս սկզբունքը փողի առաջարկի նպատակադրումն էր: Այս ռազմավարությունը հիմնվում էր Բունդեսբանկի ռազմավարության վրա: Պետք է նշել, որ ի սկզբանե ներքին հակասություն կար այս երկու ռազմավարությունների միջև, որի բացասական հետևանքները արտահայտվեցին հետագայում:

1994-1996 թվականներին աճեց մակրոտնտեսական անհավասարակշռությունը, լուրջ խնդիրներ առաջացան բանկային համակարգում, ազատականացվեց արժութային շուկան: 1994-1995 թվականները դինամիկ տնտեսական աճի տարիներ էին, չնայած ուղեկցվեցին տնտեսական հավասարակշռության խախտումներով: Դրական տեղաշարժեր էին նկատվում՝ տարեկան 5% տնտեսական աճ՝ 3% գործազրկության պայմաններում: Գնաճը նվազել էր և 10 %-ից ցածր մակարդակ ուներ, իսկ բյուջեն հիմնականում հավասարակշռված էր: Այս միտումների հիմնական պատճառը կապիտալի մեծ ներհոսքն էր երկիր: Չեխիան առաջին անցումային երկիրն էր, որը դարձավ OECD (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) անդամ: Կրոնան դարձավ փոխարկելի արժույթ: Սակայն ավելի մանրամասն վերլուծությունը բացահայտում է այս իրավիճակի թույլ կողմերը՝ աշխատավարձի առաջանցիկ աճը արտադրողականության աճի նկատմամբ, ամբողջական պահանջարկի ավելի բարձր աճը ՀՆԱ աճի նկատմամբ, պետության ներդրումային դիրքի անցումը ավելցուկից պակասուրդի, հիմնականում կարճաժամկետ ֆինանսական ակտիվների խոշոր ներհոսքը: Այս բոլորը վկայում էին շիկացած (overheated) տնտեսության մասին: Նման վիճակն արտահայտվեց վճարային հաշվեկշռի ընթացիկ և առևտրային հաշիվների վատացմամբ, որոնք, միջազգային չափանիշներով, 1996 թվականին հասան վտանգավոր սահմանագծի: Երկրի ներքին և արտաքին պարտքի աճը ազդեց նաև բանկային համա-

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

կարգի վրա՝ գումարվելով ոլորտում արդեն իսկ առկա խնդիրներին: 1995 թվականին վճարային հաշվեկշռի կապիտալի հաշվի ավելցուկը դարձավ 223 մլրդ կրոնա կամ ՀՆԱ 18%-ը: Դա կապված էր ընթացիկ հաշվի աճող պակասուրդի ծածկման հետ: Փոխառված արտաքին պարտքը գլխավորապես ուղղվում էր բանկային համակարգ, իսկ բանկերը այդ միջոցները արդյունավետ տեղաբաշխելու սահմանափակ հնարավորություններ ունեին: Առկա էր մեծ ռիսկ, որ այդ միջոցները կուղղվեն սպառմանը՝ ավելի մեծացնելով գնաճային ճնշումները: Հաշվի առնելով, որ պետության պարտքը մեծ չէր, և համապատասխան ծավալի պետական արժեթղթեր չկային՝ ավելցուկային ներհոսքը չեզոքացնելու նպատակով կենտրոնական բանկը սկսեց թողարկել սեփական արժեթղթեր, որի արդյունքում ներքաշվեց 200 մլրդ կրոնա (կամ մոտ 7.6 մլրդ դոլար, որը փողի բազայի մոտ 30-40 %-ն էր): Դրամավարկային քաղաքականության իրականացումը ևս դժվարացավ: Դա մասամբ պայմանավորված էր այն հանգամանքով, որ անկայուն տնտեսական միջավայրում թուլացել էր փողի առաջարկի և գնաճի կապը: Բացի այդ, անկայունությանը նպաստել էին նաև ֆինանսական նորամուծությունները և կապիտալ հոսքերի աստիճանական ազատականացումը: Այնուամենայնիվ, հիմնական խնդիրն այն էր, որ քաղաքականությունը երկու հակոտնյա նպատակներ էր հետապնդում՝ հաստատագրված փոխարժեք և փողի առաջարկի կառավարում: Աշխատավարձի աճը արտադրողականության աճին գերազանցելու, ներդրումների մեծ մասը պետական հատվածում իրականացնելու հետևանքով աճում էր համախառն պահանջարկը, որն էլ ուղեկցվում էր կապիտալի խոշոր ներհոսքով: Իրավիճակն ավելի բարդացավ ֆինանսական շուկայի գործարքների աստիճանական ազատականացման, ներքին տոկոսադրույքների՝ համաշխարհային տոկոսադրույքներից բարձր մակարդակի և Չեխիայի տնտեսության նկատմամբ արտաքին ներդրողների դրական սպասումների ձևավորման արդյունքում: Միաժամանակ, արտաքին կապիտալի ներհոսքը հիմնականում կարճաժամկետ բնույթ ուներ: Ոչ ճկուն ներքին պահանջարկի պայմաններում հնարավոր չէր կլանել լրացուցիչ ռեսուրսներ: Սպեկուլյատիվ ներհոսքի դեմ պայքարի քայլերից էր փոխարժեքի տատանումների միջակայքի ընդլայնումը մինչև ±7.5 %, ինչը մեծացրեց փոխարժեքի ռիսկը օտարերկրյա ներդրողների համար: Արդյունքում՝ մեծացավ նաև դրամավարկային քաղաքականության ճկունությունը՝ թույլ տալով ավելի արդյունավետ ինտերվենցիաներ իրականացնել և կառավարել փողի առաջարկը: Կապիտալի ներհոսքի տեմպերը իրապես նվազեցին, և փողի առաջարկի աճը վերադարձավ իր նպատակային սահմաններին: Այնուամենայնիվ, իրականացվող դրամավարկային քաղաքականությամբ դեռևս հնարավոր չէր զսպել պահանջարկի ճնշումները, մանավանդ որ դրան չէին աջակցում մակրոտնտեսական մյուս քաղաքականությունները: Դրամավարկային զսպողական քաղաքականությունը դարձավ անհրաժեշտություն՝ ավելի թույլ հարկաբյուջետային քաղաքականության և աշխատավարձի աճի բացասական ազդեցությունը չեզոքացնելու համար: 1996 թվականին Չեխիայի բանկը ստիպված կրճատեց փողի առաջարկը՝ բարձրացնելով տոկոսադրույքները և պարտադիր պահուստավորման նորման, որը, սակայն, թույլ ազդեցություն ունեցավ բանկերի վարկավորման ծավալների և գնաճի վրա: 1997 թվականին տնտեսական աճը կտրուկ նվազեց: Նկատվում էր նաև փողի բազմարկչի անկայունություն, ինչը նվազեցնում էր փողի առաջարկի կարգավորման հնարավորությունները: 1996 թվականին ռեպո համաձայնագրերը դարձան դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքը, որի միջոցով ԿԲ-ն անուղղակորեն փորձում էր չեզոքացնել ավելցուկային իրացվելիությունը, որ տնտեսություն էր մուտք գործում ինտերվենցիաների միջոցով: Հաստատագրված փոխարժեքի, ազատականացված կապիտալի հոսքերի և համեմատաբար թույլ հարկաբյուջետային և եկամտային քաղաքականության պայմաններում՝ զուտ շուկայական գործիքների վրա հիմնված դրամավարկային քաղաքականությունը ավելի խորացրեց ճգնաժամը: Հաստատագրված փոխարժեքը պահելու համար իրականացվող ինտերվենցիաները հանգեցրին փողի առաջարկի կտրուկ ավելացման: Իրացվելիությունը կլանելու փորձերը տոկոսադրույքների բարձրացման պատճառ դարձան, ինչն էլ ավելի խթանեց կապիտալի ներհոսքը: Ամբողջական պահանջարկի և առաջարկի միջև աճող ճեղքվածքը գնաճային ճնշումներ առաջացրեց:

1997-1998 թվականներին արդեն արժութային իրարանցում առաջացավ, և կառուցվածքային ճշգրտող միջոցառումների իրականացման անհրաժեշտությունն անխուսափելի էր: Սպեկուլյատիվ կապիտալի ներհոսքի ազդեցությամբ կրոնայի փոխարժեքի արժեքավորումը, բնականաբար, անվերջ շարունակվել չէր կարող: Տնտեսական անկայունությունը բնութագրվում էր հատկապես վճարային հաշվեկշռի վիճակով: Արտաքին միջոցների ներհոսքը իր բարձրակետին հասավ 1995 թվականին, երբ կարճաժամկետ կապիտալի կշիռը հատկապես մեծ էր: 1997 թվականին ներհոսքը նշանակալիորեն նվազել էր և առաջին անգամ չբավարարեց ընթացիկ հաշվի պակասուրդը ծածկելու համար. Չեխիայի բանկը ստիպված էր նվազեցնել արտարժութային պահուստների մակարդակը:

1997 թվականի մայիսին կրոնայի ճգնաժամը իր բարձրակետին հասավ՝ անվանական փոխարժեքը 10 %-ով արժեզրկվեց տրենդի և 15 %-ով՝ նախաճգնաժամային շրջանի նկատմամբ: Ազդեցությունն ավելի զգալի էր տնտեսության վրա: Թանկացավ հումքը, արձանագրվեցին չվճարումներ, արտարժույթի արտահոսք երկրից: Չափից ավելի արժեզրկումը զսպելու համար բանկը ինտերվենցիաներ իրականացրեց: Լոմբարդային վարկի տոկոսադրույքը ժամանակավորապես բարձրացվեց մինչև 50 %, կիրառվեցին վար-

չարարական միջոցառումներ: 1997 թվականի մայիսին հայտարարվեց, որ փոխարժեքի ռեժիմը դառնում է կառավարվող լողացող: Մշակվեց տնտեսության վերականգնման ծրագիր, ըստ որի՝ նախատեսվում էին բյուջեի ծախսերի հետագա կրճատում, զսպողական դրամավարկային քաղաքականության իրականացում, արժույթի կայունացման միջոցառումներ, բյուջեից ֆինանսավորվող ներմուծման խիստ կրճատում, աշխատավարձի աճի սահմանափակում, այդ թվում՝ բյուջետային աշխատողների աշխատավարձի սառեցում: Միաժամանակ, գնաճի վրա փոխարժեքի արժեզրկման ազդեցությունը ընդամենը 2 % էր: Եթե հաշվի առնենք Չեխիայի տնտեսության բացվածության աստիճանը արտաքին առևտրի նկատմամբ, ապա դա վկայում է ամբողջական պահանջարկի զսպման արդյունավետության մասին: Ճգնաժամի հիմնական հետևանքներից մեկը անվանական խարիսխի «կորուստն» էր: Նախկին երկնպատակային քաղաքականության իրականացումը և՛ տեսականորեն, և՛ գործնականում անհնար էր: Վարվող քաղաքականության նկատմամբ նախկին վստահությունը վերականգնելու համար անհրաժեշտ էր հստակ, թափանցիկ նպատակի առկայություն: 1997 թվականի վերջին անցում կատարվեց գնաճի նպատակադրման ռեժիմին: Այս ռեժիմի ընտրությունը մի քանի նպատակ էր հետապնդում.

- հստակ սահմանված և հրապարակային գնաճի նպատակային մակարդակի և հատկապես նվազող գնաճի անվանական խարիսխի առկայություն,
- փողի ագրեգատների և գնաճի միջև կապի քանակական բնութագրման անորոշություններից խուսափում, քանի որ արդեն քաղաքականության միջանկյալ նպատակը դառնում էր հենց գնաճի կանխատեսված մակարդակի ապահովումը (կանխատեսման գործընթացի վերաբերյալ տե՛ս Հավելված 3),
- տնտեսության մեջ որոշակիության տարրի ներմուծումը և գնաճի սպասումների ձևավորումը,
- դրամավարկային քաղաքականության իրականացման ներքին հակասությունների վերացումը:

Գնաճի նպատակադրումը ենթադրում էր գնաճի նպատակային մակարդակի սահմանում և հրապարակում՝ դրա ապահովման համար կիրառելով դրամավարկային գործիքներ: Դիտարկումները ցույց էին տալիս, որ տոկոսադրույքների աճը կամ նվազումը ժամանակային լագով ազդում է գնաճի վրա, և Չեխիայում փոխանցումային ազդեցությունը արտահայտվում է 4-6 եռամսյակ հետո: Սկզբում կիրառվում էր գնաճի պայմանական կանխատեսումը: Այս դեպքում գնաճը մոդելավորվում էր առկա կայուն տոկոսադրույքի պահպանման ենթադրությամբ: Կանխատեսման համակարգի զարգացումը և տնտեսության ագրեգացված մոդելի ներդրումը թույլ տվեցին անցում կատարել գնաճի ոչ պայմանական կանխատեսումների, որը ներառում էր նաև կենտրոնական բանկի արձագանքը մակրոտնտեսական զարգացումների նկատմամբ: 1997 թվականին սահմանվեց գնաճի նպատակային մակարդակը 2002 թվականի համար՝ 4.5±1% տարեկան զուտ գնաճ, որը գնաճի միջինժամկետ նպատակային մակարդակ էր: Գնաճի աստիճանական կրճատում ապահովելու և համապատասխան սպասումներ ձևավորելու համար սահմանվեց նաև միջանկյալ նպատակ 1998 թվականի համար՝ 6±0.5 % (տե՛ս Հավելված 2): Չնայած ընդհանուր առմամբ այս նպատակային մակարդակները կարող են բնութագրվել որպես գնաճի կրճատման մեղմ տարբերակներ, այնուամենայնիվ, նշված քաղաքականությունը քննադատվեց՝ բնութագրվելով որպես չափից ավելի հավակնոտ և ՀՆԱ աճը խոչընդոտող: Նման արձագանքը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Չեխիայի բանկը նշված մակարդակները որոշելու ժամանակ կառավարության հետ չէր խորհրդակցել, չնայած դա բացատրվում էր այդ ժամանակ տեղի ունեցող կառավարության կազմի փոփոխությամբ: Զուտ գնաճը սահմանվեց որպես ՍԳԻ (սպառողական գների ինդեքս) փոփոխություն՝ առանց հաշվի առնելու կարգավորվող գներն ու անուղղակի հարկերը: Այսպիսով, զուտ գնաճի կազմում ընդգրկվեցին ընդհանուր զամբյուղի 82 %-ը կամ 754 ապրանքից 663-ը: Գների նման ցուցիչի ընդունումը պայմանավորված էր հաջորդ կառավարության մտադրությունների վերաբերյալ առկա անորոշությամբ: Գնաճի նպատակադրման հաջողությունը մասամբ պայմանավորվեց դրամավարկային քաղաքականության վերաբերյալ բանկի կողմից որոշումների կայացման գործընթացի թափանցիկությամբ: Գնաճը որոշակի սահմանված միջակայքում պահելու Չեխիայի բանկի մտադրությունները բխում էին տնային տնտեսությունների, տնտեսավարող սուբյեկտների, կառավարության շահերից, որոնք կարող էին իրենց ծրագրերի կանխատեսման ավելի կայուն դաշտ ունենալ: Տոկոսադրույքների վերաբերյալ որոշումները, դրանց հիմքում ընկած ենթադրությունները սկսեցին հրապարակվել և պարզաբանվել բանկի խորհրդի նիստերից հետո տեղի ունեցող մամուլի ասուլիսների ժամանակ:

1999–2001 թվականները բնութագրվեցին որպես տնտեսության աստիճանական կայունացման, գնաճի մակարդակի նվազեցման տարիներ: 1999 թվականին տնտեսությունը դեռևս ստագնացիայի փուլում էր: Հետագա երկու տարիներին տարեկան տնտեսական աճը կազմեց 3%: Ամենաբարձր աճը գրանցվեց ներդրումների գծով՝ շնորհիվ արտաքին ռեսուրսների ներհոսքի: ՀՆԱ աճը մասամբ զսպվում էր արտահանման նկատմամբ ներմուծման բարձր աճով: 1998 թ. կեսերից մինչև 1999 թ. 2-րդ կիսամյակ

ժամանակահատվածը բնութագրվեց գնաճի կտրուկ նվազմամբ՝ պայմանավորված արտաքին և ներքին գործոններով: Արտաքին գործոններից զգալի էր սննդի և հումքի համաշխարհային գների նվազումը, իսկ ներքին գործոններից էին տնտեսական գործունեության ակտիվության անկումը և մանրածախ առևտրի ոլորտում մրցակցության խթանման քաղաքականության իրականացումը: Գնաճային ճնշումների թուլացումը թույլ տվեց Չեխիայի բանկին նվազեցնել տոկոսադրույքները: 2000-2001 թվականներին արձանագրվեց գնաճի աստիճանական աճ՝ բանկի սահմանած գնաճի նպատակային միջակայքի ուղղությամբ (տնտեսության զարգացումները բնութագրող ցուցանիշները տե՛ս Հավելված 1-ում): Սկզբում գնաճը պայմանավորվեց ներմուծման, հատկապես՝ նավթի գների աճով և դոլարի նկատմամբ կրոնայի արժեզրկմամբ: 2000 թվականի կեսերին սննդամթերքի գների աճը ներքին շուկայում ավելի ազդեցիկ գործոն դարձավ: Միաժամանակ, ներքին պահանջարկի ոչ բարձր աճը և ուժեղ մրցակցությունը թույլ չտվեցին, որ մանրածախ ապրանքների շուկայում գնաճային ազդակներն ավելի ուժեղանան: Հաշվի առնելով տնտեսական աճող ակտիվության հետևանքով նկատվող գնաճային երևույթները և դրանց ազդեցությունը գնաճային սպասումների վրա, ինչպես նաև արտաքին ծախսային շոկերի ինտենսիվությունն ու տևողությունը, Չեխիայի բանկը մշակեց համապատասխան քաղաքականություն: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տոկոսադրույքների լագային ազդեցությունը գնաճի վրա 4 - 6 եռամսյակ է՝ բանկը տոկոսադրույքները մոտ 15 ամիս թողեց անփոփոխ: Դարձյալ արտաքին շոկերով պայմանավորված՝ հետագայում տեղի ունեցավ գնաճի նվազում և կրոնայի արժեքավորում, ինչը թույլ տվեց Չեխիայի բանկին իջեցնել տոկոսադրույքները: Այս իջեցումը նպաստեց, որ տնային տնտեսությունները ակտիվորեն ձեռք բերեն փոխառություններ՝ այդպիսով չեզոքացնելով կրճատված արտաքին պահանջարկի բացասական հետևանքները: Վերլուծությունները ցույց տվեցին, որ մոտ ապագայում գնաճային ճնշումների արտահայտման վտանգներ չկան:

Բանկի դրամավարկային քաղաքականության ռազմավարության վերաբերյալ փաստաթղթի ընդունումը քաղաքականությունը նոր պայմաններին համապատասխանեցնելու նպատակ ուներ, այսինքն՝ սահմանվում էր Եվրոմիությանը ինտեգրման ընդհանուր ռազմավարությանը համահունչ՝ գնաճի երկարաժամկետ նպատակ: Ռազմավարական այդ փաստաթղթում ասվում էր, որ Չեխիայում և Եվրոմիության երկրներում գնաճի մակարդակների տարբերության հիմնական պատճառը Չեխիայում ոչ արտահանելի ապրանքների և հատկապես ծառայությունների ոլորտի ավելի բարձր գներն են, իսկ այդ գների միասնականացումը երկար ժամանակ կպահանջի, քանի որ անհրաժեշտ կլինի ծառայությունների ոլորտում արձանագրել արտադրողականության ավելի բարձր աճ, քան մյուս երկրներում է: Ռազմավարության մեջ երկարաժամկետ գնաճի մակարդակը սահմանվեց որպես 2±1% զուտ գնաճ՝ 2005 թվականի համար: Այս նպատակային մակարդակը սահմանելիս Բանկի խորհուրդը հայտարարեց, որ նշված ցուցանիշի ապահովումը մեծապես կախված է կառավարության աջակցությունից:

2000 թվականին Եվրոմիության սկզբունքներին ռազմավարության ներդաշնակեցման նպատակով փոխվեց Բանկի մասին օրենքը: Այդ փոփոխությամբ՝ որպես Բանկի հիմնական նպատակ ընդունվեց ոչ թե դրամավարկային կայունությունը, այլ գների կայունությունը: Սահմանվեց, որ Բանկը պետք է նպաստի կառավարության տնտեսական քաղաքականությանը, եթե դա չի խոչընդոտում հիմնական նպատակի իրականացմանը: Բացառվեց կառավարության կարճաժամկետ վարկավորումը, բացառվեց նաև Բանկի կողմից վարկերի և տոկոսադրույքների սահմանափակման հնարավորությունը: 2001 թվականին Չեխիայի բանկում կատարված կառուցվածքային փոփոխությամբ հատկապես մեծ դեր հատկացվեց վերլուծություններին, ինչը էապես նպաստեց դրանց մակարդակի և որակի բարձրացմանը: Հիմնական վերլուծական աշխատանքը բաշխվեց որոշակի դեպարտամենտների միջև, իսկ դրանց աշխատանքների կոորդինացումը իրականացնելու էր մի նոր դեպարտամենտ՝ կառավարչի ղեկավարությամբ: Վերլուծությունների հիմնական շրջանակներն էին՝ Չեխիայի տնտեսության ինտեգրումը Եվրոմիությանը, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը, իրական հատվածը և ֆինանսական հատվածը:

2002 թվականին գնաճի նպատակադրման համակարգում կատարվեցին հետագա փոփոխությունները: Մինչ այդ, գնաճի նպատակային մակարդակը հայտարարվում էր որպես համապատասխան տարվա վերջի դրությամբ տարեկան զուտ գնաճի մեծություն: Օրինակ՝ 2000 թվականի ապրիլին 2001 թվականի դեկտեմբերի համար գնաճի նպատակային միջակայքը կանխանշվել էր 2 - 4% (տե՛ս Հավելված 2): Գնաճի նպատակային մակարդակների թափանցիկությունը ապահովելու և հասարակության հետ շփումները բարելավելու նպատակով Չեխիայի բանկը որոշեց անցում կատարել հիմնական գնաճի նպատակադրմանը, որը չափվելու էր ՍԳԻ տարեկան մեծությամբ՝ գծային նվազող միջակայքով, և բխում էր Եվրոմիությանը ինտեգրվելու մտադրություններից: Չեխիայի բանկը փոփոխեց նաև այն գործոնների ցանկը, որոնք հիմնականում գտնվում էին դրամավարկային քաղաքականության տեսադաշտից դուրս, և որոնց բանկը ուղղակիորեն չէր արձագանքելու դրամավարկային քաղաքականության գործիքներով, եթե

անգամ դրանք հանգեցնեին նպատակային մակարդակից գնաճի շեղման: Ներկայումս այդ գործոններն են՝ հումքի համաշխարհային գների նշանակալի փոփոխությունները, էներգիայի արտադրության համար օգտագործվող նյութերի ու ապրանքների գների փոփոխությունները, փոխարժեքի նշանակալի փոփոխությունները, որոնք կապված չեն տնտեսության ներքին հիմնադրույթների փոփոխության և դրամավարկային քաղաքականության հետ, գյուղատնտեսության արտադրության պայմանների գների վրա ազդող փոփոխությունները, կարգավորվող գների փոփոխությունները, որոնց ներգործությունը գնաճի վրա կգերազանցի 1-1.5 տոկոսային կետը, և անուղղակի հարկերի աստիճանական փոփոխությունները:

2002 թվականին դրամավարկային և մակրոտնտեսական լուրջ խնդիր էր կրոնայի արժեքավորումը: 2002 թվականին եվրոյի և դոլարի նկատմամբ կրոնան արժեքավորվեց ավելի քան 15 %-ով, որը բացասաբար անդրադարձավ երկրի մրցունակության վրա: Կրոնայի արժեքավորման պատճառներից էին արտաքին ներդրողների մասնակցությունը մասնավորեցման գործընթացին և որոշ խոշոր ներդրումային ծրագրերի իրականացմանը: Միայն տարվա վերջին հաջողվեց փոխարժեքի արժեքավորումը կասեցնել՝ առավելապես Չեխիայի բանկի և կառավարության միջև համաձայնության շնորհիվ, ըստ որի՝ մասնավորեցումից արտարժութային մուտքերը կուտակվելու էին Չեխիայի բանկում՝ փոխարկվելով արտարժութային պահուստների: Մյուս գործոնը ցածր տոկոսադրույքներն էին, որոնք մեծացրին արտարժութային շուկայում Բանկի ինտերվենցիաների արդյունավետությունը:

Բանկային համակարգը 2002 թվականին կայուն էր: Արտաքին խոշոր կորպորացիաներին խոշոր բանկերի վաճառքը նպաստեց նոր մոտեցումների և կառավարման նոր որակների կիրառմանը, կապիտալացման և արդյունավետության բարձրացմանը: Միաժամանակ, ծառայությունների քանակի մեծացմանը զուգընթաց, բանկային աշխատողների թիվը 1/3-ով կրճատվեց:

Վերջին երկու տարիները Չեխիայում բարենպաստ են եղել տնտեսական աճի առումով. նախորդ տարիների համեմատ արձանագրվել է ավելի բարձր տնտեսական աճ: Ցածր է եղել նաև գնաճը: 2004 թվականին գրանցվել է ներդրումների բարձր աճ՝ մեղմ դրամավարկային քաղաքականության, Եվրոմիություն մուտքի և ձեռնարկությունների բարձր շահութաբերության շնորհիվ: Արտահանման աննախադեպ աճի արդյունքում առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը զգալիորեն կրճատվել է: Դրական տեղաշարժեր են արձանագրվել նաև հարկաբյուջետային քաղաքականության ոլորտում:

Սակայն ԱՄՀ (Արժույթի միջազգային հիմնադրամի) գնահատականներով՝ այս նվաճումները բավարար համարել չի կարելի, քանի որ դրանք չեն ուղեկցվել հիմնարար բարեփոխումներով՝ ռիսկային դարձնելով նաև ներկա բարենպաստ վիճակի պահպանումը՝ գլոբալ մրցակցության աճի և բնակչության ծերացման պատճառով: Ակտիվ բնակչության թվաքանակի կրճատման տեմպով Չեխիան գերազանցում է այլ OECD երկրներին և Կենտրոնական Եվրոպայի երկրներին: Այս միտումները վտանգում են տնտեսական աճը և հարկաբյուջետային կայունությունը երկրում:

Բիզնեսի իրավական միջավայրը դեռևս կարգավորման կարիք ունի, բիզնեսի գրանցման և վարման վարչարարական ընթացակարգերը բարդ են և երկարատև, վարկատուների իրավունքները լիովին պաշտպանված չեն: Այսպիսով, միջինժամկետ հատվածում Եվրոմիության կենսամակարդակին հասնելու առումով՝ հաջողությունները կախված են հարկաբյուջետային կայունությունից, աշխատուժի շուկայի ճկունությունից և բիզնես միջավայրի բարելավումից:

Ինչ վերաբերում է Չեխիայի տնտեսության զարգացման հեռանկարներին, ապա առաջիկայում տնտեսական ակտիվությունը հավանաբար բարձր և ավելի հավասարակշռված կլինա, իսկ սպառումը կփոխհատուցի ներդրումների հնարավոր նվազումը: 2005-2006 թվականներին սպասվում է 4% տնտեսական աճ: Գնաճային ճնշումները հաղթահարված են, քանի որ անուղղակի հարկերի և կարգավորվող գների աճը 2004 թվականին մեծ ազդեցություն չունեցավ գների վրա: Կրոնայի արժեքավորման, առատ բերքի, արտադրողականության աճի արդյունքում պահպանվել է գնաճի կայուն ցածր մակարդակ: 2005 թվականին գնաճի գնահատումները Չեխիայի բանկի համար տոկոսադրույքների նվազեցման քաղաքականություն վարելու ազդակ են հանդիսացել: Գնաճը (ՍԳԻ) ներկայումս 2%-ից ցածր է՝ սահմանված նպատակային միջակայքի ստորին հատվածում: Բանկային համակարգում նվազել են չաշխատող ակտիվները, ավելացել է բանկերի շահութաբերությունը:

Այժմ Չեխիայի ընդհանուր տնտեսական քաղաքականությունը կառուցվում է Եվրոմիության դրամական համակարգին՝ եվրոգոտուն միանալու մտադրությամբ (եվրոգոտում են Եվրոմիության 15 երկրներից 12-ը), ինչը ենթադրում է Մաստրիխտի չափանիշների ապահովում, որը, ըստ գնահատումների, գնաճի վրա էական ազդեցություն չի ունենա. պետք է ներդաշնակեցվեն գյուղատնտեսության ոլորտում վարվող քաղաքականությունը և հարկային համակարգը, իսկ հիմնական խնդիրները կապվելու են բյուջեի պակասուրդի կրճատման հետ: Մինչև Չեխիայում եվրոյի ներդրումը՝ կրոնան պետք է երկու տարի անընդմեջ կիրառի ERM II փոխարժեքային մեխանիզմը: Դա ենթադրում է երկու տարվա ընթացքում կրոնայի փոխարժեքի փաստացի մեծության պահպանում սահմանված հավասարակշռության թույլատրելի միջակայքում:

2. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1996 թվականից սկսած՝ Չեխիայի տնտեսական աճի տեմպը միջին հաշվով կազմել է շուրջ 2.1% (մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացված են Հավելված 1-ում), միաժամանակ աճել է գործազրկության մակարդակը, որը 1996 թվականի 4%-ի փոխարեն 2004 թվականին կազմել է 8.3% (ըստ նախնական տվյալների): Միջին գնաճը 1996 թվականի 8.8%-ից նվազել է և 2004 թվականին կազմել 2.8%: 2004 թվականին Չեխիայի բնակչությունը կազմել է շուրջ 10 մլն 200 հազ. մարդ, իսկ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ շուրջ 10454 ԱՄՆ դոլար: Միջին ամսական եկամուտը 1 զբաղվածի հաշվով 2003 թվականին կազմել է մոտ 700 դոլար:

Չեխական կազմակերպություններում բավականին մեծ է օտարերկրյա կապիտալի մասնակցությունը, և 1993 թվականից սկսած՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների կուտակային մեծությունը կազմում է ավելի քան 50 մլրդ դոլար կամ ՀՆԱ մոտ 50%-ը: Իսկ ընդհանուր միջին տարեկան ներդրումների կշիռը ՀՆԱ-ում 1995 թվականից հետո կազմել է մոտ 27%:

Չեխիայի տնտեսության բացվածության աստիճանը արտաքին առևտրի նկատմամբ շատ բարձր է: Ապրանքների ներմուծումը և արտահանումը կազմում են ՀՆԱ մոտ 90%-ը: Տեղադիրքից կախված՝ Չեխիայի առևտրաշրջանառությունը եվրոպական երկրների հետ մեծ նշանակություն ունի և կազմում է երկրի առևտրաշրջանառության ընդհանուր ծավալի մոտ 80%-ը: Մնացած մասը գերազանցապես բաժին է ընկնում ասիական երկրներին և Ամերիկային: Ընդ որում՝ եվրոպական երկրների հետ առևտրային հարաբերություններում, ընդհանուր առմամբ, առևտրային հաշվեկշիռը դրական է, իսկ ասիական երկրների և Ամերիկայի հետ՝ բացասական:

Չեխիայի արտահանման և ներմուծման կառուցվածքը ըստ երկրների (2003-2004 թթ.)

Երկրներ	Արտահանում		Ներմուծում	
	2003	2004	2003	2004
Եվրոպա	92.8	92.9	80.4	80.4
Եվրոմիություն 25	86.3	85.9	71.4	71.8
Եվրոմիություն 15	69.8	68.1	59.3	58.8
Ռուսաստան	1.2	1.4	4.6	4.1
Ամերիկա	3.0	2.9	4.4	4.3
ԱՄՆ	2.5	2.3	3.1	3.1
Ասիա	3.4	3.4	14.4	14.4
Չինաստան	0.5	0.4	5.2	5.2
Թայվան	0.1	0.1	1.2	0.9
Ճապոնիա	0.4	0.4	2.3	3.4
Այլ երկրներ	0.9	0.8	0.8	0.9
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0

Չեխիայի արտահանման և ներմուծման կառուցվածքը, ընդհանուր առմամբ, ըստ ապրանքատեսակների ունի հետևյալ կառուցվածքը. արտահանման 50 %-ը կազմում է մեքենաշինության արտադրանքը, 28%-ը՝ այլ պատրաստի արտադրանքը, իսկ 22 %-ը հումքային ապրանքներ են: Ներմուծման 50 %-ը միջանկյալ սպառման ապրանքներ են, մոտ 30%-ը՝ ներդրումային ապրանքները և մնացած 20%-ը՝ վերջնական սպառման արտադրանքը:


3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

Ըստ գնահատումների՝ Չեխիայի հարկաբյուջետային հատվածում առկա խնդիրները պայմանավորված են ոչ այնքան բիզնես պարբերաշրջաններով, որքան կրում են կառուցվածքային բնույթ՝ խոչընդոտելով դրամավարկային քաղաքականության սահուն իրականացումը և երկարաձգելով եվրոգոտուն միացումը:

Չեխիայում հարկաբյուջետային քաղաքականությունը պատմականորեն կարելի է բաժանել երկու հիմնական շրջանների: 1993-1998 թվականներին քաղաքականությունը պահպանողական էր և ուներ հավասարակշռված բյուջեի ապահովման և տնտեսության մեջ պետության դերի նվազեցման ուղղվածու-


թյուն: 1993 թվականին ընդունվեց սկզբունք, ըստ որի՝ պետական պարտքը ՀՆԱ նկատմամբ պետք է պահպանվեր կայուն մակարդակի վրա: Նույնիսկ պառլամենտի քննարկմանն էր ներկայացվել հավասարակշռված բյուջեի ներդրման առաջարկ, որը, սակայն, հավանության չարժանացավ: 1998 թվականից հետո քաղաքականությունը ստացավ տնտեսության մեջ պետության դերի ամրապնդման ուղղվածություն, որի արդյունքում բյուջեի պակասուրդի աճի միտում դրսևորվեց՝ ռիսկային դարձնելով տնտեսական և դրամավարկային նպատակների իրագործումը: Չնայած կառավարությունը միջնաժամկետ նպատակ էր սահմանել 1998-2002 թվականներին հավասարակշռված բյուջեի ապահովումը, ակնառու էր կառավարության կողմնորոշումը՝ տնտեսական աճ ապահովել բյուջեի պակասուրդի միջոցով: Ստեղծվեցին նաև արտաբյուջետային կազմակերպություններ, որոնք զբաղվելու էին որոշ ոլորտներում պետական ներդրումների իրականացմամբ: Դա, իր հերթին, թուլացրեց պետական ֆինանսների կենտրոնացված վերահսկողությունը:

Գրաֆիկ 1. Պետական պարտքի և բյուջեի պակասուրդ/ՀՆԱ



Չեխիայում, ինչպես և շատ անցումային երկրներում, հարկաբյուջետային փոփոխականները շատ անորոշություններ են պարունակում: Դա պայմանավորված է խոշորածավալ միանվագ գործառնությունների և քվազի-ֆիսկալ գործառնությունների իրականացմամբ, որոնք շատ դժվար է դասակարգել և ներառել բյուջեում: GFS և ESA95 մեթոդներով բյուջեի ցուցանիշների դասակարգումը հարկաբյուջետային քաղաքականության տարբեր պատկերներ է ներկայացնում:

Գրաֆիկ 2. Համախմբված բյուջեի պակասուրդը՝ ըստ ESA95 և GFS մեթոդների




Խնդիրներ են առաջացնում նաև թաքնված պարտքերը, որոնք կուտակվել են կառավարության հատվածից դուրս, բայց ունեն պետական բնույթ:

Ըստ գրաֆիկ 1-ի տվյալների՝ 1997 թվականից հետո մշտական պակասուրդ է արձանագրվել, իսկ պետական պարտքը շարունակաբար աճել է: Աճող պակասուրդի հիմնական պատճառներից մեկը նախասահմանված կամ պաշտպանված ծախսերի (սոցիալական ծախսեր, աշխատավարձ, լրավճարներ) աճող

կշիռն է ընդհանուր ծախսերում. կառավարությունը ուղղակի չի կարող կարճաժամկետ հատվածում փոփոխել իրավիճակը: Ըստ էության, եկամտային քաղաքականության ոլորտում առկա խնդիրները առավելապես ոչ թե խորը և կառուցվածքային բնույթ ունեն, այլ առնչվում են ծախսային քաղաքականությանը:

Գրաֆիկ 3. Համախմբված բյուջեի եկամուտներ/ՀՆԱ



Պակասուրդի մյուս հիմնական պատճառը մասնավորեցումից մեկանգամյա մուտքերի չնախատեսված օգտագործումն է՝ շենքային ենթակառուցվածքների և բնակելի տների կառուցման համար: 1998 թվականից շարունակաբար աճել է նաև պետական պարտքը, որը հարկաբյուջետային քաղաքականության կարևոր ցուցիչ է: Եթե այդ ցուցանիշներին գումարվեն նաև թաքնված պարտքերը, մասնավորապես՝ համախմբման ֆոնդի (Czech Consolidation Agency), ապա պարտքի մեծությունը կկազմի 35%:

Միաժամանակ, հարկաբյուջետային քաղաքականության ոլորտում 2004 թվականին ձեռք են բերվել որոշակի հաջողություններ. պետական բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ում հասցվել է 3%-ի՝ ի հաշիվ տնտեսական բարձր աճի և նոր ներդրված բյուջետային սկզբունքի, ըստ որի՝ հնարավոր է դառնում չծախսված միջոցների տեղափոխումը հաջորդ տարիներ՝ ի տարբերություն մինչ այդ կիրառված կարգի, երբ միջոցներ էին ձեռնարկվում դրանք հենց տվյալ տարում ծախսելու համար: Հարկաբյուջետային ավելի զսպող քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև մակրոտնտեսական բնույթի խնդիրներով: Ներկա տնտեսական աճը գնահատվում է պոտենցիալ մակարդակից բարձր և հարկաբյուջետային ընդլայնող ազդակները այդ պարագայում կմեծացնեն գնաճի ճնշումները, ուստի քննարկվում են նախորդ տարվա պակասուրդ/ՀՆԱ մակարդակը 2005 թվականին կայուն պահելու հնարավոր միջոցառումներ: Ըստ մասնագետների գնահատումների՝ 2005 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը հավասարակշռված կլինի, բայց Եվրոմիության երկրներում տնտեսական ակտիվության նվազումը, կրոնայի շարունակվող արժեքավորումը և զբաղվածության մակարդակի նվազումը կարող են շեղել տնտեսական աճը նախատեսված մակարդակից: Մյուս կողմից, ավելի մեծ հարկաբյուջետային ազդակը և աշխատավարձի ավելի բարձր աճը կարող են կարճաժամկետ հատվածում մեծացնել տնտեսական աճը՝ երկարաժամկետ հատվածում ներդրումների կրճատման և մրցակցության նվազման հաշվին: 2006 թվականի հարկաբյուջետային նպատակների իրականացման համար դեռևս անհրաժեշտ է մշակել լրացուցիչ միջոցառումներ:

ԱՄՀ մասնագետների գնահատումներով, եթե պահպանվեն բյուջեի պակասուրդի աճի ներկա տեմպերը, մասնավորեցման միջոցների բացակայության պայմաններում, կառավարությունը հարկադրված կլինի պարտք վերցնել, որի դեպքում 2020 թվականի պարտք/ՀՆԱ ցուցանիշը կարող է հասնել մոտ 100 %-ի: Ամեն տարի պակասուրդի կրճատման հետաձգումը կհանգեցնի լրացուցիչ ծախսերի՝ ՀՆԱ 0,3 %-ի չափով՝ հարկաբյուջետային դիրքի կայունությունը չխախտելու համար: Այս առումով անհրաժեշտ են կառուցվածքային բարեփոխումներ ծախսման հիմնական ոլորտներում:

Կենսաթոշակներ: Չեխիայի սոցիալական ապահովության համակարգը բաղկացած է հիմնական պարտադիր ապահովագրությունից և առողջության ապահովագրությունից: Թոշակների վճարումն իրականացվում է տվյալ պահին հավաքագրված միջոցների հաշվին, այսինքն՝ գործում է PAYGO համակարգը: Սոցիալական վճարների հավաքագրումը սոցիալական ապահովության տեղական մարմինների պարտականությունն է:

Աղյուսակ 1. Սոցիալական վճարների հարկման դրույքաչափերը 2004 թվականին (գնահատվող բազայի նկատմամբ, %)

	Սոցիալական ապահովագրություն	Առողջության ապահովագրություն	Պետական զբաղվածության ծրագրեր	Ընդամենը
Կազմակերպություններ	21.5	3.3	1.2	26
Վարձու աշխատողներ	6.5	1.1	0.4	8
Ինքնազբաղվածներ	28	(4.4)*	1.6	29.6 (34)
Այլ	28			28

** Կամավոր ապահովագրություն*

Տղամարդկանց և երեխա չունեցող կանանց համար կենսաթոշակային տարիք է սահմանվել 63 տարեկանը, իսկ երեխա ունեցող կանանց համար, կախված երեխաների թվից՝ 59 - 62 տարեկանը:

Կենսաթոշակային համակարգում բարեփոխումների իրականացումը ենթադրում է առկա պարտադիր սոցիալական ապահովագրության PAYGO համակարգի պահպանում և, միաժամանակ, լրացուցիչ կամավոր ապահովագրության համակարգի ներդրում, որը պետք է ապահովագրության համակարգի անբաժանելի մասը կազմի: Որպես աշխատուժի շուկայի բարեփոխումների մի մաս, անհրաժեշտ են բարեփոխումներ զբաղվածության նպաստների հատկացման ոլորտում, որպեսզի խթաններ ստեղծվեն աշխատելու համար, խնայվեն բյուջեի միջոցները:

4. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև ներկայացված են Չեխիայի բանկային համակարգի ընդհանուր վիճակը բնութագրող աղյուսակները:

Աղյուսակ 2. Բանկերի ամփոփ ցուցանիշները 2004 թվականի վերջի դրությամբ

Ցուցանիշներ	Բացարձակ ցուցանիշով (մլրդ կրոնա)	ՀՆԱ նկատմամբ կշռով (%)
Գործող բանկերի թիվը՝ 35	-	-
Ընդհանուր ակտիվներ	2642.6	96
Վարկային ներդրումներ	1010.3	37
Ընդհանուր կապիտալ	281.1	10
Ռեզիդենտների դեպոզիտներ	1616.4	59
Ոչ ռեզիդենտների դեպոզիտներ	34.5	1
Օտարերկրյա բանկերի կշիռը բանկային համակարգում		

Աղյուսակ 3. Բանկերի կառուցվածքը՝ըստ սեփականության ձևի (31.03.2005 թ. դրությամբ)

Տարեթիվ	Բանկեր	Տեղական բանկեր				Օտարերկրյա բանկեր			Լիցենզիա չունեցող բանկեր
	ընդամենը	ընդամենը	պետական բանկեր	մասնավոր բանկեր	իշխանությունների կողմնակից բանկեր	ընդամենը	օտարերկրյա բանկեր	օտարերկրյա բանկերի մասնաճյուղեր	
31.12.2004	35	9	2	7	0	26	17	9	30
31.03.2005	35	9	2	7	0	26	16	10	31

** Լիցենզիա չունեցող բանկերը այն բանկերն են, որոնք լուծարման գործընթացում են կամ դադարեցնում են գործունեությունը, միավորվում են այլ բանկերի հետ կամ փակված բանկեր են, բայց պետռեգիստրի գրանցումից դեռևս չեն հանվել:*

Աղյուսակ 4. Բանկային համակարգի ակտիվների և պասիվների կառուցվածքը (31.03.2005 թ. դրությամբ)
(2005 թվականի մարտի 31-ի դրությամբ լիցենզիա ունեցող բանկեր)

Ցուցանիշներ	Բանկեր					
	ընդամենը	խոշոր	միջին	փոքր	օտարերկրյա բանկերի մասնաճյուղեր	շինարարական կոոպերատիվ բանկեր
Ակտիվներ	100.00	61.76	16.45	1.61	8.10	12.09
այդ թվում՝						
իրացվելի ակտիվներ	100.00	63.55	11.46	1.76	6.69	16.54
բանկերում դեպոզիտներ	100.00	44.06	22.99	2.68	21.22	9.05
վարկեր (համախառն)	100.00	57.78	23.90	2.08	7.98	8.26
կորպորատիվ արժեթղթեր	100.00	81.77	6.10	0.55	0.34	11.24
Պասիվներ	100.00	61.76	16.45	1.61	8.10	12.09
այդ թվում՝						
հաճախորդների դեպոզիտներ	100.00	65.16	11.25	1.77	4.96	16.86
բանկերի դեպոզիտներ	100.00	41.00	25.14	0.25	32.99	0.62
Չեխիայի բանկից ներգրաված միջոցներ	100.00	100.00	0.00	0.00	0.00	0.00
բաժնետիրական կապիտալ	100.00	63.08	25.39	4.63	0.58	6.32
պահուստային միջոցներ	100.00	63.04	26.08	1.81	0.89	8.17

Աղյուսակ 5. Բանկային համակարգի շահութաբերությունը և գործունեության արդյունավետությունը
(31.03.2005 թ. դրությամբ լիցենզիա ունեցող բանկեր)

	31.12. 2002	31.12. 2004	31.12. 2004	31.03. 2005
Բանկային գործունեությունից շահույթ/ակտիվների միջին մեծություն (%)	3.71	3.62	3.96	3.98
Զուտ շահույթ/ակտիվների միջին մեծություն (%)	1.24	1.21	1.26	1.76
Զուտ շահույթ/կապիտալ (%)	27.41	23.80	23.35	32.14
Տոկոսային եկամուտներ/ տոկոսաբեր ակտիվներ (%)	4.88	3.92	3.77	4.12
Տոկոսային ծախսեր/տոկոսաբեր պարտավորություններ (%)	2.80	1.88	1.64	1.75
Տոկոսադրույքների սպրեդ	2.08	2.04	2.13	2.37
Բանկային համակարգի աշխատողների թիվ	39493	39004	38160	38011

5. ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Դրամավարկային քաղաքականության ***հիմնական գործիքը երկշաբաթյա ռեպո համաձայնագրերն են (1.75%):*** Նվազագույն ծավալը 300 մլն չեխական կրոնա է, որը կազմում է 1 մլն եվրո: Դրան գերազանցող գումարը պետք է անպայման բաժանվի 100 մլն-ի: Կնքվում են նաև ավելի կարճ ժամկետով ռեպո համաձայնագրեր՝ կախված իրացվելիության ծավալներից: Առկա է նաև եռամսյա ռեպո համաձայնագրերի կնքման հնարավորություն, որոնք, սակայն, ազդակներ չեն հաղորդում շուկային, քանի որ դրանց եկամտաբերությունը սահմանում է ոչ թե Չեխիայի բանկը, այլ որպես ցուցանիշ է ընդունվում փողի շուկայում այդ պահին գործող տոկոսադրույքը:

Դրամավարկային քաղաքականության ***ճշգրտման մեխանիզմներն են՝ արժութային գործառնությունները և արժեթղթերի առք ու վաճառքը:*** Այս գործիքները հազվադեպ են կիրառվում՝ հիմնականում իրացվելիության կտրուկ տատանումների արդյունքում տոկոսադրույքները հարթելու նպատակով:

Ավտոմատ կամ ***մշտական հնարավորության գործիքներն են՝ օվերնայթ ավանդները (0.75) և ռեպոների տեսքով՝ օվերնայթ վարկավորումը (2.75%)***: Յուրաքանչյուրի համար նվազագույն ծավալը կազմում է 10 մլն կրոնա (մոտ 333 հազ. եվրո):

Պարտադիր պահուստավորումը գանձվում է մինչև 2 տարի ժամկետով ավանդների գումարից՝ 2%-ի չափով: 2001 թվականից Չեխիայի բանկը տոկոսներ է վճարում պահուստավորված գումարների դիմաց, որը սահմանվում է երկշաբաթյա ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքին հավասար:

Չեխիայի բանկի գործիքակազմը ներդաշնակեցված է Եվրոպական ԿԲ գործիքակազմին:

